



Հայաստան

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ

Ը. ՏԱՐԻ 1969 ՀՈՍՏԻՍԻՆԵՐ ԹԻՒ 10

digitised by E.A.R.

**باکین**  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد ارتين كارنيك فزانجيان

•

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

•

**Բ Ա Գ Ի Ն**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՆ ԱՐԹԵԿՍՏԻ

ՎԱՐՈՋ ԽՄԲԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ԽՄԲԱԳԻՐ  
 Գ. ՄԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆԴԱՄՆԵՐ  
 Ե. ԳԵՂԱՐԳ  
 Ց. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ  
 Ն. ՊԱՐԹԵԻՆԵԱՆ  
 Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԵՆ  
 † ՆԳ. ՊՕՑԱՆԵԱՆ

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

- Ս. ՍԱՀԱԿԵԱՆ
- Ա. ՆՈՒՐԵԱՆ
- Պ. ՍՆԱՊԵԱՆ
- Կ. ՓՕԼԱՏԵԱՆ
- Թ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
- Ն. ՊԱՐԹԵԻՆԵԱՆ
- Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Հ. Ե. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
 ԶԱԽԱՐԵԱՆ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻԵՆ
- Ա. ԿՈՒԶՆԵՑՈՎ
- .....
- ՄՇԱԿՈՒԹԵԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրաբանի հասցե  
**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban  
 Հեռաձայնի թիվ 296898

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Հ. ՅԱՐԻ, ԹԻԻ 10

ՀՈՆԵՄԲԵՐ 1969

ԴԵՄՈՒԹ

ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

### Ն Ա Մ Ա Կ Ե Ր Կ Ի Ն Ք Է Ն

Երկնից Արժայութիւն, 6 Օգոստոս 1969

Սիրելի խմբագրութիւն «Ռազմի» ամսագրի,  
Գէյրուք

#### ՓՈՒՍԱՆ ՎՐԻՊԱԿԻ

Անցեալները, քանի որ զրոյց-զրոյց բարեկամներ հաւաքուած էինք «Ողիմպոս» ամբարտաւանի դարաստափին վրայ:

Մէկ մ'ալ, դիմացի ծառուղիի ծայրէն երեւցաւ թէքէեանը, Գոսլէրին հետ թեւանցուկ, դերձակի լափառ (ժըզիւռա) ժը վիզը անցուցած:

Միջանկեալ պէտք է յայտնեմ, թէ Գոսլէր բարեկամս, իր ջերթըւածները թէքէեանի թարգմանութեամբ ըմբռնեալ կարենայու համար, բաւական հայրէն սորված է, եւ անբաժան է մեր հաւաքոյթներէն: Լըջօրէն կը մտածենք զինքը «հայասերներու միութեան» նախագահ ընտրել սառլ: Հապա՞. այստեղ ալ հայասերներ ունինք հիմա... Աստուած վերցրնիս բարի ընէ...

- Տղամբ, ա՛յս կողմ նայեցէ՛ք, վարպետը արհեստը փոխեր է,- վըս-  
փըսաց մէկը:

- Տաղաշափահան նոր գործի՞ք մը, արդեօք, - յարեց ուրիշ մը:

Կը սխալիք, - միջամտեց Արշամ Տատրեան, - շատ պարզ է, Գահեր-  
թէ կիսազրագէտ զարմիկ մը ունէր, արհեստով դերձակ, սրուն վրայ կը  
սաղազցնէր՝ «խորին յարգանքով» էրեն ձօնուած բոլոր անպէտք գերբերը.  
անպայման անոր ժառանգութեան տիրացած է...

Երբ երկու բանաստեղծները բարձրացան մեր մօտ եւ մեր միահա-  
մուռ հրաււրին վրայ տեղ գրուեցին մեր սեղանին շուրջ,

- Խե՛ր ըլլա՛յ, վա՛րպետ, - հետաքրքրուեցաւ մեզմէ մէկը, ակնար-  
կելով չափառին:

- Ասիկա Ռսկեանը չափելու համար է, - յայտարարեց Թէքէեան,  
չափառը երկու ծայրերէն վար քաշելով փոխնիփոխ ու ուշքերը շարունակու-  
թեամբ վրաս յտած:

- Բայց, վա՛րպետ, չե՛մ հասկնար, - քրթմնջեցի շուարած:

- Գրած չէի՞ր նամակներէդ մէկուն մէջ, թէ այտեղ առիթ չեմ  
փոխցնէր բարեկամներս իսկ չստիչու...

- Օ՛, հասկցա՛յ, վա՛րպետ, - բացառնչեցի, - ասիկա մե՛ծ պա-  
տիւ է ինձի համար... պէտք է դիտնաք սակայն, որ այդ նամակները  
շարուած են Միլերկրականի երկու տարբեր ասփերուն վրայ, տարբեր ժա-  
մանակներու մէջ եւ տարբեր գրաշարներու ձեռքով. ո՞վ դիտէ որ մէկը ին-  
չիփելու տեղ խփեր է փիւռ, եւ «չախկը»ը եղեր է «չափել»...

- «Զայդ տպադրական սխալներ են, զոր յաճախ կը պատահին», -  
օղնութեան հասու Արբաշամ Այվազեանը:

- Դո՛ւն էիք պահա... - Փշաց Թէքէեան, վերջին բառը երկդիմի  
կերպով շեշտելով, ինչպէս պիտի արտասանէր Սօսեաց Անտառի Գեղունի  
վերջին տղը:

- Դո՛ւն եւ Արբայ...

- Սա վերջին նամակին սկիզբի «ընդ միմեամբք էլանելով»-ն ալ  
տպագրական սխալ էր գուցէ... - սպրդեցուց մէկը թիկունքէս, հեգնական  
շեշտով մը ձայնին մէջ...

Ընդհատ ետ դարձայ, նորայր Բիւզանդացին էր, որուն մուտքը չէինք  
նշմարած:

- Ո՛ւ, գերյարգելի՛ վարդա... , ներողութի՛ւն, յարգելի՛ պարոն  
Բիւզանդացի, ասիկա ընդօրինակութեամբ սխալ է, - ստիպուեցայ խոստո-  
վանել, թէ մը շեղանքով ընդօրինակչիս հաշուոյն... անմիջապէս յետոյ,  
սակայն, փորձելով չբժեղել տգնիւ ընդօրինակչիս, յարեցի:

- Գիտէք հարկաւ, յարգելի՛ պարոն Բիւզանդացի, ժողովրդային ա-  
սացուածքը, որ կ'ըսէ. «Սէքը կոյր կ'ըլլայ»: Երկնառաջ նամակներս ընդօ-  
րինակող անշահախնդիր երկրայինն ալ, յայտնի է, որ զբարբրը շատ կը  
սիրէ, առանց դայն խորապէս ճանչնալու ատեն ունեցած ըլլալու...

- Ձէ՛ր կրնար Փրանսերէն à qui mieux mieux-ին համապատասխան  
ճիշդ հայերէնը փնտռել իմ Փրանսա-հայ բառարանիս մէջ, որմէ հարիւ-  
րաւոր օրինակներ սպառեցան յնդիպտոս:

- Կարծեմ իր օրինակը տարինը առաջ իր ուսանող զաւակը հետը  
Փրանսա տարած է... եղեր: Ամէն պարագայի, - շարունակեցի, - վստահ  
եմ, որ ձեզմէ զատ ոչ ոք չէ նկատած այդ սխալը: Արդէն ամբողջ Յզիպ-

տոսի մէջ, ուր «ընդօրինակուած» են այդ նամակները, մէկ հատիկ դրո-  
բարազէտ կայ, Գ. Կ., ան ալ քանքարաթաղոյցին մէկն է... եւ հանեցէք  
նկատի ունենալ, որ «ՅԱՆԱՐԻՐ»-ի սարսափելի Բ. Թ.ն անգամ չանդրո-  
զարձաւ, ապա թէ ոչ, մինչեւ հիմա առնուազն կէս երկվեցեակ քիւրմ աւ  
քերին թխած պիտի ըլլար՝ զմիւսեամբ բլանկով-ին եւ ընդ միւսեամբ ե-  
լանկով-ին տարբերութիւնը մեզի սորվեցնելու համար :

– Ասիկա ինչի կը նմանի զիտէ՞ք, – դարձեալ մէջ ինկաւ Արլամ  
Տատրեանը, – կը յիշէք անշուշտ, պարոն Թէքէեան, մեր քաղաքը թաղա-  
կան Գասպար աղա մը կար, որ ըստ իս ըսելու տեղ ընդ իս կ'ըսէր :

– Սրբազան հայր, ընդ իս, այս ժամկոչին ամսականը թիչ մը աւել-  
ցընելու է, – կ'ըսէր բարութեամբ :

– Այո՛, Գասպար աղա, ընդ իս իրուունք ունիք, – կը պատասխա-  
նէր սմեղուկ եպիսկոպոսը, յասնի ժողովոյ, ի մեծ գուարճութիւն մը  
նացեալ ժողովականներուն :

«Ընդ իս»-ը անբաժան մնաց խեղճ մարդուն անունէն մինչեւ վերջ,  
ա՛յն աստիճան, որ, երբ Գասպար աղան մեռաւ, իր բարեկամներէն Թա-  
ղական խորհուրդի ատենապետ Գրիգոր Պինտարեանը, իր դամբանականին  
մէջ, յուշումէն շուարած կամ շուարումէն յուզուած, աղաղակեց .

– Ինչո՞ւ, ինչո՞ւ ըրիք այս բանը, սիրելի՛ Գասպար աղա, ընդ իս,  
պէտք չէ՞ր, պէտք չէ՞ր, որ ընէիք այս բանը...

ՏԱԳՆԱՊԱԼԻ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Այդ միջոցին յանկարծ հայերէն խօսքի փշուրներ սկսան լսելի ըլ-  
լալ Ամբրոսարանի վերնատունէն, որ երկնահայերու նախընտրած հաւա-  
քավայրն է, Փարիզի սրճարաններուն վերի սրահներուն պէս :

Ռօսքի փշուրները հետզհետէ վերածուեցան աղմկուս վիճարանութեան :  
Կ'իմացուէին կցկուտը նախադասութիւններ :

Հետաքրքրուած՝ ելանք մեր տեղիւրէն, մեր ոսքերու մատներուն  
վրայ կոխելով բարձրացանք վերնատան աստիճաններէն ու կանչ առինք  
պահ մը սրահի մուտքին :

Թափով առաջ կ'երթար վիճարանութիւնը, մինչ կապոյտ խորագրով  
ու զարդազներով միջակ մեծութեամբ թերթի կտրօն մը կ'անցնէր ձեռքէ  
ձեռք .

- Մինք օրինապահ երկնաքաղաքացիներ ենք...
- Մենք Յիսուսէն զատ ուրիշ Աստուած չենք ճանչնար...
- Ի՞նչ կ'ուզեն մեզմէ...
- Ո՞վ իրենց իրուունք տուաւ, որ միջամտեն մեր դործերուն...
- Ձե՞ն բաւեր անկող խառնակիչներուն պատճառաւ մեր ենթարկուած  
աղէտները...
- Ինչպէ՞ս կը յանդգնին ուրանալ տասնեւօթը դարու մեր սուրբ  
հասարակը...
- Ինչո՞ւ մեր աստանդական հոգիներուն ապաստան չնորհած երկնից  
արքայութեան ներքին դործերուն միջամտի կ'ըլլան...
- Ուրեքնալիք չունինք...
- Հիմա օտարները ի՞նչ պիտի մտածեն մեր մասին...
- Իսկ իրենց կանգնած պատկերին երկրպագել մերժողներուն «վա-

տուժիւնն՝ քաղերագրելու սա նաբուսողոտնորազայել արարքին ի՛նչ ա- նուն պէտք է տալ, - ըսաւ մէկը, թերթը ուշադրութեամբ աչքէ անցընելէ ետք:

- Ատիկա մեր հրեմնի անկող հարեւաններուն «տիմիւէ սէօյտիւ»-ին մէկ նոր տպագրութիւնն է, - պատասխանեց քովինը:

- Ասկէ՛ մեր վերջին հայրենիքէն ալ պիտի արտաքսուինք...

- Մինք դարերով գիտակցարար ծով արին տուննք այս մեր ներկայ երանութեան արժանանալու համար...

- Ըսէ՛ իշարար, - ընդմիջեց մէկը՝ ամբարիշտ մը, որ ո՛վ դիտէ ի՛նչ աստանայութեամբ ներս սպրդած էր Արքայութենէն:

Այլէն ձախէն բարձրացան բողբոջի, եւ, ո՛վ սարսափ, նահւ հաւա- նութեան մրմունջներ...

Վերջապէս մտահոգ կերպարանքով անծանօթ երկնահայ մը թաւ սեղանի մը վրայ, լուսթիւն խնդրեց, ու սկսաւ համոզներ շեշտով ու շար- ժումներով հետեւեալ ճառը.

- Սիրելի հայրենակիցներ, երկնաքաղաքացիներ, ամէն գիտով պէտք է ճար մը գտնենք վերահաս աղէտի մը առաջը առնելու համար: Եթէ բա- նը հոն հասնի, որ այստեղէն ալ վտարուինք, ալ երթալիք տեղ չի մնար մեզի... մեր նախկին դրախտավայր հայրենիքը, զոր մեր անկող հարե- ւանները դժոխքի վերածած են, ալ մեզ չ'ընդունիր. մեր զլէտէ փաստ-նե- րուն վրայ նշանակուած է՝ վերադարձը անբաղձալի. այս կողմի դժոխքը մեր նոյն անբաղձալի նախկին հարեւաններուն յատկացուած է ամբողջու- վին. քաւարանը կաթոյիկներուն վերապահուած է...

- Ի՞նչ է խնդիրը, կարելի՞ է իմանալ, - խօսք առաւ մեզմէ մէկը, ընդմիջելով սրտցաւ ճառասօսը:

- Ի հարկէ, յա՛ւ որ դուք ալ եկաք. ներս մտէք, տեղ դրանցէք: Ա- հա՛ խնդիրը, - բացատրեց նոյնինքն յուզուած ճառասօսը, - Պէ՛տք է մէջ նոր կրօնք մը հիմնել եւ մեր խելօք դաւիթները եւ արդէն «ամեհի բանակ մը կազմեր»՝ ընական է անոր տարածման համար:

- Ի՛նչ կրօնք է աս, - հարցուցին մեզմէ ոմանք:

- Միրսոպալատութիւն:

- Միրսոք (cirage) ի՛նչ է, որ պաշտամունքի ատարկայ դառնայ, - դարձացաւ մեր բարեկամ Պոտլէրը:

- Միրսո՛ք չէ, Միրսո՛ք է, վարպէ՛տ, - ըսաւ սեղանին վրայի մարդը:

- Միրսո՛միրսո՛ նոյն բանն է, - պատասխանեց Պոտլէր, - զիչ մը արտաքին փայլ, ետին՝ ուլինչ կամ կաշի...

- Բայց երբ յայտնի եղաւ, որ նոր աստուածացուն գրչեղբայր մըն է, Պոտլէր փափաքեցաւ անպայման յաւելեալ ծանօթութիւններ ունենալ իր մասին:

Գոհացում տալու համար իրեն, մէկը արտասանեց համբաւաւոր էփսպամբքը.

- Մե՛նք խաղաղ էիմք մեր լեռները պէս...

- Ես այդ «էփսպարոմթ»-ին մաման ճանչցած եմ, - յայտարարեց մէկը:

- Ո՞ւր:

- Լեւոն Մանուէլեանի «Ընտիր երկեր»-ուն մէջ: Կ'ուզէի՞ք ծանօթա- նալ: Խնդրե՛մ: Ու արտասանեց.

ՓՈԹՈՐԻԿԻ ԺԱՄԻՆ

Յուզուած կռակներ գալիս են զարնում  
Փրփրած ափի հսկայ լեռներին -  
Լեռները հըպարտ, լեռները կանգուն  
Նայում են հանդարտ մըրկուած ծովին:

Երկինքը գոռում, շանքեր է թափում  
Հսկայ լեռների սուր գագաթներին -  
Լեռները հըպարտ, լեռները կանգուն  
Նայում են հանդարտ գոռոզ փաթորկին:

Բայց խոր անրի մէջ, լեռների կրծքում,  
Ահարկու մի ձայն է թնդում ուժգին -  
Այն լեռներն են այնպէս ծիծաղում,  
Մաղրում ապստամբ թշնամիներին:

- Եթէ ուուերէն վիտնայիբ, շատ հաւանաբար «տատիկին» ալ հան-  
դիպած կ'ըլլայիբ, - Թաքնասեց բազմութեան մէջէն խորհրդաւոր ձայն  
մը, որ Օլահանի ձայնը կը յիշեցնէր...

Ուրիշ մը ոգեց կանչիբ, Ափի'ուֆ, կանչիբ, զամ... անդիմադրելի  
քերթուածը:

Երրորդ մը, վերջապէս, կարգաց Փրանսահայութեան ձօնուած «չըն-  
չին հաւեր»-ուն եւ «արծիւ»-ին ոտանաւորը.

Երանի՛ր՝ ձեզ, չեցիմ հաւեր՝

Ձեզ մամբայ կայ, արծիւիմ՝ ոչ,  
զոր, իբրև հրկնաֆրանսացի, մեծ հետաքրքրութեամբ լսեց «Յուի Մա-  
դիկներ»-ուն հեղինակը:

Բայց երբ բացատրեցինք իրեն, թէ ո՛վ է այդ «չնչին հաւեր»-էն մին  
եւ ինչը կ'ըլլայ «արծիւ»-ին եւ թէ ինչպէս տարիներով մին թէ միւրը՝  
«արծիւ»-ն ու «չնչին հաւ»-ը զիրար կանչէր են անյոյս աաղերով եւ աղի  
արցունք քամեր մեր՝ միամիտներու աչքերէն, կարճ՝ մեր զահչէն տա-  
րեր...

- Mes chers amis! (Սիրելի բարեկամներ), - ըսաւ Պոտլէր ամենայն  
լըջութեամբ, - այդ մասին դարեր առաջ մեր մեծ քննադատ-բանաստեղծը  
արտայայտուած է, un sot trouve toujours un plus sot qui l'admire!  
այսինքն՝ sot մը, ինչպէս պիտի ըսէինք հայերէն...

- Ախմախ, - յուշեց սրածիտին մէկը...

- Այո՛, շնորհակալ եմ, ուրեմն, ախմախ մը միշտ կը գտնէ իբժէ  
աւելի ախմախ մը որ դինքը... ատիբէ կ'ընէ:

- Բայց, վարպէ՛տ, - դիտել տուաւ զրոց-բրոցը, - Պուալոյի ժամա-  
նակակից իւրաքանչիւր ախմախ մէկ հոտ միայն իբժէ աւելի ախմախ կըր-  
նար գտնել, մինչդեռ մեր պարայային ախմախներու «ամեհի բաճակ մը»  
կայ մէջտեղ...

- Ատիկա բացատրելի է, - պատասխանեց Պոտլէր, - տասնրեօթնե-  
րորդ դարէն ի վեր մարդկութիւնը անած է, սա մասնայատկութեամբ սա-  
կայն, որ, մինչ մարդկութեան անը տեղի ունեցած է par progression  
arithmétique (Թուարանական յտախտուութեամբ), ախմախները բազ-

մացած էն par progression géométrique (Լրկրայափական յառաջատուութեամբ)...

- Շտ'ա ճիշդ վկայ՝ ձոնիկ Հոլիտէյի Լրկրպագունները, - պոռաց Նարդունին:

- Վկայ՝ Պիթըրզներով խելադարուածները, - հրկրորդեց Համաստեղ:

Ապա խոր, մտահոգիչ լուծիւն տիրեց:

Այդ միջոցին, կասկածամիտ հայրենակից մը փակաւ օձիքէս:

- Ոստքը մեր մէջ, - ըսաւ կիսամայն, - այս դրութեան տակի սկըզբնատուութիւնը ճիշդ քու ընդօրինակչիդ սկզբնատուութեան կը համապատասխանեն. չի՞ կրնար ըլլալ որ...

- Ո՞, ո՞չ, - ընդմիջեցի զինքը, - իրաւ է, իմ աղնիւ ընդօրինակչիս անցեալին կարգ մը յիմարութիւններ ըրած է - նախ, իր երիտասարդութեան, երիտասարդական տարիքի համապատասխան յիմարութիւններէն ոչ մէկը չընելու յիմարութիւնը. ապա, Սփիւնֆի մէջ հայերէն բանաստեղծութիւններ գրելու աններխի յիմարութիւնը, բայց քաններդդ դարու կէսին եւ աւարտին մէջտեղը նոր կրօնք մը հիմնելու շարք եղջերաւոր յիմարութիւն մը գործելու ընդունակ մէկը չէ ան...

Ու յանկարծ, այդ անդունական լուծիւն մէջ, անձկազին ձայն մը բարձրացաւ վերնատան մէկ անկիւնէն:

- Տղա՛ք, ժա՛գը լուր ունի՞ իր Յիսուսի պահին սպաննացող վերասուս այս վտանգէն:

- Հա՛, ժա՛գը, ժա՛գը, - արձազանգեցին չորս կողմէ:

- Բայց, ժա՛գը թո՛չ կրնայ ընել միս-մինակը:

- Ինչպէս թէ միս-մինակը... որչափ որ գիտենք, եթէ Պէյրութի մէջ կայ միբրտապաշտներու զամենի բախակ մը, կայ նաեւ ժողիտներու հոգեւոր ուրի՛շ բանակ մը...

- Նոր ժա՛գըրի՞ (\*) մը պիտի յարուցանենք:

- Ինչո՞ւ չէ. արդէն պատիկ վարժութիւն մը ըրին 1958-ին... Իրենք ալ թող խելօք կենան ու չխոռվեն մեր՝ արգարներուս տրդար հանգիտը:

- Բայց միէս Սիմոնը, - տա՛նք անունը վերջապէս, - տալուրիկեան ամբողջ զինապահասը տրամադրած պիտի ըլլայ միբրտապաշտներուն. ժողիտները ինչո՞վ պիտի զէմ երթան՝ փետատներով, տէգերով, թուրերով, խանչարներով, խոփերով ու խաչերկաթներով զինուած ճամնահի բանակին:

- Բայց, բառերով:

- Ինչպէս թէ քարերով, պարտատիկներով պիտի զինենք զիրենք:

- Յս քարերով չրսի, եղբայր, այլ՝ բառերով, բա՛ռե՛րով...

- Հասկցա՛յ, մէյ մէկ հոմանիշներու Գայական բառարան պիտի տանք իւրաքանչիւրին ձեռքը... - ըսաւ հեզմութեամբ ընդդիմախօսը:

- Ատոր ալ պէտք չկայ: Ժագին քիչ շատ երկարաշունչ որեւէ մէկ քերթուածին բովանդակած բառերուն մէկ տարափով կարելի է ամենպէրարդիական ուղղակատքերու տորմիդ մը՝ քամոցներու մարտկոցի (batterie de passoires) մը վերածել... ո՞ւր կը մնան Տալուրիկի խոփերն ու խաչերկաթները...

(\*) ԺԳ. զարան Ֆրանսայի մէջ պայքած գիւլացիական սպաննաբարիւն, զոր սզմուակմները խելգեցին յետիմ դամառաբնադ:



Եղ. Տարօնեանը, որ մինչ այդ անխօս նստած էր կողքին եւ Հաւանաբար լսած՝ կասկածամիտ Հայրենակցին եւ իմ միջեւ փոխանակուած խօսքերը, դանդաղ ոտքի ելաւ, տրտում ու լուրջ:

— Միբե՛լ, արդա՛ր բարեկամներ, — ըսաւ, — ամբողջ այս իրարանցումը աւելորդ է եւ ձեր մտավախութիւնը անտեղի: Ես շատ լաւ կը ճանչնամ այն անձը, որուն քիչ առաջ այստեղ քովէս մէկը վերագրեց ի միջի այլոց՝ եղբերաւոր յիմարտօքիւմ: Ընդհակառակն, անիկա յոյժ իմաստուն, ինչպիսի, աշխատասէր, զործունեայ, աչքը բայց, վարպետորդի, զործնական, կարճ՝ մօրը մանածը ծախածին մէկն է: Ձեզի այնքան մտահոգութիւն պատճառող մերժապաշտութիւնը, վստահ եմ, առեւտրական նպատակներով սարքուած անվիաս ազանդ մըն է պարզապէս, ի պէտս այնպիսի ընթացիկներու...: Թէ այդ կերպով շարաթաթերթը կ'իջնէ հոլիվուդեան մտավի մէկէզիմնիլու մակարդակին, ասիկա տնօրէն-խմբագրապետին դիտնալիք բանն է...: Միակ ցաւալի կէտը այն է, թերեւ, որ՝ դուն մե՛ծ ես՝ դուն անհո՛ւն ես, դուն սա՛նկ ես, դուն նա՛նկ ես, դուն Աստուած ես (\*): Եւ նման անպատասխանատու փառարանա-շոշորդարանութիւններով՝ բնականօրէն մարդուն իսկ կարելի է Հաւասարակշռութիւնը կորսնցնել տալ, ալ ո՛րք կը մնայ... արդէն... Ձէ՛վա՛լը տղայ...:

— Արդ, — եզրակացուց, — երթեցուք խողազութեամբ եւ Տէր եղիցի ընդ...:

— Ո՛չ, — դռաց յանկարծ Օշական, ընդոստ ոտքի ցատկելով իր սթոնէն, — շուրջ քառորդ դարու պատմութիւն ունի այդ չեմպեթերինչուպաշտութիւնը: Ես ասեմին «Նայիրի»-ի մէջ ըօի իմ կտրծիքս այդ սիրած-մերժածներու մասին («Նայիրի» ամսագիր, Փետրուար 1946, էջ՝ 281): Տեսնողները տեսան, թէ ի՛նչ անորակելի խաչակրութիւն մըն էր, որ շրթալազբծուեցաւ ինծի դէմ... Այլ ի՛նչ վիճուք, ի՛նչ բողոքներ, ժողովներ, հանրագրութիւններ... Ամբաստանեցին զիս ոչ նուազ քան դաւաճանութեամբ... խաչը պիտի հանէին զիս, բայց չկրցան, որովհետեւ բոլոր խաչերը իրենց խնամի խաչազողները տարած էին... Ի վերջոյ զիրենք միութարեւու Համար «Նայիրի»-ն (\*\*): Եր, որ խաչեց զիս ի պատկերի (pat effigie) : Եւ որովհետեւ յաջողեցան ի խաչ հանել զիս, այս անգամ փորձեցին դուրս հանել վանքէն, ուր աշխատանքի խուց մը տրամադրուած էր ինծի: Հիմա, միջանկեալ, սիրելի Ոսկեան չորպաճի, քու այդ ընդօրինակիչը ալ — ամէն համեմատութիւն պահած — մտաւարապէս նման պայմաններու մէջ կը գտնուի: Եթէ այստեղ անցած-դարձածը եղածին պէս տեղ հասցնես ի՛ր միջոցաւ, զուցէ փորձեն Հիմակ ալ զինքը փողոց նետել իր... վանքէն:

«Կրնայ ըլլալ, որ մեզի՝ երկնահայերուս Համար իրական վտանգ մը չներկայացնէ մտանանչուած շարժումը կամ խլրտումը, բայց ո՛րք կը մընայ իրաւ զբականութեան յրջութիւնը, իրաւ դրագէտին վարկը:

(\*) ձիչք այս բառերով հերոսին հետ քաղաքացի մտաւարակամ մը ամձուկ կը ճանչնամ, փափաճողներու պատրաստ եմ հարգողիւ իր ամուսն ու հասցէն, եթէ ինք արտօմէ...

(\*\*) «Նայիրի» ամսագիր, Ապրիլ-Մայիս 1946, էջ՝ 511:

«Ո՛չ, բարեկամներ, սո՛ւրբ բան է իրաւ բանաստեղծութիւնը. սո՛ւրբ էն իրաւ բանաստեղծները. նայեցէ՛ք Մեծարեւոյցի, Քէզէհանի լուսապսակներուն. հարցուցէ՛ք Մահարիին, որ ահա՛ այս վայրկեանիս մուտք կը գործէ մեր վերնատունէն ներս :

«Մենք պէտք չէ թոյլ տանք, որ բանաստեղծութիւնը վերածուի տօնավաճառի խոտանի, բանաստեղծը՝ լարախաղացի :

«Իրտեցէ՛ք Հիմա լուսանկարներու սա անվերջ շարանը», (այս ըսելով, Օշական գրպանէն դուրս քաշեց տրցակ մը կտրօններ) :

Միրաժը՝ իր տատիկի հետ... - ա՛խ այս մէկը, որ մինչև հիւսիսային եւ հարաւային Ամերիկաները կը շրջադաշտի - Միրաժը՝ իր բալիկների հետ, Միրաժը՝ իր Ժուլիէտայի հետ, Միրաժը՝ իր Իզոլտայի հետ, Միրաժը՝ իր Տէղտէմոնայի հետ, Միրաժը՝ իր Ղէրեմեմիչի հետ... :

Ապա՛ Միրաժը՝ Քիլիմանճարօ լերան Փոն-ի վրայ. կարծես՝ Քիլիմանճարօն իր տնտերձն ըլլար, կամ տէտէտէն զալըն սեփական կալուածքը, ինչպէս՝ Արիսողոմ աղային ազարակը... :

Յետոյ, այդ Միրաժը՝ մեր Փրանսացի բարեկամին ենթադրածին պէս այստեղ մը չէ. ընդհակառակն, օրինակ մը միայն : Գեռ վերջերս միացեալ մոզական բառը շահագործելով իր մէկ սուսնուորին մէջ :

... Միացեալ տեսնել հազը հայկական  
ամբողջ կուսակցութեան մը շարքերը ձիացուց...  
- Շարքերը արդէն միացած չէին որ, - հարց տուաւ սնկնդիրներէն մին :

- Ես միացուց չըսի, այլ՝ ձիացուց, այսինքն՝ ձիերու վերածեց եւ իր անձնական կրկնային ոէքլամակառքին լծեց... :

- Ատիկա շատ ճիշդ է, - խօսք առաւ նոր ժամանած բանաստեղծ Արսէն Երկաթը, - սակէ քանի մը տարի առաջ, երբ ես տակաւին Բուրգերու երկրին մէջ էի, կուսակցական ակումբի մը մէջ հայրենի ականաւոր հիւրի՞ք մը ի պատիւ արուած ընդունելութեան ընթացքին, անխուսափելի, վաղուց գղումի համ տալ սկսած «Հայաստանի ազնիկները»-ու արտասանութենէն ետք, կուսակցութեան օրկանի ծերունազարդ խմբադրասպետը, եզրափակելով աւուր պատշաճի իր սրիչը, ականաւոր հիւրէն պահանջեց յանուն ներկայ Հասարակութեան - շես պիտեք, ո՞վ իրեն այդ տեսակ ապսպրանք տուած էր... - ականաւոր Հայրենի հիւրէն պահանջեց յանուն ներկայ Հասարակութեան, որ ... Միրաժը արտասահման զրկուի, սփիւռքահայութիւնը Հայացնելու համար... :

»

Այստեղ քանի մը անհրաժեշտ ճշդումներ :  
Ճշդում տալին. - Տարածայնութեամբ, թէ՛ երբ բանաստեղծ Արսէն Երկաթը կը ներկայանայ Արքայութեան շքամուտքին, իր արծակի եւ տաղաչափեալ բանաստեղծութեանց քառասուն եւ երկու հատորներով ծոցուոր տողարկը ուսին, Ղանապան Պետրոս Խաչատրը, որ միանգամայն պատուազաւ մատենադարանագետ է ի միջի այլոց, զինք կ'ընդունի տեսակ մը չկածութեամբ, առարկելով՝ թէ իր արամազրուիտան տակ բաւարար տեղ

չունի այդ ամէնուն համար եւ, իբր թէ, մեղքը ըսողին վզին, բանաստեղծը յանձն կ'անէ անոնց բովանդակութիւնը ժամանակի ընթացքին խտացընել մէկ մտմունտոց պրակի մը մէջ...

Ճշգում երկրորդ... Բնական է՝ Արսէնը խօսք չառաւ եւ այդպէս չոր ու ցամաք շարտայտուեցաւ, այլ ծոցազբզանէն թուղթ մը հանեց ու կարդաց խմբագրապետին ճառը զեղեցիկ արձակ բանաստեղծութեան մը վերածուած, որով կը պահանջուէր, որ բոլոր ժամանակներու խոշորագոյն պոետը արտասահման առաջուի իբր նորելուկ իմն Կաղանդ Պապուկ, հազած ծիբանի Վինգուշ ու Վանջիւնը եւ արծաթով դօտեպնդուած, կանդնած՝ բիրիզիայ ռազմակառքի մը վրայ, որուն լծուած պիտի ըլլային հայրենի անտառէն փախած եօթը զոյգ թաւիշաշուի եղծիկներ, շալակին՝ արաքսափքննայ ջրուտիներու հեղանկուն ոստերէն հիւսուած օդորէ կթոցի մը մէջ հայրենասիրութեան թունդ գինիով լեցուն պարփիւռէ հաստափոք սափոր մը... եւայն, եւայն... բայց ես, հասկնալի ըլլալու մտահոգութեամբ եւ յանուն իրապաշտութեան, ծերունագործ խմբագրապետին սրելը վերածեցի իբր հաւանական ընաչքին:

Ինչպէս վերջացաւ վերնատուն միթիւնկը, Պիտի չհաւատաք, եթէ նկարագրեմ: Հազիւ Օշականը հեւասպառ ինկած էր իր աթոռին, իսթերիք քրքիւ մը պայթեցաւ ընդարձակ սրահին մէկ անկիւնէն, երկվայրկեանի մէջ վարակեց ամբողջ հասարակութիւնը ու վերածուեցաւ հոմերական անզպելի, անվերջանալի, ահարկու, միահամուռ քահաճի մը...

Կը խնդայինք բոլորս: Կը խնդայինք մեր անտեղի մտափախութեան եւ անձկութեան վրայ: Կը խնդայինք լուսնի նուաճման նախօրեակին Միջերկրականի մէկ սփին վրայ անհատի պաշտամունքը վերահաստատելու փորձերուն եւ այդ փորձերուն գտած անբարեկէլ յաղորդութեան վրայ:

Կը խնդայինք անպայման բանի մը՝ թէկուզ ոսկի հորթի մը կամ ոսկեզօծ դորտի մը առջեւ ծունկի դալու մարդկային անբուժելի ունակութեան վրայ:

Կը խնդայինք, վերջապէս, բոլոր ժամանակներու Երևանի քաղաքում ստեղծուած անհասկացանքները... բայց... բայց դառն բան մը կարծես ունէր մեր խնդուքը. ու նկատեցինք, որ կային շինարարներ... Ձեր խնդար 15-ի հունձքը, չէր խնդար ՅՄ-ի հունձքը. բնաւ, բայց բնաւ չէր խնդար Վեդի Հանճարներու սրտայոյզ հեղինակուհին...

Ձօհրապ փորձեց կացութիւնը փրկել, առաջարկելով իր հաշտոյն ամբրոսի ընդհանուր սպասարկութիւն մը զբերանները անուշցնելու համար, բայց ոչ ոք սիրտ ըրաւ ընդառաջելու իր հրաւերին. ցրուեցանք փոքրիկ խումբերով, ոմանք շարունակելով խնդալ տարօրինակ, տարօրինակ խնդուքով մը...

Երկնատաք ողջոյններով՝  
Կ. Ա. ՈՍԿԵԱՆ  
Վասն Հարապատ ընդօրինակութեան՝  
Ս. Ս.

**Թ. Գ. — Ընդօրինակողին կողմէ՝**

**Ս. (Սիրելի) Հայաստանի իմաստուն ղեկավարներ,**

Ասկէ մօտաւորապէս երկու տասնամեակ առաջ, խաչազոզներու հայրենիք Սամաստէն ճամբայ ելաւ մի ոմն հրաշագործ Աւագ, Միջին Արեւելքի կարգ մը հայարնակ քաղաքներուն մէջ հրաշքներ գործելու համար թէ ի՛նչ հրաշքներ տեղի ունեցան մեր քաղաքին մէջ, երբ ան շնորհ բերաւ մեր կողմերը, ահա՛ւասիկ։

Հրաշագործը հիւրասիրելու մենաշնորհը անշահախնդրօրէն իրենց սեփականացուցած մեծաւարուստ հիւանդներուն բնակարաններուն դարպասներն ու պատուհանները խորտակուեցան. ցաւազարներ կամ անդամալոյծներ, զորս ազգականներ փորձեցին անոնց պարտէզներէն ներս անցընել, ցանկապատերուն երկաթէ սուրայր ձողերուն վրայ ցցահան մնացին. մանուկներ եւ ծերունիներ ամբոխներու կողմէ ոտնակոխ եղան, հետաքրքիրներ շորթորդ յարկի պատշգամներէն կամ զանգակատան տշտարակէն վար իյնալով ջարդուփշուր եղան, այն տղջային հաստատութիւնները՝ եկեղեցի կամ դպրոց, որոնց իր շնորհաբեր այցելութիւնը տալ բարեհաճեցաւ հրաշագործը, մէյ մէկ Անի քաղաքներու վերածուեցան, եւայլն, եւայլն։

Արդ, Ս. (Սիրելի) Հայաստանի իմաստուն ղեկավարներ, ցուցանէ առակա, թէ ինչե՞ր կրնան ընել ամբոխները խելագարուած, եթէ երբեք, Աստուած մի արասցէ, փորձուիք, ծերունազարդ խմբագրապետին կողմին հետեւնք տալով, բաց թողուլ զարծիք—ին պոչը, սփիւռքահայութեան հայացման հրաշքին ի խնդիր...

Ողջ լեբուք, Ս. (Սիրելի) Հայաստանի իմաստուն ղեկավարներ։

Ս. Ս.



### Հ Ա Ի Ա Տ Ա Ր Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հաւատարմութի՛ւն,  
Քու սահմաններուդ դժուար է հասնիլ ու ձեռք երկարել,  
Նայմիսկ՛ ապարդիւն,  
Որովհետեւ՝ տե՛ս, նամբաներն ամէն անիլ են, անե՛լ:

Տարիներ ամբողջ՝  
Քիչեցիր վրաս ու սալին վրայ պողպատ ջիզերուդ  
Անգուլ ու անխոնջ՝  
Կռանցիր զիս ու ես շիմացայ ետք հարուածներուդ:

Անունիդ համար՝  
Սեփական կեանքէս առիք այն ինչ որ չեն տար ռիշներ,  
Առիք տառ առ տառ  
Ու ձգեցիր զիս անապատի մէջ, յաւէտ անքններ:

Այս փշուտ նամբան  
Վերջ չունի անշուշտ ու ես միշտ պիտի շալկեմ օխ ու բէն  
Եւ իմաստութեան  
Քարագներուն մէջ՝ մնամ նայն սղան - զկորուած հողէն»:

ԱՇՈՏ ՆՈՒՐԻԱՆ

ՊԵՐՍԻՔ, 1969

## ՏՈՒՆԸ

Տո՛ւնը, տուներու կեա՛նքը, տան կարօ՛ւրը...

Մուսա լեռան ստորոտին հիւղ մըն էր ու ծննդավայրս էր առաջինը: Մօտը, վիթխարի դափնիի մը շուֆին՝ մեծ պատերազմի յագնեցուցիչ հետեւանքներէն նոր ազատած հայրս, մանկութեանս վերջին շրջանին, ձեռնարկեց նոր տան մը կառուցումին, որ մեր ուրախութեան, ազօրքին, տենդին հետ բարձրացաւ քար առ քար, բայց իր աւարտին չհասած. ամբարն օր մը, մարդասպան ցեղին ուրուականը կրկին երեցաւ ետն ու ամէնքս մէկ, ամէն ինչ կէս ձգած ու հո՛ն ձգած՝ հեռացանք անյիշատակ ժամանակներէ ի վեր մեզի բնծայուած աշխարհի այդ չքնաղ ափէն:

Պահ մը կանց առինք հանդիպակաց ծովափին եւ Պասիֆի մայրիններուն տակ ձեւացուցինք տաղաւար մը, որ, մերձաւորներու կարօտին, հասնաչանքներուն ու արցունքին ընդմէջէն այրող ու վայրկեան առ վայրկեան սաստկացող վերք մը եղաւ ինծի ծննդավայր հիւզս եւ երկբորդ կսկիծ մը՝ անոր կողքին սկսած ու անուարտ մնացած քարեղէն երազիս յուշը:

Տարագրութեան առաջին նաշակը առի հոն, հո՛ն քանցայ նաեւ տարագիրները հեղեղող առաջին անձե՛քը, ամանուային ու անոյասեյի ու սարսափի՛/ անձրեւը, որ ամբողջ գիշեր մը տեւեց եւ անտաղաւար բազմութեան մը վերածելէ ետք մեզ, արշալոյսին համեցաւ մեղմել քափը: Այսուհանդերձ, նոյն գիշերէն ծագած ուրիշ յիշատակ մը աւելի մեծ ուժգնումութեամբ կը յաճախէ ինծի, կը յիշեմ անձրեւին հետ սկսած ու անձրեւին չափ տարեբային տարը, անձրեւի աւերներուն դէմ իր հագին գուարք պահող ժողովուրդին հաւաքական ու սրտարուիս ու հոգեբո՛ւյս պարբ, որուն կշռոյթը դեռ կը տեւէ հոգիիս:

Քառասներորդ օրը նորէն քամբայ կլանք եւ մէկ-երկու օր ու գիշեր ետք, խոնուեցանք Այնճարի փռշիւն ու փաշերուն մէջ: Զարչարանքին նոր տեսակը սկսաւ աւագամբիկին դէմ չարչարուող վրանի մը տակ:

Վրա՛նը:

Երրորդ տունս:

Սառնաշունչ քամին ամբողջ աշնան հոն ոռնաց: Ապա՛ փափկաքե՛ւ ծիւնը եկաւ եւ սկսաւ փափկօրէն կիտարկել իր գուազբութիւնը: Վրանին

հետ մեր վրայ փրօզ այդ սպիտակ փորձանքէն յագեցած էինք արդէն, երբ մտանք կիսաւարտ տունէ մը ներս: Պատերազմ էր այն ատեն, տարագիրներու սեւ օրը առաւել սեւցնող սեւ ժամանակ, որ երկարեցաւ ու երկարեց շարքը սեւաբախտ տարիներուն: Թշուառութիւնը հետզհետէ գիւղաւորուեցաւ ու բշտառութեան հետ ներս խուժեցին խառնեքաւ մուկեր, բազմամբոխ մուկ, լու, աջիլ: Ցուրտին, տապին, գրկանքին, քաղցին, արնածարաւ այդ արարածներուն ու արիւնը դալկացնող ճահճատենդին բոլորովին կեր չդարձած՝ փոխադրուեցայ յարիշ աշխարհ, ամբողջապէս պարիսպներով պաշտպանուած տուն մը, վանք մը այս անգամ, որ չբուժեց զիս սակայն, աւելի իր նկարագիրը տուաւ ինծի, մահ՛յլը, եւ օր մըն ալ, տարակոյսներու բնօրն մը տակ՝ սոսի քայքայեցի, քափառեցայ տարի մը անտուն եւ ի վերջոյ Պուրն Համուտի մէջ ընտրեցի տուն մը, մերկ՝ ինծի պէս, հիւժձած՝ ինչպէս ըլլալու էր այդ նամբաներէն անցած մէկու մը դառնուելով զէմքը, մահ՛յլ՝ վանքին մէջ կազմուած իմ ակնարկիս պէս:

Երանգավայր հիւզ, անճրեւտեար տաղաւար, չարչարուած վրան, կիսաւարտ տուն, վանական խաւ: Մանկութիւն, պատանակութիւն, առաջին երիտասարդութիւն: Կարուտի սուգ, ամէնօրեայ կեկիծ, անորոշութեան մզմանմիջ: Տուներու շարք, տուներու վարք, կեանքի շղթայ:

Տարբեր էր սակայն վեցերորդ տունը:

Պուրն Համուտի մայր պոզոսային ազմկայտոյզ մէկ կէտին վրայ կը բարձրանար եւ հետո էր ուրիշ տուներու խնդուսէն: Առաջին օրէն սիրեցի իր անկախութիւնը:

Քանակընդհան չէի հասած, երբ առաջին անգամ սոսի դրի սեմին: Երեսնամեակիս երկու ընկերներու հետ օդի խմեցի հոն, տասը տարին քաւախեցաւ գնաց, բայց դեռ հոն կը գիշերէի, ինք դեռ նայնը կը մնար, իր սկզբնական նկարագրով՝ փռշեքաւաւ, անշուք, անկարգ, անխոսակամ:

Բայց կը զիշէի այդ տունը, դեռ կը յիշեմ գիւնը, երախտագիտութեամբ:

Ջեղումներս հոն խմբագրած եմ, տենդերս հոն արձանագրած, դառնութիւններս հոն օրագրած, ումէն ինչ հոն, հո՛ն, յարուցիչ գորութիւններով եռեւեփող այդ պատիկ հնոցին մէջ: Կեանքը որքա՛ն զգալի էր հոն, ընդարձակ, այլազան, բեղմնաւոր:

Երբեմն կենսայորդ ազաֆ յեղափոխական թունդ երգ մը թնդացնելէն կ'անցնէին վարէն եւ երգուած հերոսը վերստին կ'արձանանար երեսունիս մէջ:

Ու զիշերին սիրախոց հագի մը իր միմուսնով կը յայտնուէր ու վերանորոգուած վերջով մը կը լուսցնէի գիշերը:

Մօտեցողք գիւնով մը կ'ըլլար մերթ ու գիւնովնալու պատճառներէս մէկուն յուզումով դարձեալ կ'ազգուէր հոգիս:

Ատեն-ատեն մութը կը ծաւալէր ու կը ճուլէր սմէն ինչ եւ նոյն պահուն ներքին լոյսի մը ծագումը կը զգայի յանկարծ ու կը ցնորէի:

Կեանքը որքա՛ն զգալի էր այդ պատիկ տան մէջ:

Իմ երեք մուրթիւններուս յազարդ ստու՛ղ տուն, գրամուրթեան, կնամուրթեան, խաղամուրթեան կենսառու ու կորստաբեր կայք, կեանքս լեցնող երեք մակընթացութիւններուն հանդիսատես, ջիւղերս պարզած երեք

տեղատուութիւններում վկայարան, տում երկունքի, տում հրայրքի, տում մեղքի, տա՛ւն...

Նրբ պատահէր դուրս ելլէի ու նոր տեղերու եպատակութեան մէջ մտած՝ թափառումներս երկար տուէին, արքա՛ն կը կարօտես իրեն, ի՞նչ փութկոտութեամբ կը վերադառնայի իր մտերմութեան: Ամէնքը չարս պատ էր, բայց աշխարհի մէջ զիս ամբողջացնող միակ տարրն էր ինք:

Բայց, երբեմն, իր ծոցին մէջ, ծայրագոյն ազատութեան եւ ծայրագոյն երջանկութեան պահերուս, յանկարծ ուրիշ կարօտ մը կը խռովէր էութիւնս: Նորէն տաքագիրի ապրումներ կ'ալեկոծէին սիրտս, հիւրի մը պէս կը զգայի ինքզինքս յայնժամ եւ ուրիշ տան մը երազը կը ձուակեցարելեր մէջս, ուրի՛շ, ուրի՛շ տան մը...

Քանի մը օր առաջ տրուեցաւ ինծի այդ բախտը:

Ամբիլիասի մէջ է ու հրաշալի է այս տունը, ընդարձակ, շարձարձիբ, արեւոզազ:

Դիմացը ծով է՝ ու ծովակամ գեղեցկութիւն:

Քիչ մը անցին լեռ է՝ ու կամայ վեհափառութիւն:

Նարքեզներու պարտէզի մը մէջ է՝ ու բուրամտանեղձ հով մը կ'արբեցնէ արիւնս օրումս բոլոր պահերուն:

Քանի մը օր առաջ տրուեցաւ ինծի այս բախտը, եւ, տարօրինակ, բարբառովի նոր անհանգստութիւն մը սկսած է վարել զիս: Շարունակ ներս կը մտնեմ, ման կու գամ անկիւնները, կ'որոնեմ չեմ գիտեր ինչ, նորէն գուրս կ'ելլեմ, կը նայիմ շուրջս, բայց աչքերս հետզհետէ խաղաղարար ոչինչ կը գտնեն փոխանցելու ինծի: Ե՛ս պիտի բնակիմ հոս, Ե՛ս՝ կը հարցնեմ անբնական եւ կարծես աւելի շօշափելիօրէն կը զգամ զիս վրդովող գորութիւնները, որոնք, ինձմէ առաջ ու ամէնքը մէկ ներս խուժած են եւ հագիս հանած ինծի դէմ, յիմա՛ր այս հոգին, ինձմէ անկախ գործող այս անհասկնալին, որ երբեք թոյլ չտուաւ գորութեամբ ապրիլ ինծի շնորհքւած պարգեւներուն վայելիլը: Դրամ ունեցած օրերուս՝ բոլոր ազգատները դէմս հանց միշտ, կուշտ եղած ժամերուս՝ բոլոր անօրինակ շուրջս խռունց, առողջ եղած շրջանիս՝ հիւանդներուն հառաչանքներով խլացուց զիս, յիմա՛ր այս հոգին, որ հիմա բերած ու լեցուցած է նոր տունս անտուններու ստուերներով: Յնցատիպատ, արեւահար, ցրտահար մանուկներ, որքեր ու ճակատագրէն զարնուած մարդեր կը տեսնեմ կարծես բոլոր անկիւններուն ու խաղաղութեան վաղեմի անբնականակութիւնս կը սաստկանայ ժամ առ ժամ:

Համ, միւս կայքերուն, գաղթակայաններուն, վրաններուն, վաճառարանուն ու երիտասարդութիւնս հիւրընկալած անշուք տնակիս մէջ ստուերները այսօր յայտնա չէին: Այն տարիներուն՝ առաւելագոյն չափով Ե՛ս էի ու սեփական վերքերուս հետ էի, գրաւ չունեցած օրերուս՝ Ե՛ս, անօրինակ եղած պահերուս՝ Ե՛ս, հիւանդ եղած շրջաններուս՝ նորէն Ե՛ս: Այլ բախտի փայլուն շրջաններուն ինչո՛ւ յանկարծ կը լուծուի Ե՛ս եւ Ե՛ս՝ վէ արդեօք այս մշտնջենական թումարումին հեղինակը, Ե՛ս՝ շագաթած է այս կարը իմ մէջ, Ե՛ս՝ լարած է այս դարը, Ե՛քք պիտի ջնջուի դարը, կարծրանայ կարը, կարծրանա՛ւ, կարծրութեամբ նայիմ աշխարհին, մարդոց: Մուրացիկ մը ինչո՛ւ այս աստիճան պիտի յուզէր զիս, կտոր մը դրամի համար անձրեւէն ու արեւէն ծծուած մանուկը իմ արիւնէ՛ս սերած, որ կեպարամէք



օրերով չի հեռանար մտլես, եզրայրական ի՞նչ կապ ունիմ գործազուրկ մարդու հետ, որ անոր տառապանքով կը վարակես գիս, յիմա՛ր հագի:

Նոր տունը՝ բարձրադիր, բարբարոս, ծովահայեաց, անհրապար, ընդարձակ, վանդակահան:

Ուշ գիշերին անգամ մը եւս ռաֆի ելայ ու դարձեալ բննեցի սենեակները, անցայ պատշգամէ պատշգամ, լուսնի լոյսով դիտեցի համայնապատկերը, առի բայրը պարտէզներուն, լսեցի ծովում մրմունջը, արեւելեամ անկիւնէն երկարօրէն սեւեռեցի ակնարկս լեռներու գիշերային քանաստեղծութեան վրայ, բայց արիւնս անհաշտ մնաց չճնազ այս գեղեցկութիւններուն միջեւ բարձրացած երազային տան հետ:

Իմ երազած տունս այս չէր: Ասիկա սարսափելի է: Սարսափելի է դեռ ասոր վաղը: Ամէն անկիւն նոր առարկայ մը պիտի տեղաւորուի վազը, վազը պիտի մտնել առարկաներու իշխանութեան տակ, իմ արձակ, վայրագ, անկարգ անձիս փռփռէն՝ փտեկանկատ, նրբին, ճեւապաշտ ֆազեներ մը պիտի սկսի անիլ մէջս, որ ահարկու է նորէն, այս չէր իմ երազած տունս, այն միւսն էր անպայման, որ այս վայրկեանիմ անպարփակ պայծառութեամբ մը կը կտուցուի ակնարկիս դիմաց, հայրենական տունը, վեհափառ լեռան շաւիճի, երկի՛ր, քո՛ւ հողիդ վրայ, քո՛ւ մէկ խորշիդ, հան՛ լուսաւորչի աստղիմ տակ որեւէ տեղ, հայրենական հովան գիմաց, ջուրերուդ երգով ողորդ, մանուկներու գուարթ ճիչներով յորդ:

Մեր սիրտը համ է, «լեռներս՛ւմ»՝ սիտի ըսէր լեռնականի մը արիւնէն բխած ու իր արիւնէն փախչիլ չկրցող գրագէտ մը, հան՛ լեռներուն վրայ տուն մը, ուրկէ ուրիշ մը չհամարձակէր այլեւս դուրս ընել գիտ, չստիպուէի ինճիմէս նետել դուրս, գիս կէսի վերածող տուն մը չըլլար, ազատութիւնը շնչէր հան, խաղաղութիւնը ծաւալէր, վաղեմական հողիմ վրայ ծնուցիչ ոգիներով բնակուած վերջնական տուն մը ըլլար, ներքին նուագարաններս շնչաւորող աշխատակի՛ց տուն մը...

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ



**ԵՂԻԱՐԴ  
ՊՅԱՆԻԱՆ**

Ուշիկ երեք տարի առաջ, այս ամսին (28) հոշին յանձնեցինք ձեր տարաբախ ընկերք, Եղուարդ Պոյանին, որուն զգալցը յիշատակինք ձեռուս է Ս. Մեքրազի հետ ունեցած Փոլստանի զիմացի զբոյցը:

Փոլստանի այս զբոյցը Պոյանինին կապուած հետազոտարկան ուրիշ պատմութիւն չը եւս ունի:

1902-ի ամբան վերջին օրերու, իր զբաղակցեցեցուն նամակներ գրեց, Մեքրազ Մալուոյի Ծննդեան 1800-ամեակին ճճագինք-ի նրազրած բացատրիկին հաշուին: Ընդէ այդ շրջանին, Փոլստան հրակէր ստացած էր Հայաստանին ու միկնկլու պատրաստութիւններ կը տեսներ: Անտարկէլով այդ հրակէրին, մեզի ուղղած իր նամակին մէջ Պոյանին կը գրէր.

- Ինչ լաւ կ'ըլլայ, եթէ Փոլստան ինքերգիու մը ունենայ հետ Ս. Մեքրազի հետ ու վերազարթին գրութիւնը փութացնէ մեզի: Այս բանս հազարէլ իրեն:

Հազարէլցի: Փոլստան խանդավառուեցաւ զազափարով: Գնաց: Վերադարձին՝ բերաւ զբոյցին սասնին տարրերակը: Ճի'տրտարեմ ու կը շրկէ՛մ, ըսաւ ու սեռադարեց Մարտէլլ: Երբ կրկին Փաթիկ եկաւ, շալք բանք եղաւ ճաստստեց ուրախութեամբ, բայց միտին զարմացանք, դառնացանք, երբ շուրջ մէկս մը ետք հասաւ Պոյանինին Յ Նոյնբեր թուակները:

- Կ. Փոլստան խոստացած էր ինքերգիու մը Ս. Մեքրազի հետ: Ի՞նչ է, հիմա հասած պիտի ըլլար: Ձկայ: Քու զրկածներդ հասած ու շարուցանք:

Հասաւ Ս. Մեքրազի նուիրուած ճճագինք-ի բացատրիկը, բայց զուր փնտնեցինք Լեքերգիուս անոր մէջ:

Անուանի զբուցադիրքը, իր հին նոթերուն օգտագործուածով, կոտուածին փոխարէն նոր մը կատուցած է սուստիկ, որ այս անգամ մեզի կը հասնի Եղուարդ Պոյանինին զալցը յիշատակով զաղբարացած յուզական նոր երանգով մը...

Կ. ՓՈԼՍԵԱՆ

Զ Ր Ո Յ Ց

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ՀԵՏ



ՄԻՈՒԱՐԻ ՊՕՏԱՅԱՆԻ  
ԲԱՂՅՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

- Կա՛նգ առ, վարո՛րդ. թո՛ւ սուր,  
վայրկեան մը իջնեմ կառքե՛զ, մօտե՛ն  
տեսնեմ, շօշափե՛մ, շնչե՛մ: Կա՛նգ առ,  
վարո՛րդ, ընկե՛ր, հայրենակե՛ց, ինչ-  
պէս կ'ուզես այնպէ՛ս կոչեմ զե՛զ, բայց  
վայրկեան մը կեցի՛ր: Ինչո՞ւ կը սուրաս  
այդպէս արագ. չե՞ս տեսներ, թէ ի՛նչ է  
զրուած ցուցատախտակին վրայ՝  
Աշտարակ...:

Ա՛խ, վարո՛րդ, կեցի՛ր կ'ըսեմ զե-  
ղի վայրկեան մը, չե՞ս գիտեր, թէ այս-  
տեղ՝

Միծեռնակը բայ՞ կը շիմէ...

Նրխասարդ կառավարը զթի՛ն սա-  
կէն կը ժպտի, բայց չի դանդաղեցնե՛ր  
իր գնացքը:

- Բնաշինութեան եղանակը չէ՛, - կը  
մըմնջէ, նոյն քաղցրանուշ ժպիտով:

Ապա, կը հրաւիրէ զես, որ գիտեմ  
տեսարանը:

Աշտարակը այնպէս է, ինչպէս կ'ե-  
րեակայէ ամէն հայ. այգիներու զըմ-  
բուխտէ ծով մը, սակեշող կրակներով  
բնդելուզուած: Երկնասլաց բարտիները  
զինուորական բարեւի են կեցած ճամ-  
բուն երկու կողմերը:

Գեղեցիկ է ամէն ինչ, ըսելիք չկայ, ամէն ինչ կատարեալ:

Կը պակասի միայն ծիծեռնակը. իսկ առանց ծիծեռնակի Աշտարակը...

Այն ատեն, զիս ինչո՞ւ չի հասկնար այս անպայման խելացի ու ա՛յնքան համակրելի հայրորդին: Ինչո՞ւ չի հասկընար, թէ պանդուխտ հայուն համար, որ առաջին անգամ ոտք կը դնէ այս առասպելական հողին վրայ, Աշտարակը հասարակ դիւզ մը չէ՛, քաղաք մը չէ՛...: Տուներ, քարեր, այգի ու ծառ չէ՛ միայն: Աշտարակը, ամէն բանէ առաջ, երկ մըն է:

Ծառ հին ու շատ տխուր երգ մը: - Ինչի՞ եղանակն է հաստ, - կը հարցնեմ դարձեալ, կողորդս սեղմուած: - Այգեկութի՛ք, հասունացած մըր-դերի՛ք...

- Այո՛, - կ'ըսէ լուսթեանս դիմաց, - մրդերի հասունութեան... աշուն է, տեսէ՛ք, սսկէ՛ աշուն...

- Այո՛, - կ'ըսեմ իւրովի, - ճի՛շտ է, աշուն է, Հայաստանի սսկէ աշունը...

Օրն է Կիրակի, տոն թարգմանչաց: Ու մենք հասած ենք արդէն Օշական:

- Այսքան մօտ են եղբր իրարու, - կը բողբոջան չեմ զարմացած, ձգելով որ ճամբորդները լջնեն կառքէն, զիրար հրձակելով:

Նստած տեղէս կը դիտեմ շրջակայքը, ո՛րն խառնիճազանճ բազմութիւնը մանաւանդ, որ խոնուած է փոքր հրապարակին վրայ եւ ուր կանգ առած է մեր սկայ կառքը:

- Ձեզ եմ սպասում, բնկեր ջան, - կը խօսի կառավարը, ուսիս զարնելով:

- Չպատասխանեցիք վերջին հարցումն, - կը յամտեմ չձգել անոր օձիքը, - Աշտարակն ու Օշականը այսքան մօտ են ուրեմն իրարու...

- Մօտեցա՞ն... այդինքնը զանոնք միացուցին իրարու, - կ'ըսէ, ու կ'իջնէ կառքէն:

Նոյնը կ'ընեմ ես, հետեւելով անոր արագ քայլերուն, նոր հարցումներու ի խնդիր: Քայլերը յանկարծ աւելի կ'ա-

րագացնէ, զիս կը ձգէ հո՛ւ, բազմութեան մէջ եւ առանց ետին դառնալու կ'ուղղուի զէպի դիմացի միայնակ տունը, որուն սեմին զինք կը գիժաւորեն խո՛մբ մը ուրախ մանուկներ, սեւեր հագած տարիքոտ կի՛ն մը:

- Հասկնալի՛ է, - կը խօսիմ ես ինծի, մեղմացած, - ի՛ հարկէ, ի՛ հարկէ...

Նուազ հասկնալի է սակայն, ի՛նչ որ տեղի կ'ունենայ Օշականի փոքր եկեղեցիին շուրջ: Արտասովոր բաղմութիւն մը խոնուած է հոն: Ասեղ ձգելիք տեղ չկայ ո՛չ եկեղեցիին մէջ, ո՛չ բակը եւ ո՛չ ալ հրապարակին վրայ:

Անկարելի է մտնել եկեղեցի, ուրկէ կը հասնին շարականի քաղցր մեղեդին, խունկի ամպանման ծուէններ:

Կը քաշուիմ անկիւն մը ու ակնարկս կը պտըտցնեմ զիս շրջապատող մարդոց վրայ:

Տարօրինակ էակներ են, անջատ խումբերու բաժնուած: Ոչ մէկը միւսին կը նմանի, ո՛չ արտաքին երեւութով, ո՛չ ալ արտասայտութեամբ: Անոնք կը խօսին զանազան ու զարմանազան լեզուներ, մէկը միւսին անհասկնալի: Ոմանք աչքերուն մէջ փայլաւ կայ, ուրիշներու՝ արցունք: Մեծամասնութեամբ դրոսեցիներ են. կան նաեւ տեղացիներ, յատկաօրէն ճանաչելի:

Սայիբու շարք մը կ'անցնի երբեմն, ճեղքելով ամբոխը: Անոնց վրայ բրդացած խաղողին բարկ հոտը կը լեցնէ մըթնոլորտը: Տարօրինակ են նաեւ եզները: Գոյնզգոյն, հպարտ, վսեմաշուք կենդանիներ: Անոնց խելացի ու խոհուն զլուխները պճնուած են որթատունկի ոստերով: Կը յատաջանան դանդաղ, համաչափ քայլերով: Գինով ոսյլապանները կը սուլեն մեղմաձայն, թոյլ տալով որ մանուկներու ուրախ խումբը մազլցին ոսյլերուն վրայ: Անոնք կ'ափեն խոշոր սղկոյցներ, կը խածնեն զանոնք խնդալով ու վար կը նետուին, հոյզերով արդէն կ'աշուն հողին վրայ ցանկելով սաթի նոր հատիկներ:

Այո՛, զարմանալի է. զարմանալի

ի՛նչ որ տեղի կ'ունենայ: Անըմբռնելի՛՜ ո՛չ մէկ ուրիշ տեղ, ո՛չ մէկ ուրիշ ժողովուրդի մէջ: Երկու, մէկը միւսէն բոլորովին տարբեր արարողութիւններ տեղի կ'ունենան հո՛ն, միաստանակ:

Մէկուն կը նախազանգ Վեներայի Հայոց կաթողիկոսը, միւսին՝ Ամենայն Հայոց քրմապետը, նորին վեհափառութիւն Արեւը:

Ու ժողովուրդը ապշած՝ կը դիտէ այդ զոյգ գիւթախաղերը:

Հոգեզմայլ աջօթք, խունկ ու շարական, հո՛ն, եկեղեցիին մէջ:

Հեթանոսական տօն, հո՛ն, շուքը: Երգ ու ծիծաղ՝ այգիներու դմբուխով մէջ: Օղբ յազեցած է պինիի բոյրերէն: Սլացիկ բարտիները կ'օրօրուին մեղմօրէն, գինով լոյսէն, բոյրերէն: Գինով են կենդանիներն անգամ: Մեծոյի եղները կանգ կ'առնեն եկեղեցիին ի տես, կը դիտեն երկնասլաց զանգակատունն ու բարձրացող խունկի ծուկները ու կը ժպտին: Իրենց պինով աչքերով կը ժպտին բազմաթեան:

Գրիստոս կը շարունակէ պատարագէ:

Մինչ փողոցներէն վտանատուրն է, վտանատուրն է որ կ'անցնի, ճեստած իր պարարտ եզան վրայ»:

Բայց ես ինչո՞ւ կեցած եմ այսպէս ապշած, շուարած: Ի՞նչ գործ ունիմ այս բոլորին հետ: Ձէ՞ որ եկած եմ ուխտի, եկած եմ Զայն տեսնելու:

- Ո՞ւր է, - կ'ըսեմ բարձրամայն, - ո՞ւր է Ան:

- Ո՞վ, - կը հարցնէ ինծի քովէս ձայն մը:

Կը դառնամ անոր կողմը: Յանկարծակիի եկած գիտ կը դիտէ:

- Ո՞ւր է, - կը կրկնեմ.

- Ո՞վ, - աչքերը խոշոր կը բանայ խեղճ մարդը:

- Ան, որ, Ան որ...

- Վեհափա՞ռը...

- Ո՛չ, Ան, որ աղբիւրն է այս բոլորին:

- Մեքոսպ Մաշտո՞ցը...

- Ո՞ւր է թաղուած:  
- Եկեղեցւոյ խորանին տակ:  
- Ինչո՞ւ...

- Ա՛, ես ի՞նչ իմանամ, - կը մրմնջէ մարդը, աչքերը վար առնելով:

Տեղացի է ուրեմն, մաքուր Հաղւած, Համակրիի գէմքով: Լուսթեկէ մը հաք, կ'ուսեցնէ.

- Աւելի լաւ չի՞ էսպէս...

- Գուցէ եւ իրաւունք ունիք, - կ'ըսեմ, շուարած, - այժմ բակք ինծի, ինչպիսի, ի՞նչպէս կրնամ տեսնել մեր մեծ սուրբը:

- Հետեւեցէք եկեղեցւոյ պատին, աջից, վերջին փոքր դուռն է:

Ձեռքով ցոյց կուտայ հետեւելիք ճամբաս, ու խորհրդաւոր ժպտով մը կ'ուսեցնէ.

- Հաւատո՞ւմ էք տակաւին սրբերին:  
- Այս մէկուն ժխայն...

- Էս անգամսն էլ զուք իրաւունք ունէք: Հարկ չեմ տեսնում ընկերանալու ձեզի, ինձ թու՞մ է, թէ կը կամենայիք առանձին մնալ նրա հետ...

- Այո՛, շնորհակալ եմ... կ'ուզեմ ըլլալ Անոր հետ, դուռն դիտի, ըսելիքներ ունիմ:

- Դո՞ւք... - ու ժպտը կը լայնայ անոր թուխ դէմքին վրայ:

- Ինչո՞ւ, կարելի չէ՞...

- Ի՞նչ չկամեցայ ասել...

- Աւելի ճիշդ է ըսել, թէ եկած եմ յուսարանութիւններ լսելու Անիէ...

- Ինչպէ՛ս ասացէք... յաջողութի՛ւն... թոյլ կտա՞ք որ սպասեմ ձեր վերադարձին... Հետաքրքիր եմ իմանալու ձեր տեսակցութեան արդիւնքը:

Ճամբայ ելած էի արդէն, բայց այս վերջին խօսքերը պատճառ եղան որ հտիս դառնամ եւ ուշի ուշով դիտեմ խօսակցին դէմքը: Միշտ նորն խորհրդաւոր ժպտը կար հոն, բայց ո՛չ անպայման հեղնական: Ո՞վ կրնար ըլլալ այս տարօրինակ մարդը: Ուղեցի հարցնել, բայց հրատարակեցայ ի վերջոյ այդ մտքէն: Գոնի որ կ'ուզէր սպասել վերադարձիս...

Շուտով հասայ փոքր դրան առջև: Սպասեցի որ հոն գանուղները դուրս ելլեն: Ետիս, ուրիշ սպասողներ չկային: Սկսայ իջնել աստիճաններէն, դուռը ետեւէս քաշելէ ետք: Բռնորովին մուտքի մէջ էր գետնափորը, փոքր խուցը: Յըստակորէն կ'երեւէր սակայն շրմաքարին շրջափծը: Լոյս մը գրուած ըլլար կարծէք յղիւած մարմարին տակ:

Երկար վայրկեաններ ետք միայս զդացի Անոր ներկայութիւնը: Մունկի եկած էի եւ անկապակից բառեր կը մըրմընջէի:

Նախ անորոշ ստուեր մը երեւցաւ: Շիրմաքարին ընդերքէն պղպղացող լոյսը հետզհետէ ծաւալեցաւ եւ երբ լսեցի առաջին բառերը, Ան կանգնած էր արդէն դիմացս, յաղթահասակ ու վսեմ: Շուտով սոքի ելայ. շրթներս հծծեցին կարծեմ.

«Այր մի՛ Մաշտոց ամառն...»

- Ի՞նչ կ'ուզես, - լսուեցաւ Անոր ներդաշնակ ու խորունկ ձայնը:

Ի՞նչպէս կրնայի ըսել, թէ ի՞նչ կ'ուզէի: Ամբողջ մարմնով կը զողայի եւ աչքերս չէի կրնար հեռացնել Անոր դէմքէն:

- Ե՛ս... - կակայեցի... - Ե՛ս... կ'ուզէի...

- Ինչո՞ւ մնացիր, ի՞նչ կ'ուզես, ըսէ՛, մի վախճար:

Ձայնը մեղմացած էր ու դէմքը կը պայծառանար հետզհետէ, կը քաղցրանար:

- Կ'ուզեմ խօսիլ հետդ, Հա՛յր, - ըսի, համարձակութիւն տաած:

- Հա՛յր...
- Վեհափա՛ռ...
- Ո՛չ, երբե՛ք:
- Սրբազա՛ն...
- Ո՛չ, դա՛րձեալ սխալ:
- Վսեմական վարդապետ:

- Վարդապետ, պարզապէ՛ս. չե՞ս գիտեր, թէ մեծ տխուր մըն է արդէն վարդապետը: Մանրակիր ոսկէ շղթայ անո՛ր՝ որուն վրէն կախուած է ան:

- Գիտե՛մ, բայց մեր օրերուն... աւա՛ղ:

- Այո՛, աւա՛ղ... ուրե՛մն:

- Վե՛հ... վարդապետ... - Ինչո՞ւ իրար կ'անցնիս, գաւակս. խօսէ՛, ըսէ՛ ըսելիքդ, առանց քաշուելու: Ի՞նչ կ'ուզես:

- Ըսի արդէն, խօսիլ հետդ, Հա՛յր: Կ'ուզեմ զգրոյց» մը ունենալ... այս վերջին տարիներուն կը փորձեմ դրական այս սեւը... մտածեցի թէ...

- Այո՛, տեղեակ եմ... աղուոր են, նորութիւն: Բայց ես ի՞նչ գործ ունիմ հո՛գ. դեմ՝ ողջերուն հետ խօսէ: Ես ի՞մ ըսելիքներս ըսած վերջացուած եմ:

- Ըի՛շդ է, ըսած ես ամէն ինչ, ամէն ինչ ըրած, վերջացուցած: Կան բաներ սակայն, գորս մեծք լաւ չենք հասկցած: Կ'ուզենք պիտեալ այն բոլորը, որ կար չու մտքիդ մէջ, չու հոգիիդ: Կ'ուզենք թափանցել գաղտնիքին:

- Ո՛չ մէկ գաղտնիք. ամէն ինչ տեղի ունեցած է այնպէս՝ ինչպէս դիտէք, շատ պարզօրէն, շատ բնականօրէն: Ձեմ գիտեր, թէ ի՞նչ գաղտնիք է փնտռածդ:

- Ի՞նչպէս դատար հայերէն գիրերը:

- Ես չգտա՞յ, անոնք կային արդէն:

- Ի՞նչպէս թէ կային... ուրե՛մն... ճի՛շդ է ուրեմն այն կարծիքը, թէ...

- Հայերէն բոլոր գիրերը կային լեզուին մէջ, զոր կը խօսէին իմ ժամանակակիցներս, լեզու, զոր խօսած էին հայերը գարեբէի վեր: Ես այդ գիրերուն միայն ձեւ տուի, զծագրեցի:

- Ի՞նչպէս, լաւ չեմ հասկնար. կամ շատ համեստ ես, Հա՛յր, եւ կամ ալ շատ գաղտնապահ:

- Բոլոր գիրերը կային, կ'ըսեմ, իբրեւ իմաստ, ի հարկէ. կային նաեւ իբրեւ հնչիւն եւ իբրեւ երաժշտութիւն:

- Հայերէն լեզուով գրուածք կա՞ր հինգերորդ դարէն առաջ:

- Ո՛չ... եթէ ո՛չ հետք մը կը մնար, այս կամ այն ձեւով: Հայերէն այբուբեն չի՞նելու փորձեր եղած էին, բայց մենք որեւէ գրութիւն չգտանք:

- Քու մտքիդ մէջ, Հա՛յր, ի՞նչպէս

ծաղկացու հայերէն գիրքը գտնելու պահպարդը:

- Ս'... երկա՛ր պատմութիւն է այդ... սիրոյ, գթութեան գործ... տառապանք, ցաւ ու արցունք... անբուն գիշերնե՛ր... խօսքը իմ ժողովուրդին գիծակին մասին է, ո՛չ թէ գերեբու գիւտին: Սիրտս բղիկ-բղիկ կ'ըլլար, երբ կը դիտէի աշխատասէ՛ր, շինարար, բնածին ուշիմութեամբ օժտուած այդ մարդիկը, բարի ու առաքինի հայ կիները, վարդի պէս աղուոր այդ աղջիկները, ու մանուշե՛րը, սեւաչուի այդ կորիւնի նմանող աղաքը, որոնք սակայն տխուր էին, ընկճւած: Կորսնացած՝ մեծ ժողովուրդի մը պատկանելու հարատւութիւնը: Յանդուգն Հայկի պատկանելը անճանաչելի ու խեղճացած բազմութեան մը վերածում: Երբ կը մտածէի, թէ կորստեան դատապարտուած են անոնք, ի վերջոյ պիտի ձուլուին՝ մեկ՝ շրջապատող հզօր կայսրութիւններուն մէջ, հայութիւնը փրկնականսպէս պիտի քննուի աշխարհի նրեանէն, վրաս խենթութիւն կուգար: Ոչ պէտք չէ՛ պատահել, մե՛ղք է, պէտք չէ՛ պատահել այդ գժբախտութիւնը, - կը սիրտս յի՛ դէմքս Տարօնի լեռներուն դարձուցած, շուրջիներէն պահելու համար արցունքներս:

«Հայաստանի գիծակը ծանր էր: Կորսնացուած էինք մեր անկախութիւնը: Ամէնէն աւելի ես՝ տեղեակ էի կացութեան. գիտեա որ սքեմ չհազած, ծառայած էի բանակին մէջ, արքունիքին: Յըստակ էր այլեւս, թէ պիտի չկարենայինք պահել հայութիւնը գէնքի ուժով: Հարկ էր մտածել ուրիշ միջոցներու մասին, տարբեր ու հզօր գէնքի մը մասին:

- Ներէ՛ ինձի... հա՛...
- Ինչո՞ւ մոռցար նորէն, ուղեցի՛ որդիս վարդապետ կույնս:
- Լա՛ւ, ներէ՛ ուրեմն, վարդապետ, որ ընդմիջեմ մտածումս: Խնդիր մը մեզ կը խոռովէ: Կ'ուզեմ իմանալ կարծիքդ այս մասին:
- Ըսէ՛ տեսնեմ, ի՞նչ է եղեր այդ, որ այդքան կը խոռովէ մեզ:

- Քրիստոնէութիւնը շտկարացո՞ւց մեր գիմադրական ուժը: Լա՛ւ ըրինք, թէ՛ դէշ Յիսուսի վարդապետութիւնը այդքան արագօրէն պետական կրօնք հռչակելով, առանց մեր շուրջը նայելու, տռա՛նց...

- Հասկցա՛յ:
- Ներէ՛ ինձի, վարդապետ, որ այս հարցումը կ'ընեմ քեզի... սուրբի մը:
- Տեղին է հարցումը եւ ունիմ անօր պատասխանը: Բայց ատկէ առաջ, բան մը ունիմ քեզիք քեզի, աղա՛ս: Ո՞րտեղ պարի ես, ո՞ւր ծնած ես:
- Կիլիկիա, Ջէյթն՝ն...
- Կը բաւէ՛. Հիմա վստահ եմ, թէ դիս յու պիտի հասկնաս: Ես ամէն բանէ առաջ հայ եմ, ծագումով դիւղացի, գիտես ի հարկէ: Մնած ու կեանքիս ամէնէն ծագիւնը շրջանը անցուցած Հայաստանի սրտին՝ Տարօնի աշխարհին մէջ: Ինձի համար հայութիւնը... քսնք սըրլութիւն սրբոց է:

- Ձերմեռանդ հաւատացեալ մը չեմ թերեւս եւ ո՛չ ալ սակայն անհաստ մը, բայց այս քու քսածներդ, հայր, հայր սուրբ, սուրբ հայր, հոգիս անհուն ուրախութեամբ կ'ողողեն:

- Այդ նպատակով շքի, համոզումս է, անկեղծ ու խորունկ համոզումս: Քրիստոնէայ չեզած հայ էի. ու թերեւս ճիշդ ատոր համար այդքան արագօրէն համոզուած քրիստոնէայ դարձայ: Իմ մասին կը խօսիմ, դուն հասկցիր հայ ժողովուրդը:

«Արդ, անհատի մը կամ հաւաքակալութեան մը յարումը նոր դադարաբարի մը հիմնուած չէ միշտ, հիմնուած չէ անպայման շահու վրայ: Անոնցմէ մէկն ու միւրը երբ կը խանդավառուին նոր տեսիլներով, հաշիւ չեն ընք: Մարդուս հոգիին մէջ անդուսպ խոյանքներ կան, դորս կարելի չէ որեւէ հակակրօն ենթադրել: Լեռներն ի վար թաւալող Հեղեղներ են անոնք, կրնա՞ս կասեցնել: Յետոյ, իմ սերունդս կը գտնուէր կատարուած իրողութեան մը առջեւ: Ուստի կ'ընէ իսկ չէինք կրնար ես դառնալ:

Ամբողջ դար մը անցած էր մեր վրայէն եւ Ս. Սահակ, օրհնեալ ըլլայ իր յիշատակը, կը բազմէր ամուր հաստատուած եւ անկործանելի դահլի մը վրայ: Մարդիկ կրնան, իրենց կեանքին ընթացքին ետ զարձ կատարել, ժողովուրդները՝ ոչ: Մարդկային քաղաքակրթութեան ճանապարհին վրայ անցեալին կարելի չէ վերադառնալ. ինչ կայան որ անցած էք, անցած էք վերջնականապէս: Քսանթրոք դարու մարդիկը կրնա՞ք տասնութրդին վերադառնալ. չէք կրնաք, նոյնիսկ տասնութներորդին: Ուստի, հարկադրուած էինք ընթանալ մեր ժողովուրդին առջեւ քաջուած նոր ճանապարհով:

«Բայով այն հարցումիդ, թէ քրիստոնէութիւնը տկարացուց մեր դիմադրական ուժը, ո՛չ ոք կրնայ ժխտել այդ: Նոր կրօնը տկարացուց մեր ազգը, կրկար տասնամեակներ մեզ երկուքի բաժնելով:

«Քաղաքականապէս աղիտակ էղաւ մանաւանդ ա՛յն պարագան, որ մեր թըշնամութիւնը աւելի խորացուց ա՛յն ժողովուրդին հետ, որուն բարի դրացնութեան ամէնէն աւելի պէտք ունէինք, պարտիկները: Եթէ այս վերջիններն ալ մեզի հետ քրիստոնեայ դարձած ըլլային, ինքիւր բոլորովին կը փոխուէր»:

- Իայց կար քրիստոնեայ Իրևանդիոնը:

- Հեթանոս պարսիկը աւելի վստահելի էր, քան քրիստոնեայ խորախ բիւզանդիոնը: Պարսիկները չքանդեցին Ս. Էջմիածինը, բայց Իրևանդիոնն էր, որ կործանեց հազար ու մէկ կիկեցիներով Անին... Ինչ եւ իցէ, վերադառնանք մեր խնդրին, չմխրճուինք «բիւզանդական» վէճերու մէջ: Հոս, կ'ուզեմ յարտարութիւն մըն ալ ընել, լաւ մտիկ ըրէ՛ք զաւակս: Ա՛ն՝ որ լաւ կը ճանչնայ մեր ժողովուրդը, չի կրնար չընդունիլ, թէ մենք չէինք կրնար քրիստոնեայ լըլլալ: Հայ ժողովուրդը քրիստոնէական ոգին կը կրէր քրիստոնէութենէն առաջ: Կը հասկնա՞ս զիս:

- Այո՛, հա՛յր, վստահ եմ, թէ ճիշդ է ըսածդ: Բուն գիրքերու գիտին անցնելէ առաջ, այստեղ կ'ուզեմ հաստատուած մը ընել եւ քու բերնէդ լսել, թէ արդեօք ճիշդ տեսած ենք, լիովին լմբոնած ենք գիտաւորութիւնդ: Աստուածաշունչի եւ այլ կրօնական մատեններու հայերէնի խարզմանելու անհրաժեշտութիւնը քեզ մղեց, հա՛յր, որ հայկական այրութեան ստեղծես, բայց դուն կը նայէիր աւելի հետուն: Աւելի ընդարձակ էր ծրարիրդ. ազգակիքումն աշխատանքի մը ձեռնարկեցիր: Կ'ուզէիր ժողովուրդը խորսիւել հաստատուն եռոտանի մը վրայ, - Կալայնացիներ այն բարձր կրօնքը, որ քրիստոնէութիւնն էր եւ այս պիտի ըլլար այդ եռոտանիին առաջին ոտքը: Երկրորդը պիտի կայանար ծաղկեալ եւ ճոխ դրականութիւն մը ստեղծել: Ո՛չ թէ միայն խարզմանութիւն, այլ և ստեղծագործութիւն: Երրորդ ոտքը պիտի ըլլար ամէնէն կարեւորը. - քաղաքական եւ աշխարհաքրական պատճառներով բաժանա՞ծան եղած հայ ժողովուրդին ընծայել այն առաջնակարգ միաւորը, որ Կալայնայի վաստմութիւն կը կոչուի: Ընդարձակ, դժուարին եւ երկարաշունչ ծրարք մը, զոր դուն եւ քու ընտրած որակաւոր ու ստղանդաւոր աշակերտներդ զլուսն հասնեցիք հրաշալի կերպով: Ա՛յնքան հրաշալի, որ եռոտանին ստեղծէն շեքերաց, ո՛չ Սասանեան եւ ո՛չ ալ իրարու յանդուրդող ուրիշ ահեղ փոթորիկներուն դիմաց: Ինչպէս կ'ըսէիր քեզ մը առաջ, քու ժողովուրդիդ տուէր գէնք մը, որ անխորտակելի էր այլևս: Այս չէ՞ր միտքդ, հա՛յր, լմբոնած ենք քեզ...

- Այո՛, այո՛... քեզ մը առաջ իմ մէկ յայտարարութեանս է լուր յայտնեցիր քու մեծ ուրախութիւնդ: Կարգը իմ է հիմա. անհունօրէն երջանիկ եմ որ իմ ժողովուրդս լիւելի լմբոնած է զիս: Ա՛յդ էր ծրարիրս, ա՛յդ... բարձր կրօնք, ազգայնացած բարձր գրականութիւն եւ խանդավառիչ ու քաջագործութիւններով լեցուն ազգային պատմութիւն: Շնորհակալ եմ, զաւակս, այս ըսածներուդ համար:



- Վարձքը կատար՛ր, հա՛յր...  
 - Ծա յղացայ ծրագրերը, բայց դուք կառուցի՞ք շէնքը, հինգերորդ դարէն մինչեւ այսօր... եւ դեռ կը շարունակէ՞ք նոյն եռանդով, նո՛յն...  
 - Ո՛չ, ո՛չ, վսեմական վարդապետ, հա՛յր, որբազան հա՛յր... միայն ծրագիր չէ՞ր որ յղացար, շէնքը դո՛ւն կարողցիր, մե՛նք շարունակեցինք միայն... հա՛յր, հա՛յր:

- «Դուն գործն ես արել, մեք յամմն հմք առել...»

- Լա՛ւ, լա՛ւ... ես ալ ըսեմ, դա՛րձեալ իմ կարգին, ձեք վարձքը կատար. բոլորի՛նք, բոլորի՛նք, այդ անմահ, հանձարեղ տղոց, որոնք յաճախ նահատակ պորձան, բոլորի՛նք, բոլորի՛նք վա՛րձքը կատար: Այժմ, կարծեմ թէ պէտք է կաճուի՞նք իրարմէ, ուխտաւորները մեկնելու վրայ են... յետո՛յ, դուն եւ ես իրարու հաղորդեցինք կարեւորը...

- Ի՞նչ կարեւորութիւն ունի անոնց մեկնումը. ես հազարաւոր մղոններ կտրած եմ մի միայն քե՛զ տեսնելու, քու Հետը ըլլալու համար: Հարցումներ ունիմ տակաւին, ու պէտք է լուսաբանե՞ս զիս, հա՛յր. կարեւոր է այդ ինձի համար, եղբայրներուս համար:

- Ի՞նչ լուսաբանութիւն, երբ էակաւոր ըմբռնուած է, ի՞նչ կարեւորութիւն ունի մնացածը... մանրամասնութիւն է մնացածը:

- Մի՛ վրձնտեր զիս, հա՛յր, եթէ տւելի կարեւոր պորձեր ունիս եւ չես կըրնար զիս պահել մօտը, ըսէ՛ ինձի եւ կը մեկնիմ անմիջապէս...

- Ո՛չ, վաւակ, ես այլեւս որեւէ պորձ չունիմ, մահուան օրէն մինչեւ այսօր զա՛րձ չունիմ, պարապ եմ ու պարապ կը պտըտիմ ոլորտէ ոլորտ: Բայց դո՛ւն պարապ չես, զործեր ունիս ու պէտք չէ ետ մնաս:

- Եթէ հարցումներս Հանելի չեն քեզի, հա՛յր, ի՞նչլ տուր որ մնամ դեռ քիչ մըն ալ. լուռ եւ ամփոփ՝ մնամ մօտը, հաղորդուիմ ներկայութեամբ, ըմպեմ լոյսը, որ կը ճառագայթէ անձեզ

ու կ'ողողէ զիս, կ'երջանկացնէ, կը վսեմացնէ՛...  
 - Լա՛ւ, լա՛ւ... մի՛ շարունակեր. ի՞նչ կ'ուզես իմանալ տակաւին:

- Կ'ուզէի մանրամասն գիտնալ, թէ ի՞նչ փուլերէ անցան զիրերու գիւտերը, յանգելու համար այս եզակի հրաշքին... ճի՛շդ է որ նախ փորձեցիք յունարէնի բան եւ շորս տառերով, անդրադառնալու համար քիչ յետոյ որ անոնք անբարար էին: Ուստի ստիպուեցաք յաւելեալ տասնըերկու տասեր հնարել, կարենալ զբելու համար մեր իտալական լեզուին բոլոր բառերը:

- ձիշդ այդպէս: Երգեցիկ թուուն մը կար աչքիս առելու, հայերու կողմէ խօսուած լեզուն. զայն ուզեցի գծել. յունական ալֆաբետան անկարող եղաւ տալ բոլոր գոյնները, բոլոր հրանչները. ստիպուեցայ նոր գոյներ փնտռել... իմ մողովուրդս կ'ըսէր.

«Դառն Աստուծոյ»

ու կ'ըսէր նաեւ - «արտիս վրայ էարդրի», կ'ըսէր չամիչ կերայ, ջարի գնեցի, ճանն կ'ըսէր, ցաւ, ձայն, ծաւալ, կ'ըսէր դանակ, քալիւ, քուլի, դոյլ, կ'ըսէր փափախ, բարի, բերել, փնտռել, պարտէ: Ստիպուած էի ուրեմն անբարտասանած իւրաքանչիւր հնչիւնին համար տառ մը գծապէս: Այսպիսով ամբողջապա մեր այբուբենը:

- Այս բեքլիք մասն է, ինչպէս կ'ըսենք այսօր, բայց մնացածը... երբ ձեռք առիք, օրինակ Աստուածաշունչը, այդ մեծ մատենը, ուր կան գրական բոլոր սեպերը, Ծննդոց զիբքէն մինչեւ Սաղմոսներն ու Երգ Երգոցը, Աւետարանները, «Ափոփալիփսոյ», մեր լեզուն բաւականապէս բառամթերջ ունէ՞ր այդ բոլորը թարգմանելու համար:

- Ո՛չ, չունէր: Ոտուած լեզուն ճիշդ է որ շատ հարուստ, շատ ճկուն էր, բայց չունէր եւ չէր կրնար ունենալ մարդկային բոլոր մտածումները արտայայտող համապատասխան բառեր: Կային մահաւանդ նոր մտածումներ, նո՛ր՝ ո՛չ միայն մեզի, այլ համայն աշխարհին համար:

Ուստի նոր բառեր կերտեցինք, Հարի-  
բաւոր, Հագարաւոր նոր Հայերէն բառեր  
հերմուծեցինք խօսուած լեզուին մէջ:  
Լայնորէն օգտագործեցինք մեր լեզուին  
ածանցումի ու բարդ բառեր կազմելու  
սնճուն կարելիութիւնները:

- Եւ ստացաք արտայայտութեան  
այնպիսի հրաշալի գործիք մը, որ մի-  
շեւ Հիմա գեռ մաս խածնել կու տայ ա-  
մէնէն զարգացածներուն, ամէնէն գր-  
ւարահաններուն:

- Այո՛, մեծ գործ մըն էր, զոր պլուր  
հանեցինք պատուով: Եւ մինակ չէի ստ-  
կայն այդ հրաշքը ստանալու աշխատան-  
քին մէջ: Մեծ բարտը ունեցանք Ս. Սա-  
ահակ հման Համայնագէտ Հայրապետ մը  
ունենալու մեր գլխուն: Մեծ բարտը  
նաև, իսկապէս տաղանդաւոր Հայ աղագ  
դուներու մեր ժողովուրդին մէջ եւ այդ  
դործին լծելու:

- Այս մասին դեռ ուրիշ Հարցումներ  
ունի՞ք, բայց կը զգամ, թէ...

- Միայն կը զգաս... քեզի ըսի ար-  
դէն, զուակա, որ ես գործ չունիմ, պա-  
րտապէս չեմ մասիդ կը մտածեմ. պա-  
տարապէս լրանալու վրայ, վե՛րը, եւ  
դուն պէտք է մեկնիս...

- Կը լսեմ շարեւեմները առկէ,  
Հայր, բայց դեռ ժամանակ ունիմ, քա-  
րո՛ղր կայ դեռ եւ ան կրնայ երկար տե-  
ւել: Երկու կամ երեք Հարցում եւս եւ կը  
վերջանայ...

- Ըսէ՛, լսեմ, անպարէ՛:

- Մասնաւոր դիտաւորութեա՞մք  
թարգմանեցիր Հայերէն տառերով զըր-  
ւած առաջին նախադասութիւնը...

«Ճանայիլ գիմաստութիւն և գիրատ,  
իմանալ գրանս հանապարհ»:

- Ի Հա՛րկէ, պատգամ մըն էր, ժո-  
ղովուրդիս ուղղուած, տեսակ մը կտա՞հ  
... կ'ուզէ՞ք որ միշտ ի մտի ունենար  
դույն, հետեւէք անոր:

- Հիտուեցա՞ւ, խօսքը մտիկ ը-  
րա՞ւ...

- Առաջինի մասին, ո՛չ, դժբախտա-  
բար ո՛չ... իմաստութիւն չունեցաւ  
միշտ, չխրատուեցաւ երբե՛ք... Բարե-

բախտաբար լիովին ըմբռնեց եւ երբեք  
չմոռցաւ «իմանալ գրանս հանապարհ»:  
Առով թերեւս պէտք է բացատրել որ ան  
դժբախտ եղաւ յաճախ, երջանիկ կեանք  
չունեցաւ բայց նա՛եւ... շմեռա՛ւ:

- Ուրիշ կարգի Հարցում մը, եզրա-  
կացութեան հասնելէ առաջ: Ձե՞՞ս կար-  
ծեր, Հայր, որ Հայ գիրերու գիւտը շատ  
ուշ տեղի ունեցաւ: Եթէ դուն, փոխա-  
նակ շորթորդ դարուն ծնած ըլլալու, ա-  
ռաջին դարուն ծնած ըլլալիք, նոյնիկ  
աւելի առաջ, Մեծն Տիգրանէն առաջ եւ  
մինք ծաղկեալ մշակոյթի տէր ըլլալիք,  
երբ դինուորագէտ հզոր էինք տակաւին,  
չ՞՞ս կարծեր, Հայր, որ մեր ազգին ճա-  
կատադիրը տարբեր կ'ըլլար:

- Լաւ Հարցում է ու կը վստահեցնեմ  
քեզ որ կ'ս ալ, ժամանակակիցներս ու  
մտածած ենք այդ մասին: Ի՞նչ օգուտ  
սակայն: Ի Հա՛րկէ, ի Հա՛րկէ, տարբեր  
կ'ըլլայինք, Լե՛ծ Մեծն Տիգրանի օրով  
նաև ունենայինք բարձր մշակոյթ: Կը  
մեծնայինք, կը շատնայինք, հզօր ազգ  
ու պետութիւն կը դառնայինք, ձուլելով,  
հայացնելով դոնէ մեզ չըջապատող փոքր  
ցեղերը: Բայց, կը կրկնեմ, ի՛նչ օգուտ:  
Եւ այստեղ ալ, ինչպէս անձնական կեան-  
քի, նոյնպէս եւ հասարական կեանքի ըն-  
թացքին, պէտք է ըսել. - Ձեւելի լաւ է  
ուշ էսն ելլիմէ: Աւելցնեմ սակայն այս  
քիչ մը տափակ ասացումքին վրայ հե-  
տեւելու. մարդկային մեծագոյն գործե-  
րու ծնունդ տուող սկզբնապատճառը  
հարկադրանք մըն է յաճախ: Տեւելու,  
շմեռնելու, ինքզինք փրկելու գերմարդ-  
կային ու վերջին ճիգ մը: Այսպէս էր որ  
մենք Հարկադրուեցանք հինգերորդ դա-  
րու առաջին տասնամեակին, այդ կարճ,  
այդ ճակատագրական պահուն, ստեղծելի  
'եր ու գրականութիւն:

- Ճիշդ են ճի՛շդ՞ բոլոր ըսածներդ,  
Հայր: Վերջին Հարցում մը ու կը մեկ-  
նիմ: Աւելի խնդրանք մը. - պատգամ մը  
ունի՞ս քու խոնարհ ծառայիդ:

- Շարունակէ՛ ճանապարհդ ու բա-  
րի ճանապարհ: Գրէ՛ միշտ, այլ մանա-  
ւանդ սիրէ այն առարկան, այն անձը,



այն տեսարանը, զորս կ'ուզես նկարագրել: Նոյնացիք անոնց հետ. եղիք մէկ մարմին եւ մէկ հողի: Կ'ուզես տողանդուսը հայ դրո՞ղ դառնալ. սիրէ՞ ժողովուրդը ա'յնքան խորապէս, որ նոյնատես անսր հետ: Եթէ կարենաս հասնիլ սիրոյ այդ խորութեան, այդ անկեղծութեան, կրնաս վստահ ըլլալ որ ան, այդ բու ժողովուրդը, որ տաղտնդաւոր է, պիտի սրողէ քեզ իր յորդառատ լոյսով...

- Ենթահակալ եմ, հայր, պիտի ջանամ, պիտի ջանամ... պէտք է մեկնիմ, կառքերը սկսան շարժիլ. օրհնէ զիս, հայր, օրհնէ՛...:

- Կ'օրհնեմ քեզ, դաւակս, քաջ եղիք, շարունակէ ջանքդ եւ ան պիտի պսակուի յաղթանակով, վստահ եղիք: Երթաս լարով:

Դուրսը ինծի կը սպասէր սուրբին դամբարանը ցոյց տուող տաքօրինակ մարդը:

- Գոհ մ'ոտցի՞ք, - կղաւ առաջին հարցումը:

-- Այո՛, շատ դո՛հ:  
- Ձե՛մ հարցնում, թէ ի՞նչ ասացիք ի-

րարու. ըսէ ինձ միայն նա դո՛հ է մեզանից թէ ոչ:

- Այո՛ եւ ո՛չ:  
- Ի՞նչ բանից դո՛հ եւ ինչի՞ց դժգոհ...:

- Գոհ մեր ժողովուրդի հաւատարմութենէն՝ զէպի մեր պատմութիւնը, մեր մշակոյթը, մեր առաքելութիւնը: Իսկ դժգո՛հ... չըսաւ բացէ ի բաց, բայց եւ հասկոյց, թէ ամէնէն աւելի ի՞նչ բանէ դժգոհ է... հայ ոսկեղէն լեզուին դէմ մեր դորձած մեղքերէն, այդ յիմար, այդ անճոռնի ուղղադրութենէն:

- Հասկանալի է՛... զիտենք, մե՛նք էլ պիտենք, բայց թ՞նչ անենք, ի՞նչ կարող ենք անել, ախպէր ջան: Յոյս ունենք, թէ կամաց-կամաց կը վերադառնանք ուղիղ ճամբին... Յստուութիւն, ընկեր, եւ Օշականի անուան զարոցի հայերէնի ուսուցիչն եմ... Իսկ դուք, հաւանաբար սփիւռքահայ դրո՞ղ... ցտեսութիւն, ուրաջութիւն, յաջողութիւն:

- Յստուութիւն, եղբայր, ուղեկից, զաղափարի, դործի թանկագին ընկեր, բաջութիւն նաեւ մեզի, քաջութիւն, համբերութիւն եւ դարձեալ քաջութիւն:

Կ. Փ.



### « Խ Ո Ր Հ Ո Ղ » Ի Ն

Խոհերուդ մէկ միմչեւ ե՞րբ պիտի մնաս անբարբառ  
 Իրբեւ խորհուրդ լուրբեան, խոհեմութեան գերք տիպար,  
 Ու միմչեւ ե՞րբ դեռ կառչիս պատուանդանիդ արուեստի  
 Ով գեղարձան Ռուսէնի:  
 Վազուց անցած է, ափսո՛ս, ոսկեդարը լուրբեան  
 Երբ գլխահակ ու խոհում՝  
 Կընծայէիր իմաստութիւնդ տննման  
 Քեզի յառազ աչքերուն,  
 Ամէն տեգամ ծառանար, ո՛հ, եղբայրն իր եզրօր դէմ,  
 Կամ ժողովուրդ մը անգէն, խաշելութեան լերկ նամբուն  
 Անմեղօրէն մահանար իր յիսկալ ռոպտէն...:

Հրքիւային դարն է սակայն, գար կ'ապրին  
 Մորդերն այսօր մեր երկրին,  
 Ուր լուսնանեմ սխրամբներով են հարբած  
 Եւ խոհական ներկայութիւնդ իսկ մոռցած:  
 Դարն է այսօր լուսնարշախի՛ մը բացուն,  
 Որ խոյանքովն իր հզօր՝  
 Կը մուսնէ ռզգ տիեզերքը անեան  
 Վերածելով գայն կարծես հարսնարանի մը բասր,  
 Ուր լուսնկան՝ յանքժակոյս ու անհաս,  
 Բողազերծեալ կ'ըլլայ հա՛րս...:  
 Շունդագեզ շարժումի, երբերախոյզ այս դարուն,  
 Երբ մարդկութեան ուշքն համակ  
 Կը թափի մայրակ առ մայրակ՝  
 Ի՞նչ կը խորհիս դեռ տրտում,  
 Օ՛, աւանդել խզնի՞ր դաս, արդարութի՞ւն, բարութի՞ւն,  
 Աւա՛ղ, նայուածքդ ներհուն անշխարհ է արդէն  
 Խորհրդատու իր երբեմնի իմաստէն...:  
 Բա՛ւ է վարես նգնաւորի վարժ մը հին,  
 Ալ յարմարէ՛ ժամանակի տեմչերուն,  
 Մշտանորոգ կեանքի կոչի՛ն ռազմալար.

Իջի՛ր, «խորհոզ», պատուանդանէդ իջի՛ր վար,  
 Գարձիք աւիւն, կենդանութիւն վարարուն  
 եւ անվեհեր աստղանաւորդ մը իբրեւ  
 Փոխան բռցէ հրքիռի՛  
 Փարէ ճիւղն վահագնի,  
 եւ սլացիք ճանապարհով ճարդգողի  
 Ո՛չ թէ դէպի խռպան ավերը լուսնի,  
 Այլ սուրբ գոբէթն Արարատին երկնանմա,  
 Ուր նայիրեան հովերն ըրած ձայնասփիւռ,  
 Պեղած պատգամդ մեր պատմութեան պղտմէն՝  
 Հեռասփռէ շունչդ մարդոց ամենուր.  
 Ըսէ՛ անոնց, թէ ոգին եւ վնասկամ  
 Արդարադատ գոյութեան.  
 Պահն է հնչած թէ անաչառ դատումի՛  
 Բարդ ու առկալս հաշիւներ  
 Հարկ է յանգին հուսկ եւ արգար լուծումի:  
 Ըսէ՛, «խորհոզ», թէ Արարտն հնամենայ,  
 Որ քարէքու կապանքին տակ կը սգայ,  
 Հարկ է յանձնել հայերուն,  
 Որոնք յոյսով եւ հաւատով անդադրում  
 Դարեր ամբողջ գայն պաշտեցին հոգիւին  
 Ազատութեան իբրեւ կոթող գերագոյն...:  
 Ըսէ՛ անոնց, ինչ փոյթ նայնիսկ,  
 Թէ հրքիռները դէպի  
 Մուսրակները թեւեն  
 Ու երկնային դրութեան  
 Նորահրաշ իմացումով լոյս սփռեն,  
 Երբ չեն կրնար, հոս, ծոցին մէջ երկրային  
 Արդարութեան դարեւանդն իսկ մտահել  
 Ու սարն այս որք իր մայր հողի՛ն դարձնել:  
 Խօսէ՛ այնպէս, որ ճու ձայնէր բարձրալար  
 Մարդերն համայն ըմբռնեն,  
 Արդարութեան թէ կանչն անգոր չի՛ մնար:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՏԱՐԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

**ԱՐԹՆՅԷ՛Ք, ԱՐԹՆՅԷ՛Ք . . .**

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Շողեկաւորը քելչ կ'աղմկէր: Ճիշդ ատենն է՝ ըսաւ Թուրեան:  
- Ժողովրդային մեծ միթիւնկին խօսելու կ'երթամ:  
- Այդպէ՞ս:

Շեշտին մէջ մի՛միայն քաղաքավարութիւն: Կա՛մ այն է որ շատ ար-  
պաւորուած չէ՛ր, կամ ալ մարտահրաւէր կը կարդար: Կլոր մարմին մը,  
լայն եւ դեղնորակ դէմք մը, խեղճ հարուստ մը: Ամէն պարագայի, կու-  
սակցական ղեկավարի հետ յանախ եւ մտերմօրէն խօսողի գլուխ շունէր:

- Այո՛, ե՛ս եմ Արամ Թուրեանը:  
Ձգաց, որ ձայնին մէջ ինքնագովութիւն կար: Նեղուեցաւ:  
Մարդը դահացաւ գլուխը շարժելով: Աւելորդ խօսքերով եւ շար-  
ժումներով ուժ չէր սպառեր: Մինչդեռ ի՛նքը՝ Արամ Թուրեան, երբե՛ք  
չէր կրցած իր անձին վրայ նման հակակշիռ մը հաստատել:

- Այս գիշեր Կուսակցութիւնը ժողովրդային մեծ միթիւնկ մը կազ-  
մակերպած է Ա.ի մէջ: Քաղաքական մասնաւոր նշանակութիւն ունեցող  
պաշտօնական հաղորդագրութիւն մը պիտի կարգամ:

Մարդը ծպտեցաւ եւ գլխու շարժում մը ըրաւ:  
- Անշուշտ չեմ կրնար զաղտնիքը հրապարակել, բայց յայտնեմ, թէ  
շատ կարեւոր, բոլորս մօտէն հետաքրքրող նորութիւններ կան... ինչ որ  
է, վաղը արդէն թերթերը կ'անդրադառնան:

Մարդը անդամ մըն ալ ծպտեցաւ, յայտնապէս քաղաքավարութեան  
համար:

Թուրեան զղջացած էր. կը վայելէ՞ր իրեն խօսակցիլ անծանօթի մը  
հետ, այն ալ շողեկաւորին մէջ: Եկուր տես սակայն, որ արամադրութիւնը  
քանդուած էր, դիշերուայ ճառը կրնար ազդուել ատկէ: Ո՛չ, պէտք էր  
յաղթել, սա մարդուկին աղուոր դատ մը տալ:

- Կը ցաւիմ որ ձեզ ձանձրացուցի: Բայց մենք, քաղաքական գոր-  
ծիչներս, յանախ կը մտնանք որ կան նաեւ ազգային հրատապ հարցերով  
չհետաքրքրուող մարդիկ...

Եւ խօսքը վերջացուց ծաղրական խնդուքով մը:

Անուշա, զիչ մը աղայական էր ըսածը, Բայց վերջ ի վերջոյ ասիւ-  
ած էր բան մը ըսել, բան մը ընել, Ինքը՝ Արամ Թուրեան, Կուսակցու-  
թեան ներկայացուցիչը, կրնա՞ր լռել: Բայց ո՞վ է սա մարդը, որ զինք  
կարծես շատ հեռուէն կը դիտէ.

- Ա. աեղացի՞ էք, - Հարցուց:

- Ո՛չ, ձեզի պէս ես ալ միթիսկի մը կ'երթամ: Բայց մենք շատուոր  
չենք, հաւանաբար վեց հոգի:

Այդ էր ուրեմն, վայ խեղճ մարդ...

- Վստահ եմ որ մե՛ք միթիսկին Հազար հոգի ներկայ կ'ըլլան, Թե-  
րեւս աւելի:

Մարդը չպատասխանեց, զիրք մը առաւ:

- Ինչ է՞ք ըսեր, - հարցուց Թուրեան անհամբեր շելտով մը:

- Անհրատե՛շտ է:

Այսքան անպատկառութիւն: Յետոյ սա կեցուածքը - կարծես հա-  
սուն մարդ մը, որ Համբերութեամբ կը պատասխանէ մանուկի մը տաղտ-  
կալի Պարզամտներուն:

Թուրեան յոգնած էր: Նախորդ օրուան երկար ժողովը սպասած էր  
ջիղիբը: Նան՛ա մտահոգ էր գիշերուայ ճառին համար: Բաւական դժուա-  
րութեամբ կըրցաւ ինքզինքը զսպել:

- Տե՛ս բարեկամ, շատ հոգս չէ թէ բան կ'ըսես կամ չես ըսեր: Բայց  
զիրքը զիչ մը վարմանալի կը գտնեմ: Դժուար օրեր կ'ապրինք եւ մեր առ-  
ջեւ անմիջականօրէն լուծումի կարօտ հարցեր կան...

- Ճիշդ է, - ըսաւ մարդը Հանդարտօրէն: Բայց այն՝ որ ձեզի կա-  
րեւոր կը թուի, կրնայ ինծի համար անկարեւոր ըլլալ:

- Կարելի է, կարելի է: Ամէն պարագայի, լաւ կ'ըլլար որ մե՛ր մի-  
թիսկին ներկայ գտնուէիք եւ ձեր շորս կամ հինգ ընկերներն ալ միտսին  
բերէիք:

Արդէն քանի մը վայրկեանէն կայտրան պիտի հասնէին, անօդուս էր  
խօսակցութիւնը շարունակել: Թուրեան պայտասկը վերցուց եւ ոտքի  
կուս:

Միւսն ալ կանգնած էր: Երկվայրկեանի մը ընթացքին երկուքին աղ-  
նարկները շատ մօտէն իրարու հանդիպեցան: Անծանօթին աչքերուն մէջ  
զարմանալիօրէն խիտ լոյս մը կը փայլէր:

- Այն վեց անձերը, որոնց պիտի հանդիպիմ այս դիշեր, ամէն Զանք  
կը թափեն կենդանի մնալու համար, - ըսաւ մարդը:

- Այդ ալ ի՞նչ է: Այն Հազարը, որոնց պիտի խօսիմ միեւնոյն բանը  
կ'ընեն:

- Ո՛չ, - ըսաւ միւսը, հանդարտօրէն, - ո՛չ: Ա.ի մէջ թէ այլուր՝  
մարդոց մեծամասնութիւնը կա՞մ զնացած է, կա՞մ մեռած:

Ահա՛ զեզի խորհրդածութիւն մը, որ այլանդակութեան սահմանները  
կ'անցնէր:

- Ապուշ խօսք, - ըսաւ Թուրեան:

- Լա՛ւ, - ըսաւ ձայնը, որ հիմա կարծես այդ ակնարկին հրաշքի  
վարագործին ետեւէն կու գար, - լա՛ւ, դուք անձամբ դատեցէք:

Կայտրան հասած էին:

Մինչեւ որ Թուրեան դիտարկն ու վերարկուն Հազար, մարդը մեկ-  
նած էր արդէն:

Ինքնակող առաքեալ մը, վստահօրէն: Մէկը այն բաղձաթիւ ճեղք-

լընչեալներէն», որոնք հոս-հոն կ'երթան եւ կը խօսին ուրիշ տկարամիտներու: Թերեւս հիփոթոսական կամ շես սիտեր ի'նչ միջոցաւ ակնարկը փայտուն դարձուցած էր: Նման մարդոց հետ ժամանակ կորոնցնե'լ:

- Ձեր պայուսա'կը, պարոն:

Մեր բեռնակիրը շատ յոգնած կ'երեւէր: Տե'ս, ահա ասոր համար սխալ չէր ըլլար ըսել, որ կէս-քնացած է: Չարմանալե՞: Ո՛չ, զայս երկրին մէջ շատ քնացածներ կան, հո'ս պէտք է փնտռել մեր ցաւերուն արժանոքը...

Ճառին սկիզբը, իբրեւ ներածական կընար այդ դաղափարը քնդլայնել: Գէշ չէր ըլլար: Նաե'ւ խմբագրական մը, «Արթննայ» խորագրով:

Ուրախ խումբ մը ղիկնք ղիմաւորեց: Թուրեան անոնց մէջէն կը ճանչնար ծերունկ Վարդանեանը, տեղական ներկայացուցիչը եւ Սարգիսեանը՝ թերթին պատասխանատուն: Ողջագուրուեցան, բարեկալուստի մտղթանքներէ հաք, լուսանկարուեցան եւ ընկերոջ մը ինքնաշարժով մեկնեցան «Արեւելք» պանդոկը, ուր սենեակ մը վերապահուած էր մեծ հիւրին:

Հո'ն էր, բազմաթոռին մէջ տեղաւորուելու ատեն էր որ տեսաւ: Վարդանեանը ո՛չ միայն ծերացած էր, ո՛չ միայն ծիծաղելի էր, այլ մնւած էր: Եւ հաւանաբար տարիներէ ի վեր մեռած էր: Անշուշտ կընար շարժիլ, կընար խօսիլ, բայց Թուրեան յոտակօրէն տեսաւ, որ մարդը մեռած էր: Մեռած:

Այս հաստատումը կատարելէ հաք, դժուարացաւ Վարդանեանին հետ խօսելու: Սարգիսեանին դառնալով՝

- Կեդրոնը կը գնահատէ մեր աշխատանքը, - ըսաւ, - բլորին կարծիքն է, մեր շնորհիւ թերթը մեծ յառաջդիմութիւն արձանագրեց վերջին տարիներուն: Ի՞նչ կը խորհիք այս գիշերուայ միթիկներն մասին:

- Վստահ եմ, որ բացառիկ յաջողութիւն կ'ունենաք: Ընկերները անհամբերութեամբ կը սպասեն Կեդրոնի ներկայացուցիչին խօսքերուն: Հասանաբար սրտը պզտիկ դայ...

Ի՞նչ պատասխանէր: Ի՞նչ կ'ըսէն մէկու մը, որ թէեւ ազնիւ եւ պարտաճանաչ, սակայն քնացածի երեւոյթ ունի: Կարծես քունին մէջ կը խօսի եւ կը շարժի:

Մեռեալ մը եւ քնացած մը: Ան քեզի ուրախ երեկոյ:

- Ուիսի մը խմե'նք, - ըսաւ, - թերեւս մթնուրտը փոխուի:

Ապսպրանք անող երիտասարդ սպասակը դիւզէն նոր քաղաք իջնողի կը նմանէր: Մեծ աչքեր, ճկուն շարժումներ, բայց եւ այնպէս՝ քնացած մը:

- Ձեմ ուզե՛ր որ մեր Եւրոպիան դուն բերես: Պատճառը մի՛ հարցնե՛ր, թող ուրիշ մը բերէ, - ըսաւ Թուրեան, դրեթէ պոռալով:

- Ի՞նչ կայ, ընկեր Թուրեան, - հարցուց Սարգիսեան:

- Ի՞նչ կ'ուզէք որ ըլլայ, կէս-քուն, կէս-արթուն է:

- Հոս իրեն պէս շատեր կան, - մոմոաց Վարդանեան, միշտ մեռած:

- Կը զարմանամ, Ա. քաղաքը կենտրոնակ է, - բողբոջ Սարգիսեան, խոր քունին մէջէն խօսելով, - իրապէ'ս կը զարմանամ:

Թուրեան կը պատրաստուէր դառն խորհրդածութիւնով մը պատասխանելու, երբ մտաւ նոր սպասեակը: Արդէն հասուն մարդ էր: Գանդաղ բայց ինքնավստահ շարժումներով դաւաթները տեղաւորեց եւ լեցուց: Թուրեան անմիջապէս զգաց, որ այս մէկը ո՛չ մեռեալ է, ոչ ալ քնացած, այլ կատարելապէս արթուն:





- Վերջապէ՛ս, վերջապէ՛ս, - գոչեց ուրախութեամբ :  
Մեղանակիցները անշուշտ կարծեցին, որ խանդավառ արտայայտու-  
թիւնը խմբիչքին համար էր...

Բայց մարդը նեղացուցիչ ըլլալու աստիճան արթուն էր : Անոր մեղ-  
սակից եւ քիչ մը Ծաղրական ակնարկին մէջ՝ Թուրեան յստակ կը կարդար  
- «Այո՛, ճիշդ է, ես այդպէս եմ. բայց ինձի պէս քանի՞ հոգի պիտի գըտ-  
նես այս գիշերուայ միթիւնիկնոջ :

Անշուշտ կը տեսնէր, որ Վարդանեան մեռած եւ Սարգիսեան խոր  
քունի մէջ է : Գիտէ՛ր նաեւ որ ինքը - Թուրեան - ինքն ալ տեղեակ էր այդ  
անհեթեթ վիճակին : Պէտք էր կապ մը հաստատուել :

- Գործէն ո՛ւր կ'արձակուիք այս գիշեր :

- Ո՛չ, պարոն, ժամը եօթին :

Շեշտը յարպալից էր, ճիշդ ա՛յնքան, որքան պատշաճ է. բայց եւ  
այնպէս...

- Ուրեմն կրնաք մեր միթիւնիկն մասնակցիլ : Հետաքրքրական է :

- Վստահ եմ, - ըսաւ սպասեակը, - բայց այս գիշեր պատ չեմ :  
Պզտիկ խումբ մըն ենք եւ ամիսը անգամ մը կը հաւաքուինք :

- Այդպէ՞ս : Եւ ի՞նչ է մեր խօսակցութեան նիւթը - համայնավա-  
րութի՛ւնը :

- Ո՛չ պարոն, հրբե՛ք : Ուրիշ բան մը կը փափագէի՞ք : Ծնորհակալ  
եմ :

Մեկնելէ առաջ՝ գլխով խոնարհութիւն ըրաւ : Այդ աչքե՛րը : Թուր-  
եան անմիջապէս յիշեց, թէ արդէն հանդիպած էր այդ աչքերուն :

Յմիչքը ո՛չ Վարդանեանը կենդանացուց, ոչ ալ Սարգիսեանը ար-  
թնցուց : Միմուրտը փոխելու համար՝ Թուրեան խօսեցաւ կուսակցու-  
թեան եւ կեդրոնի գործունէութեան մասին : Քանի մը սրամտութիւն ը-  
րաւ հակառակորդներուն վրայ : Ի զուր :

Բայց ժամանակը անցաւ եւ վերջապէս մեկնեցան, խոստանալով ժա-  
մէ մը վերադառնալ եւ զինք սրահ առաջնորդել :

Քանի միտակ էր՝ սկսաւ ճառին նոթերը կարդալ : Ձէ՛, լաւ էր : ձա-  
ռը իմաստ մը ունէր, բայց ո՛չ այն՝ որ ինք կ'ուզէր : Հիմա վստահ էր, որ  
չոգեկառքի մարդը զինք հիփոսոացուցած էր : Բայց ազդեցութիւնը ան-  
շուշտ պիտի անցնէր, այլապէս մեռեալներու եւ քնացածներու հակայ բազ-  
մութեան մը խօսիլը իրապէս սարսփելի է...

Նորէն սպասեակը կանչեց : Այս անգամ երիտասարդը եկաւ : Յմիչք  
մը ապսպրեց : Ձկրցաւ ինքզինքը զսպել :

- Բայց ի՞նչ ունիս, բարեկամ :

- Ներողութի՛ւն :

- Քնացած ես :

Տղան բողոքեց : Ո՛չ, քնացած չէր, արթուն էր : Երկու յարկերու յա-  
ճախորդներուն ծառայելու համար պէտք էր ամբողջովին արթուն ըլլալ :

Թուրեան չպատասխանեց : Թէեւ իր պաշտօնը խղճատուութեամբ կը  
կատարէ, ա՛յս ալ կը պատկանի քնաչըլիկներու մեծ խումբին : Թող ու-  
զածին չափ բողոքէ : Ծոգեկառքի մարդը ըսելու օգտին էր, որ մարդոց մե-  
ծամասնութիւնը կը կարծէ արթուն եւ ողջ ըլլալ, մինչ իրականութեան  
մէջ քնացած է կամ մեռած : Այս ալ կը կարծէ...

Նոթերը հաւաքեց, ոտքի ելաւ եւ երեւակայութեամբ փոխադրուե-  
ցաւ «Ազատութիւն» անուն հակայ սրահը : Սկսաւ խօսիլ :

«Հայրենակիցներ, ինձի համար մեծ պատիւ է այսօր...»:  
 Յետոյ պղտիկ կատակ մը, Բագմութեան խնդուքը գրեթէ ակտնջին  
 կը հասնէր:

Բուն նիւթին անցաւ: Կուսակցութեան նոր քաղաքականութիւնը եւ  
 գործելակերպը: Խօսքերը ինքնավստահ էին, համոզիչ: Վերնամ ձեռք վստա-  
 հեցնել ընկերներ...», կը պատգամէր իր լուռ ձայնը, երբ սարսափած  
 կանկ առաւ: Գունին մէջ խօսելու տպաւորութիւնը ունէր:

Ճաշարան իջաւ: Այս քաղաքին մէջ զինք կը ճանչնային, որով՝  
 ստիպուած էր դերը լաւ խաղալ: Թեթեւ ճաշ մը եւ խմիչք մը օպորտէնց:  
 Լաւ էր այդպէս, ինքզինքը վերադառած էր:

Աչք մը պտտուց նստողներուն վրայ: Արդիւնքը ազիտալի եղաւ:  
 Մօտ հարկեր հողի վրայ երեք ողջ կամ արթուն: Հոս, պղտիկ տղայ մը,  
 որ ծնողքին հետ կը ճաշէր - երկուքն ալ անվերջանալի քունի մէջ - հոն,  
 տարիքը առած մարդ մը, որ երեք մեռեալ հրաւիրած էր, եւ սրահին միւս  
 անկիւնը, միայնակ կին մը: Մնացեալին մէկ քառորդը թաղուելիք մեռ-  
 եակներ էին, իսկ երեք քառորդն ալ կ'ուտէին, կը խմէին, կը շաղկապա-  
 աէին լայնաբաց աչքերով, բայց կատարելապէս քնացած:

Թերեւս զարմանալի, բայց այդպէս էր: Անտարկիւի իրողութիւն  
 էր: Թուրքանի թուեցաւ, որ սա պահուն իր էութենէն որոշ մաս մը սրա-  
 հին մէջ չէր, այլ ուրիշ տեղ մը, աւելի բարձր տեղ մը, ուրիշ սարսափե-  
 լեօրէն սուր ակնարկով կը հետեւէր վարի անցուղարձին: Միտքը պղտո-  
 րեցաւ, երբ փնտռեց ի՛ր սեղանը...

Ամբողջ կեանքը: Ամբողջ կեանքը ունայնութեան գլուխ-գործոց  
 մը... Ինքն ալ, Կեդրոնի միւս անդամներուն պէս իշխանութեան տիրա-  
 ցած, էր ելլելով ընտրողներու զանգուածին ուսերուն վրայ: Ընտրողներ,  
 ո՛չ, զնաչըլիկներ: Աչքերնին գոց ընտրական անուակ ուղղուող զնաչըլի-  
 կներ:

Եւ ո՞վ էր ինքը, Թուրքան: Երազներու մէջ օրօրուող Կեդրոնին մէկ  
 անդամը: Մէ՛կը այն ժողովականներէն, որ աւելի Փաքիթի մը հիփոստացած  
 զոհերուն կը նմանին, քան ինքնակամ մարդոց: Այդ պայմաններուն մէջ  
 յաւակնի՛լ օգտակար զործ կատարել: Կատարեալ անհեթեթութիւն...

Ուրիշ անգամներ ալ ինքզինքը յոգնած, հիասթափուած եւ յուսա-  
 լքուած զգացած էր, տեսնելով տքնալան աշխատանքի մը խեղճ արդիւնքը:  
 Բայց հիմա՞: Նո՛յնիսկ այդ իրարանցումը, նո՛յնիսկ օգտակար ըլլալու  
 մտահոգութիւնը ունայն էին: Արգահատիլի՛:

Ընկերներն ալ, ի՛նքն ալ կը կարծէին ճատրակի խաղ մը ղեկավարել:  
 Մինչդեռ պարզ քարեր էին: Բուն խաղացողները՝ կատարեալ անծանօթ-  
 ներ: Թերեւս սա ծերացած սպասեակը, սա շոգեկառքի տարօրինակ խօսա-  
 կիցը: Չեւ գիտէր տակաւին ո՞վ, Թերեւս ուրիշ աշխարհի մէջ ապրող էակ-  
 ներ: Թերեւս...

- Կրցա՞նք ձեզ պահպանել, - հարցուց ճաշարանի վերակացուն:  
 - Ո՛չ:

Մարգիտեանին եւ վարդանահանին հետ սրահ գնաց: Ինքնաշարժին  
 մէջ կը խորհէր, որ զինք լսելու համար եկողներուն մեծամասնութիւնը  
 բնականաբար քնացածներ եւ մեռելներ պիտի ըլլային: Կարեւոր չէր «ձեռք»  
 ձառ մը խօսիլը - որո՞ւ համար: Կը բաւէր պաղարիւն մնալ, այս զիչեթ-  
 ւան պատահարները մտնալ, լաւ տպաւորութիւն մզել: Այդքան: Մար-  
 սափեյին՝ ամբողջովին արթուն եւ կենդանի մարդոց հետ ըլլալն է:



- Բացարձակ օրերու խճողումն է, - ըսաւ Սարգիսեան իր կազմակերպչական երազին մէջ, - տեղական Կեդրոնի ընկերները ձեզ կը սպասեն: Բեմ կ'լլելէ առաջ՝ տասը վայրկեան ժամանակ ունիք:

Այո՛, կը սպասէին իրեն, հո՛ս ալ կը սպասէին, մեռեալներ եւ քնաշքիւններ: Եւ անոնց մէջ, սուկայն, անակնկալ բացատուութիւն մը, գործավարին կիներ: Ներկայացուցին.

- Տիկին Յակոբեան, Ընդհանրապէս մեր միթիւնկներուն չի մասնակցիր: Բայց այսօրուան ճառախօսը...

- Այսօր ինչո՞ւ եկաք, տիկին, - Հարցուց Թուրեան:

- Շատ հետաքրքիր եմ գիտնալու, թէ ի՞նչ պիտի ըսէք:

Միեւնոյն ժպտալ, միեւնոյն աչքերը: Հասկցաւ որ ան ալ գիտէր:

- Երթանք:

Ժամն էր: Ուրախացաւ, որովհետեւ տիկին Յակոբեանի խայթող ակնարկէն պիտի ազատէր:

«Աղատութիւն» սրահը իրեն ծանօթ էր: Բազմութիւնը ընկերական: Մաքաւարութիւնները խելացնոր եւ ինքնաբոխ: Տեղական ներկայացուցիչը իր հուստարիմ մարդը: Ի՛նքն ալ, Արամ Թուրեան, Կուսակցութեան Կեդրոնին կարեւոր անդամը: Նոթերու արցակը սեղանին վրայ՝ կը պատրաստուէր այլքան սպասուած, այլքան կարեւոր ճառը արտասանելու...

Սակայն ճիշդ այդ պահուն տեսաւ վարքը, վերքը, պատշգամին վրայ, օթեակներուն մէջ բացականչեցող խիտ շարքերը: Ապուշ երազի մը մէջ ժպտացող քնացածներ, գերեզմանին սպառող մեռեալներ: Երկու ժամ յետոյ, կոյրերու պէս, ինքնաշարժերով պիտի երթային աւելի խոր գիշերական մէջ թաղուելու...

Հետուէն լսեց թեթեւ հազ մը: Նորէն զարնուեցաւ տիկին Յակոբեանի լուռաւոր ակնարկին: Անդրչիբիմեան ձայն մը.

- Եւ հիմա... մեծ պատիւ... երէց ընկեր... Կուսակցութիւն... կը հրաւիրեմ ընկեր Թուրեանը...

Վարդանեանի դիակն էր որ կը ըզզար:

Կանգնեցաւ: Երկու քայլ յառաջացաւ:

- Սիրելի Հայրենակիցներ...

Ակաս՞ծ էր խօսիլ, թէ կ'երազէր: Չէր պիտեր: Ինչպէ՞ս գիտնալ:

Անկարելի է վստահ ըլլալ...



Սրահին մէջ գտնուէր մը, յետոյ իրարանցում եւ աղմուկ: Բեմին վրայ, Արամ Թուրեան, գունատ, թեւերը շարժելով կը դառար.

- Արթնցէ՛ք, արթնցէ՛ք կ'ըսեմ, արթնցէ՛ք, արթնցէ՛ք, արթնցէ՛ք, արթնցէ՛ք...

Ն. Գ.

Հետնադուքեանք  
Ճ. Գ. ԲՐԻՒՆՍՔԻԻ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

# ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

ԳԻՐԲ ԵՐԿՐՈՐԴ

ԳԵՀԵՆԻ ԴՈՒՌՆԵՐԸ

ԳՂՈՒՆ Դ.

Միջայլէ շտեաւ մահուան ժպիալը։ Դանդաղօրէն, ծովամոյն եղած դիւանդի մը պէս, զոր ծովը գուրս կը նետէ, սկսաւ բարձրանալ դէպի կեանքին մռայլ ու խորթ գէմքը։ Շուքեր կ'երթեւեկէին զոց աչքերուն պատտառին վրայ։ Ձայններ, որոնք կուգային անցեալէն, սկսան որսուիլ մորթին ծակտիկներէն ներս եւ ամբողջ էութիւնը օրօրեցին իրենց երգերով։

Միայն լուսադէմին է որ կրցաւ զանպանել ձայներու ունայնութիւնը եւ կերպարանքներուն պատրանքը։ Երբ աչքերը բացաւ, խաւարը վերցուցած էր իր նենգ դիմակը եւ արեւը իր շողշողացող ու մրէժիմնդիւր ստաբ կը մխրճէր ժամանակի սրտին մէջ, ոչնչացնելու համար պարանակալ նենգութիւնները։

Միջայլէ աչքերը բացաւ։ Ի՞նչու ոտքի էր։ Ի՞նչու հակառակ մկաններուն թուլութեան կանգուն կը մնար սէպ ապառաժի մը պէս։ Այս ուղղածիզ դրուութիւնը զլիսապարտս կու տար իրեն եւ զինք կը վերածէր առանցքի մը, որուն շուրջ ամբողջ երկրադունտը կը դառնար լաղացքի քարի մը պէս։

Քիչ մը աւելի լոյս մտաւ բերքէն ներս եւ արթնցուց թմրած ուղեղը։ Ու բարձրացող արեւին հետ, Միջայլէ լսեց անտեսանելի ծովու մը ժխորը։ Քիչ մը

աւելի սրեց նայուածքը։ Եւ վարը՝ աջ կողմը, ձախ կողմը եւ աւելի հեռուն, տեսաւ մարդկային բազմութիւն մը, որ կ'անհետանար ձանձրացած աւազներուն խորերը, եւ որուն ողբը կը տարածուէր, կ'ընդլայնէր, մերթ կը տկարանար, մերթ կ'այլեկոծէր ունայնութեան արիւնքէն մինչեւ յաւիտենականութեան դոց դռները։

Մտռը, որուն կապուած էր Միջայլէ, խեղճ էր ու մերկ իր մարմնին պէս։ Միայն գլխուն բարձրութեան հաւասար, բունը կը կազմէր երկճիւղի մը, ուղղւած դէպի երկինք, պաղատող բազուկներու պէս։

Բունը եւ երկճիւղին կը կազմէին նոր ձեւի խաչ մը, որ կը բարձրանար շոր ու զորշ քլուրի մը վրայ։ Միջայլէին ոտքերը չէին դաշեր գետին, միայն կանակը կը հանդէս բունին։ Նեցուկ մըն էր այս ծառը իրեն համար եւ նոյն ատեն անդուժութեամբ կ'արդիւնէր, որ չէր ուզեր բաժնուիլ իրեն յանձնուած մարմնէն։

Միջայլէին աջ ու ձախ կողմերը, իրարմէ հազիւ տասը միթր հեռու, ցցուած էին նոյն տեսակի հարիւրաւոր խայեր, իւրաքանչիւրը կտուած իր մարդկային բնութիւն։ Պաշտը կը կազմէին շրջանակ մը, որուն կորութիւնը կ'անհասանար հորիզոնին պիծէն անդին եւ որուն կեդրոնը կարելի չէր որոշել։

Հիւսիսային կողմը, մուշներու մէջ

կը կորսուէր Տաւրոսի զանդուածը: Քիչ մը առաջին, Նփրատը կը դաւարուէր իր լայն խրամին մէջ: Ամիսներէ ի վեր, իր ջուրերը կը վտարուէին բռնաբարուած կիներու դիակներ եւ կ'օրօրէին խոշտանդուած մանուկներու մարմիններ, առանց կարենալու զանոնք տեղաւորել իր արհերուն հանգստաւէտ մէկ անկիւնը: Նոյն ուղղութեամբ, զոյգ իժերու պէս, երկաթուղիին անգուժ մետաղը, ժանիքները խրած հողին մէջ, հելտանքով եւ անհամբերութեամբ կը սպասէին մեռելներով եւ մահամեծներով ծանրաբեռներու վազոնները, որոնք կը թափուէին Խասուլ-Այնի աղբանոցներուն մէջ:

Սեւ սպիտի մը պէս, աւազներու գորշ տարածութեան վրայ, կը դառնուէր հըսկայ ճամբարը եւ զիչ մը անդին կիսաւարտ կամուրջը, որուն իւրաքանչիւր քարը կ'պցուած էր հայու արիւնէն ու քրտինքէն պատրաստուած շաղախով:

Միքայէլ սլահ մը աչքերը գոցեց, վահնլու համար այս անտանիչ տեսարանը եւ երեւակայութեան աչքերը կեդրոնացուց աւելի Հեռունները: Տաւրոսի պարիսպէն անդին տեսաւ ցորենի դաշտեր, մրգաստաններ, այգիներ, դիւղեր, քաղաքներ, եկեղեցիներ, զորս բարբառոտները կ'աւերէին, սպաննելէ ետք առնոց քնակիչները: Իր անուշ ու գեղեցիկ Հայաստանը դարձած էր ուղի եւ անբարակի երկիր մը: Երեք Հազար տարուան ջանք, յարատեւութիւն, զոհողութիւն յանգած էին այս արհիւնայի սնանկութեան: Ամէն ինչ իրենց դէմը ելած էր, մարդիկ, դէպքերը եւ քնութիւնը: Մարդիկ դարձած էին իրենց դահիճները եւ ամէն տեղ զոհեր կը փնտռէին:

Ինք՝ մէկն էր այդ զոհերէն: Բոլորն ալ, մեռնելէ առաջ, ապրած էին այլուպան զժողովներու մէջ: Իր դժոխքը եղած էր վարի ճամբարը: Ստացած էր կիցեր, մտրակի Հարուածներ, եւ օր մըն ալ դիւքը քաշըւած էին մինչեւ այս բլուրին դաւաթը եւ կապած՝ այս մեռած ծառին: Իրմէ առաջ մեռնողներուն ոսկորները դիպուած էին ոտքերուն տակ եւ իրեն կը ծառայէին իբր պատուանդան: Բնութիւնը,

խորհրդաւոր նախատեսութեամբ մը, այս բլուրներուն վրայ բուսցուցած էր այս Հազարաւոր ծառերը, որպէսզի օր մը իբր խաչ ծառային անմեղներուն: Տիրոջ խաչին ձեւը եւ համաչափութիւնը շունչին ասոնք, որովհետեւ այդ մէկը մարդու ձեռքով շինուած էր, խնամքով ցուցադրուելու համար խելագարուած ամբաստաններուն: Իրենց դահիճները, այդ յոգնութիւնն ալ չէին կրած, օգտուած էին բնութեան մեղսակցութենէն:

Տակաւին որքան ժամանակ պիտի մնար այսպէս մեղկ ու ջախջախուած, միացած այս անկույտ փայտին: Մահը կ'ըրգէր պիտի առնէր իր գլխացոյց բազուկներուն մէջ, եւ օրօրելով կամացուկ մը դէնէր Հողէ անկողինն մէջ, որպէսզի յարթնայ իր յախտնական քունէն: Յերիկ մը, դիւղեր մըն ալ թերեւս, եւ մարմինը խամաճիկի մը պէս պիտի փլչէր: Արեւին եւ անձրեւներուն շոյանքէն փրտտած կապերը ինքնաբերաբար պիտի քակուէին եւ իր կմախքը յանկարծ պիտի իջնար դեպին, յոր աղմուկով մը, եւ իր ոսկորները պիտի խառնուէին իր ոտքին տակ գտնուող ոսկորներուն: Օր մը, ճամբորդներ պիտի անցնէին այս վայրէն, ծանօթներ թերեւս, եւ նայուածք մը իսկ պիտի շնորհէին իր անհիշներուն:

Բայց արդէն արեւը բարձրացած էր Հորիզոնին վրայ եւ կ'այրէր իր բերքը: Դարձաւ դէպի ալ: Ձեր ճանշար այն մարդը, որ կը մեռնէր իր զովը, բայց իր արիւնէն էր, իր միտէն: Իրարու հետ փոխանակեցին տխուր ժպիտ մը:

Բնագաւառը, Միքայէլ փորձեց իր կապուած ձեռքերը ազատել: Այնքան տկարացած էր, որ չկրցաւ իրարմէ բաժնել այդ խլիլած քուրջի կտորները: Խորքին մէջ չէր ուզեր որ կապերը քակուին, որովհետեւ չէր ուզեր բաժնուիլ իր ճակատադրէն: Ձէր ուզեր որք ձգել այս կմախքացած ծառը: Հասկցած էր, որ ամէնէն դիւրին մեռնելու ձեւը այս էր: Եթէ բաժնուէր ծառէն, կրկին պիտի իջնար դժոխք: Դժոխքը ամէն տեղ էր. բացի այս մեռած ծառին արգահատող բազուկներէն: Մահն էր իր գերագոյն նպատակը,

տակը, բայց մինչեւ անոր դիրկը հասնելը, ճամբաները բազմաթիւ էին, դողդոթայի ճամբայէն մինչեւ անձնապանու-թեան զահալիժուածը: Ինչո՞ւ փոխել ճանապարհը, երբ արդէն գողգոթայի բլուրին գրեթէ գազաթը հասած էր:

«

Իայց արեւը սկսած էր, ճիւղը դիմացէն, իր կատաղի ճառագայթներով ալրելի բերբերը: Կրկին զոցեց աչքերը, շտեմնելու համար վերը սաւառնող գիշատիչ թռչունները, որոնք, գիշերը մարտելէ ետք իրենց առատ ճաշը, կրկին կը մօտենային անհատնում սեղանին: Այնքան վարժուած էին կոցուժեան, որ չզոհանալով դիակները բզկտելէ, կը յարձակէին նաեւ սղջերու վրայ: Թառած՝ դանկերու գազաթը, կը կացահարէին միտերը եւ շերտ-շերտ կուլ կու տային, արիւնի կաթիլներ սրահելով ալ ու ձախ:

Պանկարծ շատակեր երամները սկըսան բաժնուել իրենց զոհերէն ու թեւերունին ծանրօրէն թափահարելով՝ բարձրացան քարացած կապոյտին գնդիթը: Միքայէլ աչքերը բացաւ: Ուսմբ մը գինւորներ, ենթասպայի մը առաջնորդութեամբ կը մագլցէին բլուրը: Հինգ հաստին ձեռքը կային մտրակներ, միւս հինգին ձեռքը՝ երկաթէ ձողեր: Հասան տաջին խաչալին քովը եւ իրենց ձեռքը բռնած մտրակով եւ ձողով մէկուկան հարուած տուին մերկ մարմնին վրայ եւ անցան յաջորդին: Եթէ ենթական մեռած էր, կը քակէին կապերը եւ դիակը ծանր պարկի մը սէս դետին կ'իյնար: Մտուր կը մնար առանձին, որբ եւ այլի մօր մը սէս:

Միքայէլ դարմացաւ, թէ ինչո՞ւ այդ վայրագ մարդիկը կը գոհանային մէկական հարուած տալով, որ այնքան վարպետ ու անյագ դարձած էին չարչարելու արուեստին մէջ: Բայց յետոյ, տեսնելով անոնց յոգնած դէմքերը, հասկցաւ որ անոնք հրահանգ ստացած էին իրենց ուժերը խնայելու, որպէսզի ունէր դատապարտեալ չզրկուէ իրեն բաժին ինկող արդար շարժարանքէն: Աշխատող բա-

ղուկներու պակաս կար այդ շրջաններուն մէջ:

Միքայէլ ստացաւ տասը հարուածները եւ գոհունակութիւն մը զգաց: Եւ նայելով հեռացող տասը խեղճուկրակ գինուորներուն, գէթաց անոնց ճակատագրին վրան: Անոնք դարեր առաջ, ժամանակներու սկիզբէն իսկ սահմանուած էին դահիճ ազգի մը ոճրուկործ զուակները ըլլալու, քալելու միւս գլուխին կախ, ամչնալով աստղերու լոյսէն: Պիտի ջանային ջաղացքի ծանր քար մը դետեղել իրենց խղճին ցայտաղբիւրին վրայ եւ վերջ ի վերջոյ պիտի հասկնային, որ իրենց անկարելի է ազատուել վերը փայլող արեւի սկաւառակէն կաթող անմեղ արիւնէն: Թէ՛ իրենց քալած հողին տակը, տակաւին չծնած հրեշտակ-մանուկներուն ողբը սիտի չհեռանայ իրենց սականջէն:

Միքայէլ յանկարծ պարապուեցին մը զգաց ներսդին: Ստամոքսը կծկուեցաւ, աչքերը մթապնեցան եւ ստիպուեցաւ ինքզինքը յանձնել տկարութեան անդունդին, որ գինք կը քաշէր դէպի վար, կոյուղիի մը բերին մէջ խուժող աղտոտ ջուրին սէս:

Քիչ մը հանդարտելէ ետք, կրկին նայեցաւ դիմացը:

Կարաւաններ, կարաւաններ շարունակ:

Թորդո՞մ մանրամասնօրէն չէր կրնար տեսնել հեռուէն անցնող մահուան կարաւանները: Բայց, երբեմն, փոշիի ամպ մը ցոյց կու տար անոնց գորշ զանգուածը արեւէն ճեղմկած աւազներուն վրայ:

Արդեօք ո՞ր մէկուն մէջ կը գտնուէին իր սիրելիները: Ո՞ր մէկուն հետ քալած էին մայրը, քոյրը, փոքրիկ եղբայրը: Ո՞ր մէկուն հետ մարտիրոսացած էր ըր աչքին լոյսը՝ Զապէլը: Ինք դարձած էր անբան անասուն մը, որ զլալով հանդերձ ճակատագրերը, կը համակերպի անոր, կը հետեւի ընկերներուն խումբին, որոնք կը քուլին դէպի սպանդանոց:

Փորձեց պոռալ անունը իր սիրածին, իր սիրածներուն, բայց վանկերը կը մեռնէին իր չորցած կոկորդին մէջ:

Ամէն կողմէ հոն կը խուժէին կարուանները, Վասիորի եւ Սեւ ծովու ափերէն, Արաքսի եւ Եփրատի հովիտներէն, Արարատի եւ Սիփանի ստորոտէն: Անոնք կու գային Պուրոսայէն, Գոնիայէն, Իգմիլիէն, Կեսարիայէն, Սվազէն, Մարաշէն, Պիթիւսէն եւ Էրզրումէն, Թաղուլու համար Ռասուլ-Այնի եւ Տէր-Ջօրի աւազներուն մէջ: Երկու միլիոն մարդկային տրջառ՝ առանց հովիւի, հրուած, կոտորակուած, ծախուած եւ բռնաբարուած:

Հոն՝ կամուրջը անկուշտ հրէշի մը պէս, վայրագ Մոլոխի մը պէս կը սպասէր իր զոհերուն: Անդադար կը պահանջէր հայրձարիւն, հայու միս եւ հայու սովոր:

Բայց այսօր, իր գեղի ընկերները աւար շուրջը մը շրջաններու պէս շէն երթուակներ եւ ճամբար տանող ճամբուն վրայ կը տիրէր կատարեալ ամայութիւն: Մեռելային լուսթիւն մը կը տիրէր այս մեռելատանին վրայ:

Արեւը կը շարունակէր բարձրանալ եւ ինք կը թմրէր, կ'անէտնար ու կը ծոռնար: Բոլոր միկանները եւ շէնքերը վերածուած էին անզգայ միսի: Ի՞նչ հասնելի էր մնալ այսպէս, ուրանալ կեանքը եւ դժոխքը եւ սպասել մահուան թեթեւ ու հեշտութիւն: Քայլերուն: Ուրանալ կեանքը: Երբեմն իր դէմը կը ջցուէր մոռյլ ու լինդի, փուշերով ծածկուած տունկի մը պէս, որուն մութ տերեւներուն ետեւը կը պահուարին զոյնզոյն թունաւոր ծաղիկներ: Ուրանալ կեանքը, որ մարդու առջեւ կը բանայ անծանօթ դրախտներ, կեանքը անհամ, վայրագ, խորհրդաւոր եւ առինքնող միանգամայն, որ աւելի քողոյց կը թուի, քան ամէնէն զեղեցիկ մահը:

Միքայէլ անշտոժ սպասեց, որ արեւը հասնի իր գաղաթնակէտին: Պրկեց բռունցքները, մոռցաւ իրեն սպասող դժոխքը, շուրջի սպանդանոցը, պրկեց միկանները, հրեց դատաւանները եւ թուլցուց ձեռքերը ճգմող կապերը:

Ճիշդ այն ըսպէին, վարէն բարձրացաւ խուժիտը մը, քան հազար բերան-

ներէ բարձրացող աղաղակ մը, ուր խտացուած էր մարդկային բոլոր զգացումները՝ ատելութիւն, սարսափ, եւ ուրախութիւն: Միքայէլ ուշի ուշով նայեցաւ ճամբարին կողմը:

»

Ամբողջ գիշերը, Թորդոմ աչքերը չէր պացած: Վահանին եւ Միքայէլին տեղաբը հիմա երկնցած էին ուրիշ երկու մարմիններ, երկու անծանօթ ընկերներ, որոնց հետ կարելի էր բառ մը իսկ փոխանակել, ոգեկոշելով նոյն անցեալը: Ապրած էր անոնց շունչով, անոնց յայտնով, անոնց երազներով: Հիմա ապրելը դարձած էր անյոյս եւ սպարդիւն մթնշաղ մը, փապուղի մը դարձողարձիկ, ուր քալելը երբեք պիտի չյանգէր ելքի մը, լուսաւոր պատուհանի մը: Պէտք էր ինք ու հետեւէր իր երկու ընկերներուն, մեռնէր:

— Կ'երդնում գիակեր վըրայ, որ վրէժըդ պիտի լուծեմ, — ըսած էր, Վահանին խոյխոյղումէն ետքը:

Այդ գաղափարը միահեծան կը տիրէր իր մտքին վրայ: Պէտք է պատուէին Վահանին եւ Միքայէլին դահիճները: Մինչեւ այդ օրը, զուտ կեցած էր, խուսափելով խենթ արարքներէ, որպէսզի իր պատճառով չվնասուին իր խեղճ ընկերները: Սակայն հիմա ի՞նչ որ աչք ընէր, պիտի չվնասէր ուէ մէկուն, աւելի պիտի չվնասարանար տիրող կացութիւնը:

Թորդոմ ձեռքը պտտացուց հողին վըրայ. բան մը կը փնտռէր, բայց ստորուկներուն խստիւ արգիլուած էր մետաղէ ո՛րեւէ առարկայ պահել իրենց մօտ: Բահեքը, քրիշները, երկօտիները կը մեռային կամուրջին մօտ: Թորդոմ ափ մը տուազ առաւ ու սեղմեց բռունցքին մէջ: Կրկին սկսաւ մտածել: Մատներով կրկին սկսաւ շոշափել դետինը, մօտեցան այն քարին, որ իրեն կը ծառայէր իր բարձ: Զայն անշարժացնելու համար, մէկ ծալքը դրուած. էր խոշոր խիճ մը: Խիճը դուրս քաշեց, երկար էր եւ սուր, տեսակ մը նախնական դաշոյն, նման այն զէնքերուն, զորս կը գործածէր նախամարտը:

Սեղմեց ափին մէջ, հասա կողմէն: Սուր ու բարակ մասը կը մնար դուրս:

Եւ եղաւ առաւօտ, եւ եղաւ լոյս մը, որ կը նմանէր միջշագի:

Քորզոմ կանգնած էր քսան հազար ստրուկ ընկերներուն առաջին շարքը: Գլուխը վերցուց: Դիմացը, բլուրներէն մէկուն վրայ, իր սիրելի Միքայէլը կապուած էր խաչի մը վրայ եւ կը տառապէր Գրիտոսի մը պէս: Ձիբար շէն կընար տեսնել, սակայն իրենց սրտերը կը բարախէին նոյն կշռոյթով, նոյն բոցը կը լուսաւորէր իրենց հոգին:

Այն տխրութիւնը, որ կը ծորէր Միքայէլի տառապող աչքերէն, կը ծփար նաեւ Քորզոմի բերքերուն մէջ: Սակայն Քորզոմի աչքերը տխուր չմնացին երկար: Անոնց մէջ ծնաւ նշոյլ մը, տեսակ մը աննիթական կրակ, որ կամաց-կամաց լոյսի կը վերածուէր, կը հրահրուէր ներքին սովորով մը, կը վերածուէր ջահի:

Հրամանատարը կեցած էր դէմը, գոհունակ ու գոռոզ, ինչպէս միշտ: Որքան շատ թիւով հայեր մեռնէին, այնքան կ'աւելնար իր հրեանքը: Եթէ իրմէ հաշիւ չպանջէին, եթէ կամուրջի շինութիւնը անհրաժեշտ չըլլար, մէկ անգամ մէն ողջ-ողջ թագել կամ այրել կու տար այս քսան հազար կեամբուները, որոնց ճակատալիբր կոխում ունէր իր բացարձակ կամքէն:

Ճիշդ այն պահուն, երբ Հասան քաշելու հրամանը պիտի տար, գերբնեղէն մէկը գետին ինկաւ: Վաթսուն տարեկան ծերունի մըն էր, ճերմակ գլուխով, բարի եւ լուկեաց: Երբեք տրտունջ մը չէր լսուած բերնէն: Կը տառապէր ու կը լռէր, յուսարով՝ թէ օր մը կրնայ կրկին գրկել ու համբուրել իր սեւաշեայ թոռնիկը: Երբ պահակներէն մէկը զինք հարուածէր.

— Աստուած ուժ տայ բազուկներուդ, Աստուած զաւակներուդ ցաւ ու վիշտ լտայ, — կ'ըսէր անասնոցած դահիճին: Հիմա, սակայն, եռանդը չունէր մաղթանքներ ընելու: Ուժերը զինք լքած էին յանկարծ, սրունքները քուրջերու

պէս վրած էին մերժելով շարժել իր թիթեւ մարմինը:

Երկու պահակներ զինք բռնեցին թեւերէն եւ քաշքշեցին շարքերէն դուրս: Սպաներէն մէկը փորձեց զինք ոտքի հանել, կից մը տալով կողին: Մերունին աստիճանաւորին երեսը նայեցաւ, այնպիսի աղաչող ու տխուր նայուածքով մը, որ թուրքը քանի մը քայլ հեռացաւ:

— Կ'աղայի՛՛մ, — կը շնջար ծերունին, — գիտ անշարժ ձգեցէ՛ք գետին, հինգ վայրկեան միայն: Աւելի չեմ ուշացներ:

Երբորդ պահակ մը, այս լսելով կատգեցաւ ու բերը իջեցուց կմախքին վրայ, որուն սակորները կը կոտորուէին, կը փշուէին: Մերունին աղաղակ մը արձակեց եւ երկուքի ծալուած՝ սկսաւ դետնին վրայ դալարուել:

Չայնը տակաւին չէր մարած, երբ շարքերուն մէջէն լսուեցաւ մոնչիւն մը, վիրաւորուած առիւծի կատաղութեան եւ ցաւի ճիւղ եւ անոր պատասխանեց թուրքերուն միահամուռ աղաղակը: Քորզոմ յովազի մը պէս տեղէն խոյսցաւ, ձեռքը բռնած քարէ դաշոյն մը: Պահակները իբրար անցան, հրացանները վար առին իրենց ուսերէն, բայց արդէն Քորզոմ կը գտնուէր Հասանին առջեւ: Մէկ ձեռքով լսնեց անոր մազերը ու գլուխը վար քաշեց, միւս ձեռքով, զինուած քարէ դաշոյնով հարուած մը տուաւ անոր վիզին եւ կտրեց անոր կրկնորդ ծոծրակէն մինչեւ խոյսփողը: Հասան դետին ինկաւ ու սկսաւ տալուկիլ: Սեւ արիւնը կը հոսէր ու կը սարածուէր ճիշդ այն տեղը, ուր քանի մը օր առաջ խողխողել տուած էր հարիւրի լափ անմեղներ:

Ձինուորները խուժեցին Քորզոմին վրայ...

— Շուտ մի՛ սպաննէք, — պոռաց հրամանատարը, — իր ուզածն ալ այդ է: Չայն կուպեցէք վերը բլուրի ջիցերէն մէկուն վրայ:

Եւ քսան հազար կայանաւորներ զարմացած, շփոթած, շուարած սկնապիւղ կը զիտէին այս անհաւատարի տեսարանը: Կեամբ մը յանդգնած էր հարուածել եւ սպաննել թուրք պահակապետը: Եւ պա-



տիժը պիտի ըլլար միւս բոլորին պատիժը, անսեղներուն պատիժը:

Թորգոմ արիւնլուայ ոտքի կանգնեցաւ եւ պոռաց.

— Տղա՛ք, Հայե՛ր, մահը մահ է, ինձի՛ պէս ըրէ՛ք, վրէժը լուծեցէ՛ք ձեր սրբելիներուն... փրկուեցէ՛ք այո զոտի՛քէն...

Փոթորիկ մը փշեց կարծես այս քսան հազար հրու եւ հնազանդ դրաստներուն վրայ, զլուինները շարժեցան հասուն հասկերու պէս, բռունցքները սեղմուեցան եւ իրենց ներսէն պոթիկաց խուլ եւ անարկու ազաղակ մը, Եւ մարդկային պարբուսը շարժեցաւ առաջ, մինչ հրացանները սկսած էին շաշիւ: Եւ ինչպէս հսկայ մակընթացութեան մը մղումով ծոփուն ջուրերը վեր կը բարձրանան, կը խոյանան դէպի առաջ ու դրոհ կու տան ծոփափի ապառաժներուն դէմ, այդպէս քսան հազար սորուկները, պարզած մահուան դրօշը, արհամարհելով սուր, սուրի ու փամփուշտ՝ տարածուեցան դէպի առաջ, դէպի իրենց դահիճները, որոնք հիմա զարհուրած այս յանկարծաւոր պոթիկումէն, իրենց կեանքը փրկելու համար քաջագործութիւններ կ'ընէին: Հրացաններուն աղուկը լսելով, զօրանցէն գինուորներ սկսան դուրս գալ, օճեկու համար իրենց ընկերներուն, սակայն մարդկային ծովը արդէն իր զանդուածին մէջ առած ու խեղճած էր յաւաքապահ պահակները:

Յանկարծ գնդացիները սկսան շաշիւ փայտէ աշտարակներու պատշգամէն: Իայց մարդկային ալիքը կանգ չէր առնէր: Կը յառաջանար միշտ եւ դիակները կ'իյնային եւ դեռինը կը ծածկէին մարդկային գորգով մը: Զօրանցէն կ'լլող գինուորները դիւրք բռնած՝ սկսած էին կրակել: Խուժանը սահեցաւ դէպի այն կողմը: Եւ տաղաւարները սկսան փլիլ խաւաքորտէ դիակներու պէս: Զինուորները սկսան նահանջել, յարձակողները արագացուցին իրենց ընթացքը: Քանդուցին փլաթիւները, իրենց ձեռքերով խեղդեցին այն գինուորները, որոնք տակաւին կը զիմադրէին: Միայն գնդացիներն

ըր կը շարունակէին շաշիւ: Անոնց դէմ անկարելի էր դրոհ տալ: Վերապրողները անցան ճամբարին սահմանները եւ ցրուեցան բաց դաշտերու մէջ...

Իժոխքը վերջ գտած էր իրենց համար: Իրենց մեռելներուն վրէժը կատարելապէս լուծած էին: Հազիւ երկու հազար վերապրողներ կային: Մնացեալը փռուած էր անշարժ այն հողին վրայ, որ ամէն ժամ կուտանը եղած էր իրենց շարժարաններուն: Մահը մահ է, պոռացած էր Թորգոմ: Հրամանատարին, սպաններուն եւ պահակներուն դիակները խառնուած էին իրենց զօհերու դիակներուն: Միայն աշտարակներուն վրայ ապաստանած գինուորները ողջ էին, քանի մը տասնեակ: Մահուան կամուրջին ճամբարը դադարած էր գոյութին ունեկալէ: Մահուան կամուրջը պիտի մնար անաւարտ. Այս էր սարուկներուն յաղթանակը:

•••

Միքայէլ վերէն գիտեց այս բոլոր անցուղարձերը, սակայն եբբ լուցին գնդացիները, ճամբարին բացութեան վրայ ամէն օրուան պէս ստրուկ ընկերները անշարժ կը սպասէին: Երկար մնացին այդպէս, ո՛չ հրամանատար կար, ո՛չ պահակ, ո՛չ շարժում:

Միքայէլ ձեռքերը ազատեց: Քակեց մարմինը ծառին միացնող զուրջը ու դիակի մը պէս ինկաւ գետին, շրջած սակորներուն վրայ: Պահ մը մնաց անշարժ, փարեցաւ հողին՝ անկէ ուժ տանելու համար ու քակեց ոտքերը: Մտքը մնաց տանձին, բաժնուած իր սիրելի զոհէն ու սկսաւ սղթալ:

Միքայէլ, սողալով հեռացաւ ծառէն, հեռացաւ բլուրէն, հեռացաւ ճամբարէն, հեռացաւ արիւնոզ կամուրջէն:

Փրկուած չէր տակաւին վտանգներէ, սակայն ողջ էր ու ազատ: Մտածեց միւս ընկերները ազատել: Մէկիկ-մէկիկ մօտեցաւ անոնց, որոնք տակաւին նոր կապուած էին: Կանչեց, խօսեցաւ, ցնցեց: Բայց ոչ մէկ պատասխան ստացաւ: Բռնորն ալ մեռած էին:

Միջայէլ մագլցեցաւ ամէնէն բարձր բլուրը, եւ անոր դադաթիւն վրայ ծունկի դառնալով՝ սկսաւ աղօթել իր մեռած ընկերներուն համար:

Ճ

Մարդ մը առանձին՝ կը քալէր արեւին հետ:

Պողպատէ շնորհ մը պէս, կրկուցի կը բաժնէր յանցողաբար մոլորակը, կը սլոնէր տառապանքի դիմ մը անհունութեան վրայ: Մարդ մը մերկ կը քալէր անապատին մէջ:

Ան կ'երթար՝ ինչպէս ուխտաւոր մը, որ կրօննցուցած է մախաղը, ցուպը եւ սանտալները: Ան կը քալէր մերկ՝ ինչպէս մամուլի որսորդները, ինչպէս Ադամը՝ արարչութեան վեցերորդ օրը, ետին ձգած հազարաւոր որբ դիակները, որոնք վէրք մը կը կազմէին կրկրազունդին մակերեսը:

Փողոցներու, հրապարակներու, ճամբաներու եզրերը, ցորեններու զաշտերուն մէջ, անապատի աւազներուն վրայ, ծովերու եւ դեղերու շուքերուն խառնուած, միլիոնաւոր դիակներ իրեն կը սպառէին: Պիտի մէկիկ-մէկիկ համբէր անշարժ մարմինները, որոշէր անճանաչելի դէմքերը, իրարու ջով բերէր անդամատուած մանուկները: Պիտի կշռէր անոնց թաղուած արեան իւրաքանչիւրի կաթիլը եւ սրտուած օրը հաշիւ պիտի ներկայացնէր ըրտր այն մարդոց, որոնք ոճիւրդ դործեւէ հոռ, սպաստանած խաւարներու վարագոյրին տակ՝ կը խնայէին զսհերու անկարողութեան վրայ:

Ան կը քալէր արագ, կարծես կը տեսնէր արդէն նպատակակէտը: Ան կ'երթար ուղիղ դէպի Ունայնութիւնը, դէպի Համբար մը, աւելի զարհուրելի, քան այրուածք մը:

Քոսն հազար ընկերները մեռած էին դիշերուան սկիզբէն առաջ: Յուդարկաւորութեան հողը ձգած էր Աստուծոյ, որ պիտի հրամայէր Հովերուն, որպէսզի փչին եւ տաք աւազով ծածկեն դիակները:

Մարդը ոչ մէկ անգամ դուրսը դարձուցած էր դէպի ճամբորդ, դէպի բուր-

նիրը, ուր այլեւս մինակ մնացած խաչը կը հսկէին մեռելներու վրայ: Ան կը քալէր ուրիշ կողմ, Հոն՝ ուր տակաւին մեռնողներ կային:

Նախ կանչած էր իր երկու ընկերներուն անունը, յետոյ իր եղբորը, իր քրոջը, իր հօրը եւ իր մօրը: Բոլորն ալ մահուած ըլլալու էին, որովհետեւ ամէն անգամ, որ անուն մը կը թուէր բերնէն, շոր օտը կը թրթոր իր շուրջը, առանց արձագանք մը բերելու: Իր սիրուհիին անունին պատասխանած էր տկար աւաշ մը:

Ան մերկ էր ու առանձին Աստուծոյ առջև: Ոչ շունչ ունէր եւ ոչ թուք՝ բերնին մէջ, բայց անուն մը տեւաբար կը թրթորացնէր իր շրթունքները:

Հորիզոնին անգութ դիմը գինք կը հրախրէր առաջանալու, եւ ինք կանգ չէր կրնար առնել, որովհետեւ կ'ողջէր միշտ աւելի հեռուները տարածել այն բառը, որ օդին մէջ կը շալէր յաղթական զբօշակի մը պէս:

Մերկ ու աննիւթացած մարմինը շուք չէր սփռել շարժարուած աւազներու խառնուածներուն վրայ: Կապոյտ անհունը եւ բացազատող գունդը կը ճգմէին գինք դորշ ու միապաղաղ տարածութեան վրայ, որ կը տանէր դէպի անդենականը:


Կը քալէր, միշտ պոռոպով անուն մը, որ կը կենդանացնէր անհիւրընկալ անդատաններուն ամայութիւնը, եւ վայրագ արեւը եւ գոռոզ Հորիզոնը կը հիանային իր յանդուութեանը վրայ:

Մարդը կը քալէր միշտ մինակ ու մերկ արեւին տակ, երգելով այնքան քաղցր ու հպարտ երգ մը, որ զայն լսելով անապատը կը լուէր սիրահարուած, եւ մեռելները կրկին քուն կը մտնէին, ինչպէս մանուկ մը, որ կը կծկուի մօրը գիրկին մէջ:

Մարդը տկար էր, մերկ էր, ոչնչութիւն մըն էր, բայց իր ձայնը սկսած էր զուղղացնել դահիճներուն ամբարկու պարխպները եւ կենդանացնել Ունայնութեան Արիերը:

Ն. Գ.

(Վերջ երկրորդ մասի)



4. ՍԱՍՈՒՆԻ

**ԱԶԳԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ  
ԻՐԱՒԱԿԱՐԳԻՆ ՏԱԿ**

Ազգային տագնապը տեւական երեսոյք մը եղաւ հարերդային Միութեան ամբողջ տարածքին:

1920-էն առիւն, մօտ յիսուն տարիներէ ի վեր, ազգային խաւ հակամարտութիւնները անպտտեցին Ռուսաստանի հարկզմը: Բայց փոքորկայի եւ արիւնոտ կարկտահարումները, Սոսայինի տիրապետութեան երեսուն տարիներուն, մարդը սպաննեցին երկու հարիւր միլիոն ազգաբնակչութեան մէջ, այն աստիճան, որ *ազգային* եւ մարդկային մտածումները եւ մտահոգութիւնը, արեան հեղեղին եւ անմարդկային տանջանքներու ընթացքին՝ անըմբռնելի շփոթութիւն մը նկատուեցաւ:

Կը մնար անատունը եւ անխուստփելի մահը: Անատունը լծգու չաւնէր, իսկ մահը վերջակէտն էր երազին, աշխարհահայեացքին եւ միւս աւ ասկարէ կազմուած մարդուն: Սոսայինի մահէն ետք, փաւ կու գար արիւնոտ կտառոյցը: Երեսնամեայ աղիտաղի կեանքի պատկերը, *անձի պաշտամունքը*, հրուշշեի ճառով կը զնդակահարուէր: Այս շեփարին ձայնը կը լսուէր հարերդային Միութեան ամբողջ տարածքին, քէ՛ մարդու եւ քէ՛ ազգերու նուագագոյն ազատութեան յայտեր ներշնչելով:

Այս համառօտ պատկերը, լռելեայն, պարզ նշմարութիւն մըն է եւ իմանալի խորերդային մարդուն համար: Փաստական սպացոյցները տոտութեամբ կարելի է գտնել համայնավար գրականութեան հազարաւոր էջերուն մէջ, հակառակ տարբ տալու հարկադրանքին: Անցեալի եւ ներկայի դիկավար համայնավարները մեզմէ աւելի ծանօթ են այս *խորզութեան*:

Անցած յիսնամեակի կեանքը կշիռի արմնով, կարելի է հաստատել, քէ՛ արական վարչակարգը եւ քաղեքնի կենցաղը քայքայուած է, ինչ որ Հոկտեմբերեան յեղափոխութեան յազքանակի սպացոյցն է, որով կը պարծեման համայնավարները:

Սակայն, քայքայուած կտորոցին տեղ հաստատուած ընկերվարութիւնը կամ համայնավարութիւնը ընկերային եւ մարդկային բարեկեցիկ վիճակ մը չկրցաւ ստեղծել: Յիսուն տարիներու ընթացքին անընդհատ նահանջեցին բարեկեցութեան մակարտին վրայ, միշտ արիւնատ քարկերով:

Սովետական հասարակութիւնը, ճարեբաւ բռնակալութենէն ազատած՝ ենթարկուած էր ստալինեան անչափելի արիւնատ բռնակալութեան: Ու համայնավարութիւնը կեղծիք մը նկատուեցաւ երկու հարիւր միլիոնէ աւելի բազմութեան կողմէ, որ գրուելը կայտած՝ տարաւ այս տաժանէք, միշտ լաւ օրերուն սպասելով:

| Օտար  | 54   | 40%  | —      |
| <b>(Երկրորդական)</b>  |      |      |        |
| Հայ   | 69   | 28%  | —      |
| Օտար  | 58   | 39%  | —      |
| <b>(Համալսարան)</b>   |      |      |        |
| Ամերիկյան   | 63.5 | 33%  | —      |
| Ֆրանսիական  | 67.5 | 28%  | —      |
| Լիբանանյան  | —    | —    | —      |
| <b>Հայ դասը կը հետաքրքրե՞ ձեզ</b>   |      |      |        |
| Այո   | 67   | 31%  | —      |
| Ոչ  | 46   | 48%  | —      |
| Երբեմն  | 100% | —    | —      |
| <b>Հայ դասը լուծման կարելիություններն են</b><br><b>հետոն կը հաշտու՞նք</b>                                     |      |      |        |
| Այո   | 70   | 28%  | —      |
| Ոչ  | 57   | 38%  | —      |
| Ինչ մը  | 77   | 22%  | —      |
| <b>Հայ դասը լուծման համար եւ ընդհանրապէս հայ կեանքի մէջ կը հաշտու՞նք</b><br><b>կուսակցութիւններու դերին</b>   |      |      |        |
| Այո   | 75   | 23%  | —      |
| Ոչ  | 49   | 47%  | —      |
| Ինչ մը  | 70   | 20%  | —      |
| <b>Եթէ այո, հայ կեանքին ներս գործող</b><br><b>հետեւեալ կուսակցութիւններէն ո՞ր</b><br><b>մէկուն կը համակրէ</b> |      |      |        |
| Ս. Դ. Հ. Կ.   | 66   | 22%  | —      |
| Հ. Յ. Գ.  | 78   | 21%  | —      |
| Ռամկավար  | 74   | 26%  | —      |
| Համայնավար  | 66   | 33%  | —      |
| Այլ կարելիություններ  | 62   | 38%  | —      |
| Ոչ մէկուն   | 52   | 42%  | —      |



|                |     |    |     |   |
|----------------|-----|----|-----|---|
| Կուսակցական էջ | Այս | 94 | 6%  | — |
|                | Ոչ  | 60 | 36% | — |

**31.— ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ ՈՒՆԻՓ**

|   |                                      |                |               |                 |
|---|--------------------------------------|----------------|---------------|-----------------|
| <b>Ընդհանուր արդիւնքներ</b>                 |                                      | <b>Այս</b>     | <b>Ոչ</b>     | <b>Գիչ վը</b>   |
|   |                                      | 72             | 22            | 2%              |
| <b>Յաճախած վարժարաններ</b><br>(Նախակրթարան) | Հայ<br>Օտար                          | 78<br>76       | 23<br>22%     | 2%<br>—         |
| (Երկրորդական)                               | Հայ<br>Օտար                          | 72<br>76       | 24<br>21%     | 2%<br>—         |
| (Համալսարան)                                | Ամերիկեան<br>Ֆրանսական<br>Լիբանանեան | 75<br>68<br>—  | 22<br>29<br>— | 2%<br>2%<br>—   |
| <b>Յկեղեցական կեանքին կը մասնակցի՞ք</b>     | Այս<br>Ոչ<br>Երբեմն                  | 95<br>48<br>80 | 3<br>49<br>0  | 1%<br>2%<br>20% |

**32.— ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՓ**

|   |                                      |               |                 |                 |
|---|--------------------------------------|---------------|-----------------|-----------------|
| <b>Ընդհանուր արդիւնքներ</b>                 |                                      | <b>Այս</b>    | <b>Ոչ</b>       | <b>Երբեմն</b>   |
|   |                                      | 51            | 48              | 2%              |
| <b>Յաճախած վարժարաններ</b><br>(Նախակրթարան) | Հայ<br>Օտար                          | 52<br>52      | 45<br>43        | 2%<br>2%        |
| (Երկրորդական)                               | Հայ<br>Օտար                          | 49<br>58      | 46<br>39        | 2.5%<br>1%      |
| (Համալսարան)                                | Ամերիկեան<br>Ֆրանսական<br>Լիբանանեան | 53<br>51<br>— | 44<br>42<br>—   | 3%<br>2%<br>—   |
| <b>Կրօնական հաւատք ունի՞ք</b>               | Այս<br>Ոչ<br>Գիչ վը                  | 67<br>6<br>48 | 29<br>94%<br>48 | 2%<br>—<br>2.5% |

# KOUZNETSOV

« Comment et pourquoi j'ai fui la Russie soviétique »



J'ai été contraint de "travailler" pour la police La moindre minute de ma vie ne m'appartenait plus Tous les écrivains sont soumis aux mêmes brimades

Մեր նախորդ քիւով տուած էինք ճարտարագիտիչ ընտրելէ նոյն Կուզնեցովի կատարած առաջին յայտարարութիւնը ու խոստացած նայն ստեղծ ներկայ քիւով տայ օտար մասնաւոր մէջ իր ստորագրութեամբ լայն տեսած նոր յայտնութիւնները:

Արտասահմանի մէջ Կուզնեցովի երատարակութեան տուած այն գրութիւններուն ամենէն հետաքրքրականը այն բաժինն է սնտարակոյտ, որ Փիլմի վրայ տուածը եւ Ռուսիայէն հեռը բերուածն է եւ ուր կը պատմուի հոն տարուած դաճագոյն փորձառութիւնները:

Արեւմտեան աշխարհին ամենաօր չէ խորհրդային կարգաւարտին սակ տարած գրագէտին մզմուտը: Այստեղանցիկ, Կուզնեցովի օրագրութիւնը աշխարհի այն մասին մէջ անկէտագործող մարդուն կարգութեան մասին վարձաքաւորք մը ըլլալէ չի դադրիր: Յամբնուած ոչ մէկ ճեպագիր անկախի մնաց հոն եւ գրագէտները իրենց երկարատեւ երկունքին ծաղկկները նգմուած տեսնելու ոգրեքգութեան երբեկցէ գերտ չեղան: Կուզնեցովի երատարուէք հետեւանք էր այն կտրուքեան. «Որոշումներ գլխաւոր պատճառը յոյրն կորուստն է», պիտի ըսէր ինք: Յուսալէ ա յուստեստելէ յօցմած մարդաց ոգրեքգական մէկ ճիւղն է Կուզնեցովի պարկուտը...

# Կ Ո Ւ Զ Ն Ե Ց Ո Վ

ԻՆՉՊԷՍ  
ԵՒ ԻՆՉՈՒ  
ԽՈՅՍ ՏՈՒԻ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՈՒՌՍԻԱՅԵՆ



ՍՏԻՊԵՅԻՆ ՈՐ ՃԱՇԽԱՏԻՄ»  
ՈՍՏԻԱՆՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ԿԵԱՆՔԻՍ ՈՐԵՒԷ ՎԱՅՐԿԵԱՆԸ  
ԻՆՏԻ ԶԷՐ ՊԱՏԿԱՆԵՐ ԱՅԼԵԻՍ  
ԲՈՂՈՐ ԳՐՈՂՆԵՐԸ  
ԵՆԹԱԿԱՅ ԵՆ ՆՈՅՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԻՆ

Սովետական Միությունն ինչպես առաջին անգամը, այնպես էլ ներկայումս, զբաղված է իր անհատական կյանքի և ազատության հարցերով: Այսօր անհատական կյանքի և ազատության հարցերը դարձել են համարյա բոլորի մտածելու և խոսելու առարկա: Այսօր անհատական կյանքի և ազատության հարցերը դարձել են համարյա բոլորի մտածելու և խոսելու առարկա: Այսօր անհատական կյանքի և ազատության հարցերը դարձել են համարյա բոլորի մտածելու և խոսելու առարկա:

Անցյալ շաբաթ, երբ ԽՍՀՄ-ում դադարեցին ֆիլմերում օրինակները այնքան կ'անցնեին, սկսեցին կարգավորվել հարցերը և այն հարկադրանքները, որ ըստ իմաստասիրների վերաբերման են: Այսօր անհատական կյանքի և ազատության հարցերը դարձել են համարյա բոլորի մտածելու և խոսելու առարկա: Այսօր անհատական կյանքի և ազատության հարցերը դարձել են համարյա բոլորի մտածելու և խոսելու առարկա:

Նկատելի է իմ հարցերը այն մտածելով, որ օր մը կ'ընթացի օգուտն Ելլալ ինձի, երբ Մեծն իրենց օրը մեզ համար իմ ազատության վերջնական վրայ: Բայց կը մտածեմ, որ դուք ինձի հետ հաշտության պիտի գտնուիք ինչպես առարկայի բարեկեցության, այն իմաստով որ, ամեն ինչիս պիտի լինի և՛ իմ համար ինչպես մտածելով: Ա. ԱՆՏՈՆ

1980 — Օգոստոս

ԱՆԱԹՈՒԻ ԿՈՒՋՆԵՑՈՎ

Ա.

**ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՈՒՐԻՇ ԱՇԽԱՐՀԷ ՄԸ**

ԳԱՐՈՒՆ — 1967

Բռնատէրի մը կամ Փաշական սարսափադրու բէժիմին տակ բնաւ չապրած մարդոց համար գոյուար է ըմբռնել այն մեծ լուսթիւնը, որ չորսած է Սովետ Միութեան վրայ: Այն միակ անմէրը, որոնք իրաւունք ունին այսօր խօսելու: Ռուսիոյ մէջ՝ ստալսոսնէրն են, անոնք՝ որոնք թոյլ տուած են որ լուան իրենց ուղեղը կամ անոնք, որոնք պարզապէս ապուշներ են:

Այսօր, Ռուսիոյ մէջ, գործնականօրէն գրականութիւն չկայ այլևս, ոչ ալ որակաւոր գրուածք: Կայ միայն գրականութեան մէկ ճիւղը, — փրփականտը: Գաղաքական կամ ընկերային դրութեան դէմ ուղղուած քննադատական ումէն խօսք, նուազագոյն կասկած մը բովանդակող ամէն արտայայտութիւն անկարելի են: Այդ պատճառով՝ գրական քննադատութիւն չկայ Սովետ Ռուսիոյ մէջ:

Ասիկա ոչ մէկ նորութիւն կը բովանդակէ: Մարդկային պատմութեան ընթացքին, գոյութիւն ունեցած են բռնատիրական բազմաթիւ բիրտ շէրջաններ: Բայց երբեք չէ եղած բռնատիրութիւն մը, որ այսչափ դատան խտութեամբ եւ այսչափ մեծ թիւով մարդիկ առած ըլլայ իր ցանցին մէջ, որքան առած է այսօր Սովետ Միութիւնը:

Բնական փափաքներուն այս ամէնէն հիմնական բանը, ըսել ճշմարտութիւնը, կամ նուազագոյնը՝ ըսել ինչ որ կը մտածես, մոռցուած է եւ վերածուած անիրագործելի երազի մը:

ԱՄՍՈՒ — 1967

Սովետ Միութիւնը Փաշական պետութիւն մըն է: Աշխարհի մտաւորականներուն մէջ, Ռուսիոյ մտաւորականները ամենադժբախտ մտաւորականներն են, եթէ ոչ ամէնէն դժբախտները: Ես բնաւ նկատի չունիմ այն շնտկան ու վարձկան ապուշները, զորս կ'արտագրէ սովետական սխտեմբ: Կ'առնեմ «մաստիկիկնցիտ» բառը իր սկզբնական իմաստին մէջ:

Ինտելիկենցիային մաս կտրմելով, զրոյը կը դռնուի առանձնապէս ցաւագին կացութեան մը մէջ: Քանի որ մտաւորական մը կրնայ տեսնել եւ հասկնալ շատ մը բաներ, բայց լռել, մինչ գրողը, իր կոչումին իսկ բռնութիւնով՝ պարտաւոր է պոռալ. «Ձեմ կրնար լռել»: Սակայն, բառին իսկական առումով՝ գրաւէա մը ունենալ Ռուսիոյ մէջ նոյնչափ անըմբռնելի է, որքան վայրի առիւծ մը կրկէսին մէջ: Իրականութեան մէջ, Ռուսիա հսկայական կրկէս մըն է, ուր կենդանիները գրուած են վանդակներու մէջ, իսկ ընկերութեան կեանքը բեմական երկարատեւ ներկայացում մըն է:

ԱՇՈՒՆ — 1967

Ինծի համար տխուր օր մըն էր այն օրը, երբ ծնայ Ռուսիա: Աշխարհը անսուսժան է, բայց ես անբախտութիւնը ունեցայ ծնելու երկար ժամանակներէ ի վեր գփբախտ այս երկրին մէջ: Բայց այստեղ ծնած ըլլալու իրողութիւնն իսկ ազդեցութիւն մը պիտի ունենայ իմ ամբողջ կեանքիս վրայ: Ահաւասիկ ուր է կարեւորութիւնը քու ծննդավայրիդ:

Ասիկա կը նշանակէ, որ ես դատապարտուած էի վստիանալու կեանքիս ամբողջ մնացեալ շրջանին: Հինգ տարեկանէս ուսդին՝ ես վախի մէջ կ'ապրեիմ — երեսնական թուականներու սովը, ձերբակալութիւնները, դատաւարութիւնները, 1937-1939 տարիներու աքսորները, ապա՝ Գերմանիոյ դէմ պատերազմը, յետպատերազմեան սարսափները, եւ վախերը, հաստատուն, մնայուն վախերը...

Այդ վախը առանձնապէս ինծի վերապահուած չէր, ատիկա ճակատադիրն է ամէն անոնց, որոնք ծնած էին Ատուածոյ կողմէ շիմ գիտեր ո՛ր մեղքին համար անիծուած ոռուսական հողին վրայ:

ԱՆՎՐԱՆԱՐԱՄ

Ինչ որ կը դրեմ շատ հաւանական է որ մօտաւորապէս ըլլայ այն՝ դոր կը գրեն Սովետական Միութեան արեւմտեան թշնամիները: Այս գրուածքի պարտութիւնը անոնց ըսածներուն տեղեակ ըլլալու արդիւնքն է: Այդ կարգի տեղեկութիւնները դադունի կը պահուին Ռուսիոյ մէջ նոյնիսկ գերողներն, նոյնիսկ անոնցմէ, որոնք բացարձակ վստահութիւն կը վայելին: Եթէ համայնավար կուսակցութեան կարեւոր անձնաւորութիւններէն մէկը տեսնէր այս նոթերը՝ պիտի ըսէր. «Ուրիշ բան չէ ըրած, եթէ ոչ կրկնել այլեւս մաշած այդ ինն զբաղաբառաբանները»:

Տե՛ր ՌԻԹԻՒՆ

Յոզնած եմ ապրելու այս շարունակական սպասումին մէջ: Գիտեմ՝ որ ամէն վայրկեան կրնան գալ, խուզարկել սենեակս եւ գտնել բոլոր այս թուղթերը: Կը գրեմ՝ որովհետեւ չեմ կրնար զազրիլ գրելէ: Կը գրեմ եւ ապա կը պահեմ դրածս անուշեղէնի ամանի մը մէջ, յետոյ՝ հեծանիւով մը կը տանիմ ամանը դէպի նասնուա Փոլոնիա անտառը, ուր եւ կը թաղեմ զայն, վախնալով նոյն ատեն, որ մէկը վրայ չհասնի ու յանկարծ զուրս հանէ թաղածս:

Առաջ, կը փճացնէի ինչ որ գրէի: Օրինակ, ինչ որ գրած էի Ստալինի դէմ՝ յուսահատութեան մոլեգին պահու մը փճացուեցաւ թուղթի մինչեւ յետին կտորը: Այդ գրութիւններուն մէջ, ի միջի այլոց, կար նաեւ հրաշայի պարսուլազիբ մը:

Կ'ուզեմ ապրիլ այնպիսի ձեւով, որ կարողանամ միշտ գրել եւ միշտ ունենալ գրութիւններս ձեռքի տակ եւ ոչ թէ պարտաւորուած ըլլալ երթալ եւ թաղել զանոնք անտառին մէջ:

ԻՆՁ ՈՐ ԸՐԻՆ ՎԵՊԵՐՈՒՄ

Առաջին վէպս՝ «Առասպելի մը շարունակութիւնը» միաձայնութեամբ մերժուեցաւ «Նունուք» հանդէսի խմբագիրներուն կողմէ: Բայց նրբանցքներուն մէջ բունեցին ձեռքս եւ ըսին. «Հրաշալի աշխատութիւն է, բայց դուն գիտես, թէ այս...»:

Վէպին մէջ կարգ մը փոփոխութիւններ մտցնելու համար է գործ դրուած անպտուղ ճիգերէն ետք, - սովետական կեանքը տխուր գոյններով ներկայացուցած ըլլալու թերութեամբ մը կը մեղադրէին զայն - դարձայ համարեա՛ թէ ջղապար մարդ մը, խրելով յուսահատութեան կատարեալ վիճակի մը մէջ: Հեռացայ Մոսկուայէն: Մօրս հետ Գիւն կը գտնուէի, երբ իմացայ, որ «Առասպելի մը շարունակութիւնը» հրատարակուած էր «Նունուք»-ի մէջ, անդամահատուած կերպարանքի մը ենթարկուելէ ետք: Մկրատած էին անկէ աւելի քան քստասուն հատուածներ: Որոշ քանակութեամբ նախադասութիւններու իմաստը շրջած էին բոլորովին: Գլխաւոր դաղափարը կորսուած էր: Այդ օրը շատ սեւ օր մը եղաւ ինծի համար:

Նոքր իմացայ, որ խմբագիրը՝ Վալանթին Քաթայեւ, որ արեւմտեան աշխարհին ծանօթ է իր առաջին վէպերով եւ «Շրջանակին ծիրք» ահուն փիլիսոփայ, ըսած էր. «Ափսոս, սնկալիս ամէն բանէ, լաւ վէպ մըն է: Ուզեմ թէ չուզեմ՝ պիտի հրատարակեմք զայն: Շատ-շատ կրնան հանդէսը փակել»:

Այս էր Քաթայեւի կարծիքը, հակառակ ատոր, սակայն, կատարած էր մօտաւորապէս յիսուն մկրատումներ եւ փոփոխութիւններ, առանց այդ մասին հեղինակին կարծիքը հարցնելու: Այդ պայմաններուն տակ էր ահաւանդիկ, որ հրատարակեցին վէպս:

Այդ օրերուն պատահեցաւ հրաշք մը: Վէպս անպասելիօրէն գրական «Կամավառիկայա ֆրաւտա»-ի մարդոց ուշադրութիւնը, որոնց գլուխը կանգնած էր այդ շրջանին կուսակցութեան առաջին քարտուղար Ռոմուշ-յեւի փեսան՝ Անուպէյ: Այս հանդամանքը վճռական եղաւ ապագային համար, որովհետեւ, միւս թերթերը կը հետեւէին Անուպէյին եւ, բնական է, «Նունուք» հանդէսը չփակուեցաւ:

Նոյն հանդէսին ներկայացուցի նաեւ երկրորդ վէպս, որ կը կրէր «Իր տան մէջ» խորագիրը: Ռմբագիրներուն վճիռը եղաւ. «Գրուած է տաղանդով, բայց տվետական կեանքը նկարագրուած է հոն շատ բացասական գոյններով: Գործը պէտք է ունի գուարթաւթեան ու գարդարանքի»:

Վերցուցի ձեռագիրը եւ ներկայացայ «Նովի միր»-ին: Ռմբագիրը, Տվարդովսկի, ըսաւ թէ նոյն գիշերը կարդացած է ձեռագիրս, առանց կարենալ բաժնուելու անկէ եւ որ անիկա մեծ հաճոյք պատճառած է իրեն: Աւելին. «Գրական այդ կտորը այնքան փայլուն է, որքան Սոլժենիցինի «Օր մը Իվան Տրեքոպիլի կեանքին» անուն գործը, բայց կարելի չէ հրատարակել զայն: Հարկ է սպասել»:

Առի ձեռագիրս եւ ներկայացուցի այս անգամ «Մալաուայա Նվարդիտա»-ին, որ «Նունուք»-ի ճիշդ հակառակ ուղղութիւնը ունէր: Միայն մէկ յոյս ունէի. երկու հանդէսները չուն ու կատու էին իրարու հետ: Եթէ անոնցմէ մին մերժէ ձեռագիր մը, կ'երթաք միւսին, առանց մտռելու:



ըսելու անշուշտ, որ իր մրցակիցը մերժած է զայն: Ահաւասիկ ճիշդ այդպէս բրի հա: Վերադարձուցին ձեռագիրս ձեռքի շերտ սեղմումով մը, միաժամանակ շնորհակալութիւն յայտնելով անոր ընծայած հաճոյքին համար: «Յայտնապէս հանճարեզ գրուածք է, քայց, անշուշտ, չեմք կրնար հրատարակել: կը հասկնամ հարկաւ»:

Չորրորդ ու վերջին անգամ դացի «Օքիապլու» թերթին: Անիկա եւս հակառակ էր «Նովի Միր»-ին: Թերթին տնօրէնութիւնը վարող Քոչեթովին բացատրեցի, թէ ուր, ինչպէս եւ ինչու մերժուած էի: Ձեռագիրը կարգալու համար բաւական ժամանակի պէտք ունեցաւ Քոչեթով եւ ի վերջոյ ինչորեց, որ հանդիպեմ իրեն: - «Ձեմ հասկնար, - ըսաւ ան, - այս անազրիմ ո՞ր մասին մէջ Տվարդովսկին մնայլ գոյնը կրցած է տեսնել եւ կամ ի՞նչ տեսակ գորդարանք է «Եռնոսթ»-ի պահանջածը: Ես ինքն շատ ասելի ուժգին քննադատութիւններ ստորագրեցի եւ վախ չունիմ: Բայց մեմք էաւ գործզ պիտի չհրատարակենք: Շատ գէշ գրուած է»:

Այս բոլորէն ետք, ձեռագիրը տեղաւորեցի դարակի մը մէջ: Տարի մը անց, «Նովի Միր»-ի կողմէ մէկը հետամայնեց: «Եթէ համաձայն ես կարգ մը մկրատումներու, մեմք յանձն կ'ստաննք հրատարակել վէպդ: Աւելի լաւ է քան մը տպուած ունենալ, քան մնալ այդպէս»:

Բայց սարսփեցայ, տեսնելով՝ թէ ինչ կ'ուզէին մկրատել անոնք: Միշտ յարգանք ունեցած եմ «Նովի Միր»-ի հանդէպ եւ ճիշդ ստոր համար թոյլատրեցի որ հրատարակեն գործս: Այդ վայրկեանէն հետամայնային հաղորդագրութիւնները սկսան իրենց եւ մեր տան միջեւ, որ թիւլա էր: Կրթութեմ երկու օրը անգամ մը կ'իմացնէին ինծի: «Մեմք պարտաւոր եմք մրկրատել այնինչ հատուածը կամ այնինչ պարբերութիւնը»: Առաջ կը բողոքէին, յետոյ սկսայ մրմուլ: «Ըրէք ինչ որ կ'ուզէք, միայն քէ զնեցե՛ք անուս»: Մէջն անտարբերութիւն մը սկսած էր եւ ինչքան ընդարձայած էի: Այս վէպը մեծ ճիւղ արժած էր ինծի եւ առանձին սիրով մը կատուած էի անոր: Բայց ահաւասիկ, որ հրատարակուելէն առաջ կը ստիպուէի հրատարակ անկէ: Զանացին համոզել զիս, որ անուս շնջեմ վրայէն: Միակ եղրակացութեան, որուն յանգեցայ - մի ինչաք - հետեւեալն էր՝

Կողքին վրայ պիտի չգրուէր Անաթոլի Կուզնեցով, այլ պիտի գրուէր Ա. Կուզնեցով:

Այդ հանգամանքին մէջ կայ սովկայն բաւականին ցնորական միութարութիւն մը:

Ժամանակի ընթացքին, դիրքը ծախուեցաւ հազարաւոր օրինակներով եւ հոշակուեցաւ սովետական կեանքին ու գիւղին մասին գրուած լատազոյն գործերէն մէկը: Պատկուեցաւ նաեւ երբոտտարդ Կոմունիստներու Կազմակերպութեան Կեդրոնական Կոմիտէին կողմէ: Բայց երթալ ու մըրցանակս առնելու ձանձրոյթը թոյլ չտուէ ինքզինքիս:

Փոխարէնը՝ դրեցի Լրբորդ վէպս՝ «Պապի Եար»-ը: Նախապէս ոչ ոքի ցոյց չտուի ոչս գործին ամբողջական ձեռագիրը, եւ ստիկա անոր համար, որ «Պապի Եար»-ը շատ պարզորոշ ձեւով մը կը հասկնելը, որ հիթլէրական Փաշիզմին եւ սովետական Փաշիզմին միջեւ տարբերութիւն չկայ: Այդ մէկը ցոյց տալու առանձին ճիւղ մը չէի ըրած, սակայն ի զարմանս նաեւ ինծի՝ ա՛յդ գուրս եկաւ:



Քննութեան յանձնեցի ոչ յարձակողական շեշտով գրուած բաժին մը անկէ, ուր, կը թուէր, գրաքննութիւնը նուազագոյն առարկութիւն մը անգամ պիտի չպանէր ընելու:

Ինչ պատմութիւն: «Եււնաք»-ի մէջ ամէնքը համաձայն գտնուեցան, թէ մեծ գիրք մըն էր իրենց մատուցուածը: Ընդհանրեցին միայն քանի մը մկրատումներ ընել: Վերստին ու արագօրէն դատայ նախկին շրջանութիւնս եւ պատասխանեցի, թէ պիտի չարտօնեմ փոփոխութեան ենթարկել գիրքս եւ խնդրեցի, որ վերադարձնեն ձեռագիրը:

- Ոչ, - պատասխանեց տնօրէնը՝ Պորիս Փոլըվոյ, - պիտի չվերադարձնեմ ձեռագիրը: Զայն պիտի երատարակեմք մկրատումներով:

Ի վերջոյ կոնի բռնուեցանք եւ սկսանք բռունցքով հարուածել զիրար: Կոնի ընթացքին շարունակ կը պոռայի.

- Տուէք իմ ձեռագիրս, ձեռագիրը իմս է:

Երբ տեսայ որ կը մերժեն, յափշտակեցի զայն ու վազեցի գէպի Վորոպուկի փողոցը: Անիծեցի այն օրը, երբ սկսած էի գրել: Կատաղութեանէս բղիկ-բղիկ ըրի ձեռագիրը եւ նետեցի փողոցի թուղթէ բոլոր աղբափաններուն մէջ: Ետքը միայն հաստատեցի, որ բզկտած էի կրկնօրինակը, առաջինը ձգելով իրենց մօտ:

Աւելի ուշ ստացայ փորձերը այն բոլոր փոփոխութիւններով, որոնք կատարուած էին ձեռագրին մէջ: Չհամարուեցայ, թէ եղածը վերջին ձեւն էր: Կը զգայի, թէ յաջորդաբար դեռ աւելի զարհուրելի մկրատումներ պիտի կատարուէին անոր մէջ: Բայց ոչինչ կարելի էր ընել: Անգամ մը որ մեքենան սկսած է աշխատիլ, կարելի չէ այլեւս կեցնել զայն: Հակառակ պարագային պէտք պիտի ըլլար վճարել փոխարժէքը, մինչ ես, այդ շրջանին, միշտեւ կողորդս պարտքի մէջ խրուած էի:

Գիրքը լոյս տեսաւ ծանօթագրութեամբ մը. «Մակաբիսայիս տարբերակ» յիշատակութեամբ, ինչ որ բոլորովին իմաստ չունէր: Դարձեալ կատարեցայ:

Տարիներ յետոյ՝ տարօրինակ էր լսել ձեռնհաս անձերու խոստովանութիւնը, բայց որովհետեւ եթէ «Պապի Սար»-ը ուշանար նոյնիսկ մէկ ամիսով, երբեք ու որեւէ ձեւով լոյս պիտի չտեսնէր: Կացութիւնը փոխուած էր: Այնպէս թուեցաւ, որ ես մեծ բախտ ունէի եւ պարտաւոր էի շնորհակալութիւն յայտնել «Եււնաք»-ին: Այս ամէնքը ճիշդ էր: 1967-ին վէպս չվերհրատարակուեցաւ: Վերհրատարակութեան խնդրանքը մերժուած էր:

Միջոց չկայ այս պատը խորհակելու:

Կը հետեւի, որ իւրաքանչիւր գործ ունի երեք տարբերակ: Առաջինը բնագիրն է: Երկրորդը մկրատուած ու բարեօրոշուած օրինակն է, որ ներկայացուած է ֆոլիոյնին այն յոյսով, որ այս ձեւին տակ պիտի ընդունուի տպագրութիւնը, բայց չընդունուի եւ անհրաժեշտ կ'ըլլայ ստեղծել երրորդ տարբերակ մը, տժգոյն, տափակ, սովորական եւ այդ ամէնքէն ետք՝ վատ, այն աստիճան, որ երբ կարգաք նոզկանք զգաք անկէ:

Ինչու... Տեղեկութեան ամբողջական բացակայութիւն: Անտեղեակութիւն՝ Արեւմուտքի մէջ կատարուած գործերուն մասին: Լսած եմ անունները Փրանսուազ Սականի, Բամբի, Բաֆթայի, և այլն: Լսած եմ անունները, բայց բնաւ կարգացած չեմ գիտնէր: Տեղ մը, ուրիշ մարդիկ բաներ մը կը գտնեն, կը կատարեն նոր ձեւերու փնտառուքը, գրելու նոր եղանակներ կ'որոնեն: Կը յառաջանան, կը վիճին, մինչ ես, պատէ պատ կը զարնելով, առանց կարենալու ճամբայ մը հարթել:

ՎՇՏԻ ԱՂԱՂԱԿ ՍՐԸ

7 Նոյեմբեր 1967: Սովետական պետության հիմնադրութեան յիսուներորդ տարեդարձը: Եռուարած եմ: Կը նստիմ, կը նայիմ, բայց շարունակ հոյն բանին մասին կը մտածեմ: Կարծես իրապէս բանտի մը մէջ կը պոստիմ: Ի վիճակի չեմ գրելու: Երբեք յոյս չունիմ հրատարակուած տեսնելու այն՝ ինչ որ կը գրեմ ներկայիս: Կեանքիս մինչեւ վերջը դատապարտուած եմ գրելու եւ հրատարակելու արտօնուած բաները միայն: Գրականութեան պղծումը, իբ կարգին, պոռնկութիւն չէ՞ արդեօք: Գրականութեան պղծումը աւելի գէշ է, քան հին այդ «գործը»: Դրամի համար ընծայել մարմինդ ժամ մը կամ աւելի, դեռ ոչինչ: Բայց գրականութեան պարզային՝ մարդիկ կը ստիպեն քեզ պոռնկացնել հողիդ, ամբողջ էութիւնդ, ճարտարութիւնդ, տաղանդդ:

Սովետական դրութեան ամբողջական յաղթանակ է ստիկա: Յիսուներորդ տարեդարձը մղձաւանջին: Լուսաւորում փողոցներուն մէջ: Առտըւընէ մինչեւ իրիկուն պաշտօնական հաւաքոյթներ՝ մարդոց աչքին վարազոյր զնոց ճառերով ու ինքնազօլութեամբ: Ձինուորական տողանցքներ՝ յոխորտանքի համար: Ժողովրդեան կարգապահ տօնախմբութիւն: Մահացու գործիքներով զինուորական տողանցք՝ մարդկային սեռին աչքը կոտրելու համար:

Մա՛րդ, զնա՛ եւ շրջապայէ այս ամէնուն մէջ: Բայց եթէ կ'ուզես ինքզինքդ ազատել, պիտի չյաջողես միայն լուռ մնալով: Դուն ալ պիտի պոռաս նոյն բանը, մինչեւ որ ձայնդ մարի: Պոռա՛ «հուռա՛»: Մափահարէ՛: Այլապէս, անմիջապէս պիտի տեսնեն, որ քու վարմունքը բնականն չէ եւ պիտի փութան հարցնել պատճառը:

Ձտթաքովիչի տասներորդ հանգրուանին երրորդ շարժումին մէջ, կը լսէք փողի մը ձայնը: Ի պատասխան, կ'իմանաք հովուն աղձուկը, որ կը հասնի ձեզի գիշերային անծայրածիր տարածութիւններէ: Միմիայն հովուն աղձուկը, եւ փողը կրկին կը հնչէ: Կրկին ու կրկին, մինչեւ վախճանական կէտը — օգնութի՛ւն: Նոյն կողմ կ'ընեմ մարդոց, եթէ աշխարհի որեւէ մէկ անկիւնը դեռ մտրդ մնացած է:

Բ.

**ԻՆՉՊԷՍՏԵՒԻ ՆՆՉՈՒԼՈՒՅՍ ՏՈՒԻ**  
**ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԵՆ**

Ձեզի պատմելիքս սոսկալի պատմութիւն մըն է: Երբեմն, ինծի կը թուի, թէ երբեք պատահած չէ անիկա եւ եղածը պարզապէս կոշտար մըն է: Ա՛խ, եթէ միայն այդ ըլլար...

Ռուսիոյ մէջ սովետական սխտեմը ամուր կը մնայ շնորհիւ բացառաբար ճշլումի զօրաւոր կարգուսարգի մը, շնորհիւ այն ուժին ժանաւանդ, որ, շրջաններու համաձայն՝ կոչուեցաւ Ձեկա, Կէփէու, Էնքովէտա, ուրիշ խօսքով՝ զապտնի ոստիկանութիւն կամ սովետական Կեթափա:

Ամէն ոք գիտէ, որ զապտնի ոստիկանութեան կողմէ սպաննուած մարդոց թիւը միլիոններ կը հաշուէ, բայց եթէ ուզենք հաշուել անոր հարեկած կամ ձեռագեղձած անձերը, այդ պարագային հարկ պիտի ըլլայ

նկատի ունենալ Միութեան ողջ բնակչութիւնը: Աւելայի արնածարաւ թա-  
թերը քանակէրի ճիւղաւորումներու պէս կը տարածուին Թուսիոյ մէջ՝ կեան-  
քի բոլոր մարդերուն վրայ եւ յատկապէս զբահան աշխարհին մէջ:

Թուսիոյ մէջ ոչ իսկ մէկ գրող կը ճանչնամ, որ այսպէս թէ այնպէս  
դործ ունեցած չըլլայ Աւելայի հետ:



1951 Հոկտեմբերին, առաջին անգամ ըլլալով կը պատրաստուէի մեկ-  
նիլ արտասահման, Ծրանսա: Պիտի ըլլայի զրոզներու պատուիրակութեան  
մը մէջ: Հոգ էր, որ սպրեցայ դարձուրելի փորձառութիւն մը, որովհե-  
տեւ, Մովեստ Թուսիոյ մէջ արտասահման ճամբորդելու արտօնուած են ա-  
նոնք միայն, որոնք ունին անբարտ թղթածրար մը, զննուած են մանրա-  
մասնօրէն, որեւէ տալտուկ չեն պատճառած իրենց աշխատանքներուն կամ  
քաղաքական գործունէութեան մէջ, հոգեբայժի մը չեն դացած եւ բնաւ  
հանուած չե՞ զատարանի մը առջեւ, եւայլն:

Հարկ է աւելցնել, որ անցողիք ունենալու համար տեղի ունեցող ձե-  
ւակերպութիւնները միմեան կը տեսնեն: Քեզմէ կը պահանջեն զէշ մը յանձ-  
նորարութիւններ, հարցարաններ, զաղտնի ստորադրութիւններ եւ վար-  
քուբարքիք մասին մտերիմ թելադրանքներ: Երբ ապազայ ճամբորդը տայ  
վերջնացնէ այս զննութիւնները՝ այնքան կոտորած կ'ըլլայ աչքը եւ այն  
սաստիճան ջղային կը դառնայ, որ ճամբորդութիւնը կը սկսի իրեն թուել  
կրօնական ծխակատարութեան պէս բան մը:

Ես արդէն ուարտած էի այդ սարսափելի ձեւակերպութիւնները եւ  
կը պատրաստէի պայուսակներս, երբ հնչեց հեռաձայնը: Կ'սուեցաւ, որ  
գաղտնի ոստիկանութեան մարդիկ պիտի հանդիպին ինծի: Քիչ ետք, եր-  
կու մարդեր ներկայացան եւ ցոյց տուին իրենց ինքնութեան թուղթերը:  
Քանի մը բառախաղ ըրին, քիչ մը զբաղանութեան մասին խօսեցան եւ ա-  
պա անցան իրենց այցելութեան բուն պատճառին:

— Ի հարկէ, զիտէք մեր այցելութեան նպատակը: Մեր ընկերներէն  
մէկը, ինչպէս սովորութիւն է, պիտի ընկերանայ ձեր պատուիրակութեան:  
Անոր գոռուք պիտի ըլլայ ամէն ինչ տնձածր ընել, այնպէս որ, դուք պի-  
տի օգնէք իրեն: Պարզապէս արթուն աչքով պիտի հսկէք, որ մէկը չհեռա-  
նայ պատուիրակութենէն եւ չփորձէ արտասահման մնալ: Պէտք է նսու  
տեսնել, թէ ո՞վ՝ որո՞ւ հետ կը խօսի: Վերջապէս պիտի նայէք, թէ ինչ վե-  
րաբերում ցոյց կու տան մերինները:

Մնացի լուռ, խորասկուած: Գաղտնի ոստիկանութեան մարդերը  
սկսան բացատրել, թէ ասիկա ամէնէն ընթացիկ ու բնականոն ձեւերէն  
մէկն է: Զրոսաշրջիկութեան ոչ մէկ խումբ եւ ոչ մէկ պատուիրակութիւն  
չի կրնար ճամբորդել առանց հետը ունենալու իր «ընկերը», և «ընկերը»՝ իր  
կամաւոր օշնականները: Արեւմտեան աշխարհը սատանայօրէն չար էր եւ  
մենք պարտաւոր էինք արթուն ըլլալ: Կամ սէտք է ընդունէի կապ հաս-  
տատել «ընկերոջ» հետ, կամ ճամբորդութիւնս չեղեալ կը համարուէր եւ  
ես այլեւս երբեք չէի կրնար արտասահման ճամբորդել: «Ընկերը» պիտի  
ըլլար բարեմոյն մարդ մը: Կապ պիտի հաստատէր հետս, ըսելով՝ «Մի-  
խայիլ Միխայիլիւի կողմէ քոչայն»:

Մեր պատուիրակութիւնը կը բաղկանար մէկուկէս տասնեակ գրող-  
ներէ եւ մուկովեան հրատարակիչներէ: Փամադրուեցանք Լենինկրատ,

«Լատվիա» նաև արևելու համար: Երբ իրարու միացանք՝ խոր ուշադրու-  
թեամբ զննեցի իւրարանշիւք պատուիրակի դէմք, իւրովի հարցնելով. «Մ՞ր  
մէկն է արդեօք»: Պատուիրակութեան պատասխանատուն ինտուրիստէն  
կին մըն էր, որ անդադար կը հաշուէր մեզ, կարծես հաւու ճուտեր ըլլա-  
յինք: Ա՞ն էր արդեօք «ընկերը»:

Բայց երբ նաւ բարձրացանք, հրատարակիչներէն մէկը մտեցաւ ին-  
ծի եւ շար ժպիտով մը ըսաւ. «Միտայիլ Միտայիլովիչի կողմէ: յոգնէն»:

Թանձրամիտ ապուշ մըն էր, որ շնականօրէն եւ բացայայտօրէն կը  
լրտեսէր բոլորը, եւ, ի՞նք եւս շարունակ կը համբէր պատուիրակութեան  
անդամները, նոյն տեսն աղահօրէն ունկնդրելով բոլոր խօսակցութիւնները:  
Նկատեցի նաեւ, որ վրոզներէն ոմանք իրենք եւս լրտեսող ակնարկներ կը  
նետեն հոս-հոն, մէկը մանաւանդ, ոմն Սիթէն, որ ներկայիս կը զբաւէ սո-  
վետական շարժակարային արուեստին կարեւոր դիրքերէն մէկը: Պատուի-  
րակութեան 15 անդամներէն մէկը ինտուրիստէն էր, միւսը՝ «ընկեր» եւ  
առնուազն հինգը այս վերջինին կամաւոր օժանդակները: Աւելի ուշ, հաս-  
կըցայ, որ եղածը ընթացիկ դրութիւն մըն է եւ եթէ հինգ անձեր արտա-  
սահման ճամբորդեն, առնուազն երկուքը միւս երեքին լրտեսներն են, իսկ  
եթէ սոսկական անձ մը ճամբորդէ, այդ անձը պարտաւոր է տեղեկագիր  
պատրաստել ինքնիր մասին:

Իմ տեղեկագիրս բարձրաստիճան անձնաւորութեան մը քիմքին հա-  
ճոյ չթուեցաւ: Աւթ տարիներ անցան, որպէսզի դարձեալ արտօնուէր ին-  
ծի ճամբորդել դէպի արտասահման, այս անգամ դէպի Անգլիա: Հիմա կ'ի-  
մանաք, թէ ի՞նչ դին վճարեցի տառը:

Այդ ութ տարիներու ընթացքին մնացի թիւում եւ «ընկերը» շարունակ  
եկաւ զիս տեսնելու: Երբ հարցուցի, թէ այս վերաբերումը ուրիշ զրոզնե-  
րու հանդէ՞պ ալ նոյն ձեւով կը կիրարկուի, պատասխանեց որ ատկա բա-  
ցարձակօրէն ընթացիկ երեւոյթ մըն է եւ թէ...

«Ընկերը» ազնուօրէն եւ քաղաքավարօրէն տեղեկութիւններ ուղեց  
կեանքիս, աշխատանքներուս, բարեկամներուս մասին եւ ուղեց իմանալ, թէ  
ի՞նչ տեսակ անձեր էին Եւտուշենկոն, Աքշիանովը, Կլատիլինը: Նախ համակ-  
բայլը բաներ ըսի եւ դասեցի զանոնք բարձունքներու վրայ: Իայց ան ա-  
ռարկեց, թէ Եւտուշենկոն սկսած է սխալներ գործել եւ ես հարկ էր աւելի  
ուշադիր ըլլայի: Պարտականութիւն տուաւ ինծի զբզուել Եւտուշենկոն,  
ստիպել զինք, որ խօսի եւ ապա տեղեկագրել ինչ որ իրապէս կ'անցնի կը  
զառնայ անոր մէջ: «Ընկերը» սկսաւ հետզհետէ աւելի բրտօրէն խօսիլ հետս  
եւ դիմել սպանալիքներու:

Աւելին չկրցայ հանդուրժել: Պոռացի, թէ ատկա վարժունքի պատ-  
ւաւոր եղանակ մը չէ եւ խնդրեցի, որ հանդիսս ձգէ զիս: Ըսի նոյնպէս,  
թէ շուրջս ոչ մէկ զէչ բան կը տեսնէի, ոչ մէկ դաւադրութիւն, հակասո-  
վետական ոչ մէկ շարժում, մտածում: Այսուհանդերձ, եթէ որեւէ բան  
կուսէի՝ պիտի հեռանայնէի իրեն: Ատոր վրայ անհետացաւ:

Ձէի կրնար հաւատալ բախտիս: Ուրեմն այս եղանակով պէտք է խօ-  
սիլ ասոնց հետ: Մնաց որ, ի՞նչ կրնային ընել ինծի: Արդէն ճանչցուած  
զրոզ մըն էի, գիրքերս կը հրատարակուէին 40 տարբեր երկիրներու մէջ,  
որով՝ կրնայի ինքզինքիս շնորհել նման անձերու հետ զօրծ շունենալու  
պերճանքը:

Բայց որքա՞ն կը սխալէի:



1963-ին ի վեր, Հետապնդուեցայ Հետեւողականօրէն: Ո՛չ անպայման անոր համար, որ կրնայի հակասովետ տարր մը ըլլալ կամ դաւադրութիւն մը կազմակերպելու մտադրութիւն ունէի: Ո՛չ: Ես մէկ անդամն էի կոմունիստական կուսակցութեան, ճանչցուած զրօշ մը եւ կը բաղձայի մէկ բան-շարունակել զրիւ: Բայց Հետապնդուեցայ, որովհետեւ մերժած էի զօրծակ-ցիւ Զեկային:



Օր մը, օտարական մը, Հանրակառքի կայարանին մէջ գետեղուած քայլին մը Հեռաձայնեց ինձի եւ մէկ առ մէկ թուեց ի՛նչ որ գրած էի մօրս յղած նամակներու մէջ եւ տուաւ մօտս զտեղուող արտասահմանեան հան-դէսներուն անունները:

- Ի՛նչ կ'ընեն դուն, - շարունակեց անձանօթը, - չե՛ս դիտեր ու-րեմն, որ Քու նամակներդ Հակոբութեան տակ կը գտնուին, սր վերի եւ վարի բոլոր դրացիներդ կը լլտեսեն թեզ եւ Հեռաձայնային խօսակցութիւն-ներդ կ'արձանագրուին:

Առանց անունը տալու՝ զոցեց Հեռաձայնը: Ենթահակալութիւն: Բայց չկրցայ ըմբռնել իր սարսափին տուն տուող պատճառը:

Փորձեցէք ուրեմն բնակիլ այս տեսակ բնակարանի մը մէջ, պիտնա-լով որ ձեր արտասանած բառերէն իւրաքանչիւրը կ'ունկնդրուի եւ կ'ար-ձանագրուի:



Բազմաթիւ անգամներ, առանց անչուշտ մեծ յոյսեր սնուցանելու, դիմեցի ազդեցիկ անձնաւորութեանց, իմացնելու համար արտասահման ճամբորդելու իմ բաղձանքներս: Կ'ուզէի աշխարհը տեսնել: Անոնք միշտ պատրաստ էին բան մը խոստանալու, բայց այդքան: Ուրիշներ ճամբոր-դեցին, բայց ես՝ ոչ:

Այն ատեն էր որ անպատեհի կերպով «Յրախաւիան Վիպցեայ հրա-տարակիչներու» տունը ամիս մը փարիզ անցընելու հրաւիրեց զիս, իմ «Պա-պի եար» վէպիս հեղինակի իրաւունքին փոխարէն: Մտածեցի, որ իշխա-նութիւնները հասկցած էին վերջապէս, որ ես թշնամի մը չէի եւ ձեռնար-կեցի վիզս ստանալու գործողութիւններուն: Երբ ձեւակերպութիւնները վերջացան, իմացայ որ Գրողներու Միութիւնը դրամ շուենէր իմ ճամբոր-դութեանս ծախքերը հոգայու համար: Բացատրեցի իրենց, որ Հաւանաբար կը սխալէին, որովհետեւ պիտի մեկնէի անձնական ծախսերովս: Այն ատեն փոփոսցին ականջիս, որ իմ ճամբորդութեանս արդեւք Հանդիսացած էր Սափրանով՝ թիւլայի փրփականտի քարտուղարը:

«Յիկարօ գրական»-ի միջոցով անցեալ շաբաթ կատարած յայտա-բարութիւններու մէջ՝ բացատրեցի, թէ ինչպէս ձեռագրեցի զբուրեցի-ններս: Աւելցնեմ նաեւ, որ բոլորովին ձեռագրեցի ինչ նաեւ սեփական անձն: Այլեւս չէի կրնար երբեք Հեռաձայնով խօսիլ: Գրեթէ զաղբած էի նամակ գրելէ եւ սկսած էի կասկածիլ բոլոր բարեկամներու վրայ: Իմաստ ունէ՞ր այսպիսի գոյութիւն մը:

1968-ի Օգոստոս 20-ին, ուսանկան հրատարակող ներխուժեցին Ձեխոս-  
լովաքիա: Օրեր ամբողջ ձայնասփիւռը մտիկ ըրի: Ռուսիոյ մէջ, շատ շա-  
տեր լայցին այդ օրերուն, որոնք նայելով մերադարձը կ'աղաւարտէին:

Համոզուեցայ, որ այլեւս չէի կրնար երկար ժամանակ հանդուրժել  
այս դրութիւնը: Իւրաքանչիւր օր, իւրաքանչիւր ամիս, իւրաքանչիւր տա-  
րի ուրիշ բան պիտի շընէին, եթէ ոչ աւելցնել զարհուրանքն ու վատու-  
թիւնը, որոնք կը կուտակուէին ներսս:

Բայց Ռուսիան փակ է բանտի մը պէս: Ատոր համոզուելու համար  
կարդացէք Անաթոլի Մարշէնքոյի «Ճշմարտութիւնը» անուն գիրքը: Մէկ  
բան միայն կը ցանկար Մարշէնքօ. մեկնիլ: Ձորոք զիլոմիթր ետք՝ հասան  
ու բռնեցին դիւք եւ դրին այն միւսնոյն ճամբարին մէջ, ուր կը գտնուէր  
Ծորի Տանիէլ: Մարշէնքոյի կեղբոնացման կայաններուն նուիրած այս  
նկարագրութիւնը կրնայ ձեր ժպերը փուշ-փուշ ընել:

❖

Անցեալ տարի արտասահմանէն ստացայ նոր հրատարակման, այս անգամ  
Ամերիկայէն: Տիալ փրէս Ե հազար տոմար կ'առաջարկէր ինծի՝ ճամբորդ  
դուրիւնան համար: Սկսայ, ուրեմն, մեկնումի բոլոր դործողութիւններուն  
մերձեանարկել նոյն թիւային: Գրքերէս օրինակներ ձեռքի Մաքրանովին  
եւ ջանացի երբեք չուշանայ «Ընկերներու» տուած ժամադրութիւններէս:  
Վեց ամիս պէտք եղաւ, որպէսզի թուղթերս պատրաստ ըլլային:

Բայց դարձեալ մեկնումս չեղեալ համարուեցաւ: Այս անգամ՝ այն  
բացատրութեամբ, որ Տիալ փրէս-ը գրքեր հրատարակած էր նաեւ Մոլ-  
մենիցիներէն եւ հետեւաբար թշնամի մըն էր ան: Որոշ մանրամասնութիւն-  
ներէ մեկնած՝ շատ յստակ էր, որ դարձեալ Ձեկան ընդդիմացած էր մեկ-  
նումիս:

Ընկճուած՝ մեկնեցայ Կովկաս: Պաթում, տեղւոյն կեանքն ու բար-  
քերը ուսումնասիրելու համար: Ձբօսալըճիկներուն յատկացուած ծովափի  
այս մասը սարսափելի կերպով հսկողութեան ենթակայ է: Գիշերը, շրջուն  
ոստիկաններ ծովեզերքէն դուրս կը վանտին բոլորը: Լուսարձակներ անգա-  
դար կը լուսաւորեն շրջապատը: Հոն հաստատուած ուստարները կրնան  
նոյնիսկ ծովուն վրայ ծփացող մանուկի մը դնդակը նշմարել:

Գիշեր ցերեկ կ'ըսէի ես ինծի.՝ Մեկնի՛լ, մեկնի՛լ չեկաներու այս  
հրէշային երկրէն եւ ձերբազատուիլ անոնց տիրահաշակ մարդերէն: Մեկ-  
նիլ շիւսիսային Բեւեռ, նոյնիսկ Սահարա, որե՛ւէ տեղ, միայն թէ՛ այս  
մարդերը հոն չգտնուին:

❖

Մտիկ ըրէք, թէ ինչ ըրաւ ուսու դրագէտ Անաթոլի Կուզնեցով: Ան  
ըսաւ ինքիւնքին.՝ «Երեւակայէ որ ասոնք կ'եսթափօն են: Մտածէ ուրեմն,  
թէ ամէնէն աւելի ինչ բան կ'ուզեն ունենալ: Լրատուներ: Ահաւա՛րիկ այն՝  
ինչ որ պիտի ուզէին ունենալ ամէնէն աւելի: Լա՛ւ: Պիտի հայթայթուի ի-  
րենց լուրերու ամբողջ դէպ մը»:

«Ընկերներու» իմացուցի, որ հակասովետ դաւադրութիւն մը կը  
պատրաստուի զրագէտներու կողմէ: Շատ տպաւորուեցան այս լուրէն եւ  
հաւատացին ինծի: Փաստեր պահանջեցին: Անոնցմով լեցուն էր դիւրեւս:

Տեղեկագրի մէջ, յայտնեցի որ գրողներ կը պատրաստուէին վտանգաւոր եւ դաշտնի հանդէս մը հրատարակել «Բնեռային աստղ» կամ «Կայծ» անունով: Թէեւ, անունին շուրջ կը վիճէին դեռ: Ճշդեցի այն դըլիսաւոր գրողները, որոնք պիտի հրատարակէին այդ հանդէսը՝ Եւտուշեան, Աբելիանով, Կլատիլին, Եսֆրէմով, Ռապաքով, Արքատի, Լայքին եւ ուրիշներ: Բացատրեցի նոյնպէս որ հանդանակութիւններ կ'ընէին ձեռագիրներ եւ գրած հաւաքելու համար: Առաջին թիւը տկարեմական Սախարովին ձեռագիր մը պիտի բովանդակէր: Մեծ փափաք մը ունէի աւելցնելու նաեւ, որ անոնք Կրիմիէնը օդը հանելու նպատակ մը եւս ունէին, բայց անշուշտ ասիկա չափազանցուած պիտի թուէր:

Անտիլանպէս յետոյ՝ վստահիւններու առաջին դասուն մէջ անցուցայ: Այս ամէնքէն ետքն էր, որ կրցայ հասնիլ Մեծն Իրիտանիա: Հետոս առած էի իմ տեղեկագրիս լուսանկարուած մէկ պատճէնը, տրուած ըլլալով, որ ասիկա ամէնէն զգայացունց գործն էր, որ երբեք կրնայի գրած ըլլալ:

Դարձեալ, վեց ամիս պէտք եղաւ ինծի ձեռագիրպութիւններ կատարելու համար եւ պէտք եղաւ խոստանալ նաեւ Լինինի մասին գիրք մը գրել: Մինակ մէկ պահակ նշանակուած էր ինծի համար՝ Անճաճարծէ անունով:

24 Յուլիսին, Ռուսիայէն մեկնեցայ այն նոյն օդանաւով, որ ժերալա Պրուքը կը վերադարձնէր, եւ չեմ դիտեր, մեր երկուքէն ո՛ր մէկը աւելի զգացուած էր, երբ կապոյտ երկինքը կը զննէինք:

Յաջողած էի դուրս ելլել եւ կեանքս պահել, կրնաք քննել զիս, Էթէ կ'ոգտէք, կը վստահեցնեմ ձեզ, որ տակաւին չեմ բժշկուած: Տակաւին միշտ ծովուն եղբրքը երկարած ըլլալու տպաւորութիւնը կայ մէջս, յոգնած, տնքալով եւ արիւն կորսնցնելով: Յաջողեցայ խոյս տալ իրենցմէ:

Ներկայիս, կը կարծեմ որ Էթէ կարող եւ խելացի մարդոց մեծ թիւ մը երկրէն խոյս չի տար, գլխաւոր պատճառը այն է, որ սովետական ըէժիմը այնչափ ստորին արարքներ գործել տուած է անոնց, որ այն տպաւորութիւնը պէտք է ունենան, թէ ոչ մէկ զղում կրնայ թողութիւն շնորհել իրենց: Եւք չկայ:

Ինչ պիտի ըսէիք, Էթէ իմանայիք որ Լէոն Թոլսթօն զաղտնի ոստիկանութեան զործակալ մը եղած է, որ տեղեկութիւններ կը հայթայթէր բոլոր այն օտար այցելուներուն մասին, որոնք Յասնայա Փոլիսնա կ'այցելէին: Եւ կամ Էթէ իմանայիք, որ Տոսթոյեւսկին իր լաւագոյն բարեկամները կը լրտեսէր: Նման յայտնութիւններէ ետք, պիտի կրնայիք տակաւին յարգանք ունենալ իրենց անձին հանդէպ: Անձնապէս, ես այդ տեսակ հարցումի մը պատասխան չունիմ: Ինչ որ կրնամ ըսել, այն է՝ որ ո՛չ թոլսթօ եւ ո՛չ ալ Տոսթոյեւսկի Սովետական Ռուսիոյ մէջ չեն ապրած:

Եթէ Սովետական Ռուսիոյ քաղաքացի էք, ինքնարեքարար, հարիւր առ հարիւր տոկոսով պարկէշտ անձ մը չէք կրնար ըլլալ: Վասն ըտեթիւնները կամ կէս-ճշմարտութիւնները սուտեր չե՞ն միթէ: Ես իմ մասին չեմ խօսած ձեզի: Հաւատացէ՛ք ինծի: Ուրիշ շատեր նոյնօրինակ պատմութիւններ կրնային պատմել: Աւելին չըսեմք:

Շնորհակալութիւն՝ Մեծն Իրիտանիոյ ազնիւ անհատներ:

Ա. ԱՆԱԹՈՒ

### ՓՐՈՓ. ՏԻԳՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ Զ Ր Ո Յ Ց Ը



ՓՐՈՓ. ՏԻԳՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

22 Յունիս 1900-ին, Նիւ Եորքի մշակութա-  
ւեր հայութեան մէկ շատ սեղմ մասնիկը ներկայ  
գտնուեցաւ Հեռադրբական դաստիարակչական մը,  
կազմակերպուած Հայ Մշակութային Միութեան  
Նիւ Եորքի մասնաճիւղին կողմէ: Այս երկրորդն  
էր դաստիարակչականը այն շարքին, զոր ծը-  
րագրած է նորակազմ Միութիւնը:

22 Յունիսի դաստիարակչական Փրոֆ. Տիգրան  
Յովհաննէսեան եւ նիւթն էր «Դժուարութիւն-  
Յեր, որոնց պատճառովը կը կամոյիպի գրելով  
հայոց 20-րդ դարու պատմութիւնը»: Փրոֆ.  
Յովհաննէսեան Հեղինակն է «Հայաստանը 1918-  
1920-ականները» և «Հայաստանի 1918-1920-ականները»

կախուքեան ճամբուն վրայ, 1918-ը, լախաճա-  
ւայ հատորին, անգլիերէն լեզուով գրուած, որուն  
առաջին տպագրութիւնը լոյս տեսաւ 1967-ին եւ  
մէկ տարուան ընթացքին սպառեցաւ 3000 օրբ-  
նակ, առիթ տալով երկրորդ տպագրութեան:  
Փրոֆ. Յովհաննէսեան կը պատրաստէ ուժով  
երկրորդ եւ երրորդ հատորները, արդիւնքը՝  
տասը երկար տարիներու Հետազոտութեան եւ  
տնտեսական աշխատանքին:

Հակիրճ կերպով կը փոփոխուի ներկայացնել  
Փրոֆ. Յովհաննէսեանը, որ Պէյրութի եւ մա-  
նաստիկ ձեռնարանի մէջ նոնջուած երկուստորդ  
մըն է:

Քալիֆորնիոյ մէջ աւարտելէ ետք ուսումը,  
Փրոֆ. Յովհաննէսեան անցած է Լիբանան՝ սոր-  
վելու մայրենի լեզուն: Յամիւններ ուսանած է  
ձեռնարանի մէջ եւ միաժամանակ անգլիերէն ա-  
ւանդած է լատինականներուն: Վերադարձած է  
Քալիֆորնիա եւ դասուանող է Եւր. Սի. Էլ-  
Էյ. Համալսարանին մէջ՝ իրրի պատմութեան  
փրոֆեսոր: Նոյն Համալսարանէն ստացած է իր  
բժշկական վկայականը եւ տնտեսական պատմու-  
թեան ճիւղին մէջ, վերոյիշեալ հաստիարակչական  
յայտնելով իրրի իր թէպէ: Ներկայիս նոյն հա-  
մալսարանին մէջ կը դասուանողէ հայոց պատ-  
մութիւն, տարեկան վաթսուներեակ աշակերտ-  
ներու, որոնց միայն կէսը հայեր են:

Վերջին տասը տարիներու ընթացքին, Փրոֆ.  
Յովհաննէսեան երբեք անդամ այցելած է Հա-  
յաստան, վերջինը ըլլալով 1967-ին, եւ շոն ըն-  
դունուած է Հեռադրբական եւ օգտակար  
Հանդիսանալու փոփոխով: Իր 20-րդ դարու հա-  
յոց պատմութեան Հետազոտութեան աւելու-  
թեամբ, Հայաստան այցելութեան ընթացքին,  
անցած է հասե Բագու եւ Պաթում, դարձեալ



հետազոտութիւններու նպատակաւ: Իր հետազոտութիւնները զինք առաջնորդած են Պոսթընի մէջ զանազան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան արխիւները, որոնցմէ շատ հաշուադիւտ տեղեկութիւններ քաղած է:

Փրոֆեսէօր Յովհաննէսեան շատ լաւ ճանաչուած է Քալիֆօրնիոյ մէջ, ուր իր այս հատորը մէկ տարի առաջ գրական ասույթի նիւթ դարձած է: Այս առաջին ասույթը եղաւ որ Նիւ Եորքի համալսարանի կարգաւ, լսէր ու նաեւ ծանօթանար Փրոֆ. Յովհաննէսեանին:

Վերը քնի, որ շատ հետաքրքրական էր զստուտութիւններ, ա՛յն իմաստով, որ բոլորիս շատ ծանօթ նիւթ մըն էր, սակայն իր մեկնութեան մէջ իւրաքանչեւ, Բացարձակ՝

Հայոց պատմութիւնը մենք լսած ենք, այդքան ու կարգապահ ապրումով եւ յուզումով: Փրոֆեսէօրը զայն կը ներկայացնէ ո՛չ թէ նորիւ հայ, այլ իրրեւ պատմաբան: Ան ունի անարկայական մտնցում հայկական հարցին: Գիտնական մըն է իր ճիշդին մէջ, որուն գործնական եւ հետախուզումներուն մէջ սիրտը դէր չուներ:

Իր շատ սահուն եւ հասկնալի հայերէնով՝ ան քաջատրեց ինչպէս կարողացած է ըլլալ այն անկողմնակալ հայ պատմաբանը, որ իր խօսքերով Պիլոտ է ըլլալ վերապահ, Յզգրիտ եւ գերազանց, փրոֆեսէօրը յիշեց այն բազմաթիւ դժուարութիւնները, որոնց կը հանդիպի ոճեւ պատմաբան եւ մանաւանդ հայ պատմաբանը, մեր արդի պատմութիւնը գրելու ատեն:

Փրոֆ. Յովհաննէսեան յանգած է մի քանի շատ կարեւոր համոզումներու, որոնցմէ են՝

1.- 1918 թուականէն առաջ պոլսութիւն անկէր միայն մէկ կազմակերպութիւն, որուն Եւրոպայի մէջ կար զԱզատ, Անկախ Հայաստանը եւ այլ իր Հնչակեան Մոտիւլ Դեմոկրատ կուսակցութիւնը: Մնացեալ կուսակցութիւնները, այն պայմաններուն մէջ, միայն նպատակ ունեին ինքնավարութիւն ստանալ: Աւերմի միայն 1918-ին էր որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը վերածադրեց իր կանոնադրելը, նպատակ ունենալով զԱզատ, Անկախ Հայաստանը:

2.- Հայաստանի հանրապետութեան երկու տարիներու կարճատեւ կեանքը շատ կարեւոր դեր ունի ներկայ Հայաստանի պոլսութեան մէջ: Եթէ չըլլար Սրեհանը, 1918-ական հեղափոխական արդիւնքը, ներկայիս պոլսութիւն պիտի չունենար Հայաստանը: Հոս, փրոֆեսէօրը աբսոլյութական է: Թէ Հայաստանեանի պատմաբանը ընդունած է վերաբերելու հիմարտութիւնը եւ յարգանք սկսած է ցոյց տալ այդ ժամանակուան ղեկավարութեան եւ գործին հանդէպ:

Փրոֆ. Յովհաննէսեան այս ուսումնասիրութիւններէն եւ աշխատանքէն ետք, խոր յարգանք կը տածէ զհպի հայ ժողովուրդը, որ իր զարթոյնը անցնելէն ետք, տակաւին յառաջանալու եւ ապրելու փափաք ունի, քան իր, որ ո՛չ մէկ ժողովուրդ ունեցած է: Փրոֆեսէօրը վերջացուց իր դասախօսութիւնը հետեւեալ խօսքերով:

«Եթէ այն դժոխային վայրկեաններուն, երբ հայ ժողովուրդին բարեկամները զինէ լեռն էին, 1915-ը եղաւ հայ ժողովուրդի խնայութեամբ օրը, 1918-ը եղաւ հայ ժողովուրդի յարութեամբ օրը»:

Դասախօսութիւնէն ետք ունեցանք հարց ու պատասխան, որ նույնքան հետաքրքրական էր: Ապա, ներկաները արթն ունեցան մտնէն Ծանօթանալու փրոֆեսէօրին հետ:

Փրոֆ. Յովհաննէսեան ներհաներու որսերուն մէջ ձգեց լոյսի նոր շուտանք մը, նոր յոյս մը հայապահպանման գիտնի վրայ: Մտածել որ այս երեսասարդը երբ եկաւ ձեմարան հարկու հայերէն կը խօսէր, ու արքիներ ետք ան հմուտ հայ մըն է դարձած, հմուտ պատմաբան մը ու մեզ կը փորձէ լուսարանել, խանգ ու յոյս ստեղծել մեր մէջ: Եթէ, ամերիկեան այս ձուլարաններ մէջ, Յովհաննէսեանը կարողացած է պահել իր ինքնութիւնը եւ օտարներու իսկ գոտաւանդել իր ժողովուրդի պատմութիւնը, ներկայ պայմաններու տակ երբ նորանոր հայ դարացիներ կը բացուին Միացեալ Նահանգներու մէջ, կը յուսանք որ Յովհաննէսեանները պատկանելի թիւ մը պիտի կազմեն:

ՄԵԼԻՆԻ ԳԱՐԱԳԱՆՆԵԱՆ

Նիւ յորքի, 1980

### **ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ**

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՂԷՆԻՍԻՆԻ ՍՈՒՇԱՐՁԱՆԻ  
ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ

Միրելի հայ ժողովուրդ,

Բազմադարեան գալուցիական ընթացքին, պատմութեանդ վերիվայրու մնեցում մէջ՝ անհուն տառապանքներու, արեան տարտալի բազմիմեքու, անբաժուցիական եւ սրածումներու մահատեսիլ տաճաններուն հետ սպրնցար նախ ցեղիդ ազնուական բռնիչներուն բերկրանքը եւ արի գաւակներուդ հպարտառիթ արարչներուն գինովութիւնը:

Պատմութեանդ տխուր եւ վշտալի էջերուն է՛ն սեւաօրը, վերջերուդ ամէնէն մանացուն ստացար 1915-ին, երբ գազանարարոյ թշնամիդ՝ քարքը, ոճրամիտ յղացումով մը քեզ դուրս շարտեց դարաւոր հայրենիքէդ եւ գազանային ախորժակներով, մալուկային տարեգրութեանց մէջ դեռ իր նախընթացը չունեցող ցեղասպանութեանը մը, համբանքիդ կէտը՝ մէկ ու կէս միլիոն, անյագորէն լափելէ ետք, մնացեալը յանձնեց անպատենբուն խանձող աւազներուն եւ օտարութեան այլասերող ու անբարոյացնող գոհիներուն:

Արիւնահամ վերքդ անբուժելի պիտի դառնար, արժանապատուութիւնդ յաւէտ խոցուած պիտի ըլլար, ազգային նկարագիրդ աննեցուկ աւանջմարան պիտի մնար եւ բարոյական կտրուկ պիտի խորտակուէր եթէ ցեղիդ նմանիները՝ իրենց շանթահարող խոյանքներով, շղատուհասէին քարք չարագործները, քեզ չվերադարձնէին արդարութիւնդ եւ չմաքրէին հակասող նուաստացումին հակասագրական արատէն:

Դիւցագուններուդ լուսապատկեր փառանքին մէջ, ցեղապարգեւ աննահներուդ աստղաեռոյն մէջ կը փայլի լուսապսակ դէմքը արիւրանց ՍՈՂՈՄՈՆԻՆ, կը շողայ անուըն հեքաստիպ ԹԵՂԷՆԻՍԻՆԻՆ, որ գերագոյն մէկ բույէին՝ Արմէնական իր արիւնին կենսանեղեղ մղումներէն զսպանակուած, Պերլինի սալայատակներուն վրայ եւ գերմանական արդարադատ դատարանին մէջ մաքրելէ ետք սրբապղծուած արժանապատուութիւնդ, գայն անարատ՝ քեզի ետ վերադարձուց:



Եւ սեա բարձրացաւ պաշտելի այդ անունին նուիրուած Յուշարձանը:

Ազգային հպարտութեանդ կոթողն է ան, որ Ֆրեզոյի հարթավայրէն, վերասլաց, կը պատգամէ ցեղիդ յաւիտեականութիւնը: Արդարադատ բազուկդ, անխորտակելի կամփի խորհրդանշող վկայարանն է ան եւ դեռ չսկսուած ու նոր պայթարներուդ նոր ներշնչարանը:

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՂԷՆԻՍԻՆ:

Փառք իր արարչին, իր Մեծագործութեան:

Փառք իր խնկելի անուան եւ յիշատակին:

Փառք նաեւ, սիրելի հայ ժողովուրդ, էսու կրախտագիտութեանդ:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՔԱԼԻՖՈՐՆԻՈՑ ԿԵՒՐՈՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

## **ՌԱԳԻՆՆԻ ՅԱԶՈՐԴ ԹԻԻԸ**

«Ռագին»-ի Ը. Տարուան վերջին երկու համարները (Նոյեմբեր-  
Դեկտեմբեր) պիտի հրատարակուին նոյն կողին սակ եւ ամբողջութեամբ  
նախընտրած պիտի ըլլան Կոմիտասի, Թումանեանի, Շանթի եւ Օտեանի  
ծննդեան 100-ամեակներուն:

Խմբագրութիւնս հիգ չէ խնայած այս բացառիկը ընելու համար  
արժանատար հրատարակութիւն մը:

Բացառիկը պիտի բովանդակէ թարմ գրութիւններ, վաւերական  
դէմքերէ առնուած վկայութիւններ, յուշեր, մանրավէպեր ու բազմաթիւ  
լուսանկարներ:

## **ՇՆՈՐՀԱԿԱՂՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ**

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ (համառօտ ակնարկ իր կեանքի եւ ստեղծագործու-  
թեան), Արսէն Աւ. Քինյ. Սիմոնեանց. Պաքոն, 1969  
ԱՐՈՒԵՍՏԻՆ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԸ ԺԸ.-ԺԹ. ԴԱՐՆԵՐՈՒՆ, Զարնի Սուբաֆեան,  
Փայիգ, 1969

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ 22 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 8 ՏՈՒԱՐ  
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@